

891.99 սփ

№ 6

Հ. Բ. Բ.

AUG 2008

Բնագրի



ՅՈՒՆԻՍ 1980

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *		
	. . . . .	«Թոստոմ»ը
Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ	. . . . .	Թոստոմ
Գ. ԹԵՄԻՋԵԱՆ	. . . . .	Նախընտրանք
»	» . . . . .	Տեղ մը լեզուին եւ շարժումին միջեւ
Գ. ԱՃԵՄԵԱՆ	. . . . .	Քանի՞ տարի, քանի՞ կեանք
Շ. ՔԷՕՐՕՂԼԵԱՆ	. . . . .	Բազմաբանակ՝ կեանքիդ դէմ...
Ն. ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ	. . . . .	Թաւալող քրքիջը
Ա. ՃԻՒՂԵԱՆ	. . . . .	Բանաստեղծ ծով...
»	» . . . . .	Կարօտ
Ն. ԳԻՄԱՔՍԵԱՆ	. . . . .	Յարպէզ
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	. . . . .	Անիծեալ հանճարներ
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	. . . . .	Մարգը սրբազորը վրձինը
Վ. ՕՇԱԿԱՆ	. . . . .	Հայաստանի երիտասարդ բանաստեղծները
Մ. ԼՈՎԻՆԵՍԿՈ	. . . . .	Գրականութիւնը եւ այլախոհութիւնը Թուրքիայում
Յ. ՊԵՐՊԷՐԵԱՆ	. . . . .	Գրական քերթերը որս՞ւ համար եւ ինչու
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	. . . . .	Ակսել Բակունցը եւ «Արկաղան մանուշակ»ը
Յ. ՔԻՒՐՔՅԵԱՆ	. . . . .	Պատկերասփի՞ւռ, քէ...
* * *	. . . . .	Պատկերասփի՞ւռ



ժողովուրդի և Ռոստոմցիների յանդամակամ մերկայութեամբ, այդ արդումը, այդ հաստոմբն ու անխորտակի կամենն է, որ կը փոխանցուի այսօր մեզի, բայց մասնաւոր ճիշտ նիւտասարդ սերունդին, իրեն սրբազամ եւ ընդմիջա կենդանի տանդն:

Դեռ մինչև երէկ, Ռոստոմը, ինչպէս ժեր յեզափոխութեան մեծ տիպարներէն շատերը մինչև այսօր, աւանդական պատմութեամբ կազմուած խորհրդանշական անձնատրութիւն մըն էր, տոհմական սրբուն մեր մամուլին մէջ ուղեբնուած գէթ, նկար, հատ ու կտոր յուշերով ու պատարագութիւններով փառատրուած մեծութիւն, որ թիւ մը միս ու ոտ կը ստացաւ: Մ. Վրացեանի զկեսնի ալիմներով շարքին երկրորդ հատորին մէջ, մինչև որ կազմուեցաւ այս հատորը, ընտանոմ, որ համարեալ լրիւ գաղափար մը կը արուի հայտնի պատմութեան վերջին հարիւրամեակին յայտնուած քաջատիկ տիպարներու շարքին զբարեւոյ այս մեծանուն անհատականութեան քաղաքիւ հրեաներուն մասին, մէկը միւսին հետաքրքրական, եռուն, խոսկիչ:

Հատորին մէջ մէկուկուսուած են արամազրեի թուր նիւթերը, որոնց մէջ նորութիւններու պիտի հանդիպի մեր յեզափոխութեան պատմութեան, յուշարթութիւններուն, տոհմին հրատարակութիւններուն ու կուսակցական մամուլին հետ ի հե հետեւած ամէնէն յաւանդուած անձ իսկ, պիտի հանդիպի Ռոստոմի անձին լրացուցիչ տարրերուն, այնքան թանկ ու յափշտակող:

Ընդամենը բաներէք տարեկան երիտասարդ մըն էր Ռոստոմ, երբ Քրիստոսոփորի եւ Չուարանի հետ հիմը դրաւ Լ. Յ. Դանիակցութեան:

Քսանդրէից տարեկան էր, երբ մասնակցեցաւ Դանիակցութեան Երազրին կազմութեան:

Քսանդրէիցին մէջ հազիւ մտած՝ Վերջանի հրատարակութիւնը կազմակերպելու գործը եւ նորայայտ կուսակցութեան զաղափարաբանի պաշտօնը յանձնուեցաւ իրեն:

Տաս տարի ետք՝ դարձաւ ազգային-կեղեցական կայուններու պաշտպանութեան ոգին:

Կանք առնեք հոս, եթ՝ ցանք հասնիլ հոս, չորրորդ հանգրուանին, եթէ կրցանք մերազատուիլ առաջա շարքին մտաբէն, առաջին երեքին կապուած ուստութեան ազդեցողիլ հասունութենէն, — կրկնելով՝ հիմնադիր անպաճ հայ իրականութեան մեծագոյն կուսակցութեան, մասնակցութեան՝ մեծագոյն կուսակցութեան Երազրին մշակման, անոր գաղափարաբանուր դառնալու քաջատիկ վարի, ու տարեք՝ ընդամենը 23-28:

Հարկ չկայ փակադեմք բանալու, մեաց որ, այդ ըր փաստերը ինքին կը բաւեն, որ այս պատմութեան, ընտանոմ հատորին կազմութեան առաջացուցած ուրախութեան խառնուի ափսոսանք մը, այս ուշացումին երկարած գառնութիւն մը եթէ կ'ուզէք, մահէն վաթսուս տարի ետք, վաթսուս տարի: Միտթարական է հարկու փողովորական այն իմաստութիւնը, որ աչը կը նախընտրէ երբեքէն, քայքայ ուշացման ցաւը դարձնալ կը անցանք ինքզինք, ցար՝ ուրիշներուն հաշտին, երբ կ'անդրադառնանք, որ սերունդներ եկան, գործած ու անցած են, առանց Ռոստոմի անձին քաղաքացիիլ տարրերուն ամբողջութեան տեղեակ ըլլալու, առանց անոր կանխահա իմաստութեան, պայծառատեմութեան, իր ժողովուրդին պէտքերը խորութեամբ գգալու բնազդին, գործելու կամքին, կազմակերպելու շնորհին, պարզութեան, մեհութեան, խոր հաւատքին ու մեծ սիրոյն ամբողջութեան հողորդ դարձած ըլլալու:

Այս կնիքով, ուշացման ցաւը յանդի կը կուտայ հայ մարդուն սրտին, կուտաց քանի մը ամիս առաջ եւս, Օլականի առիթով, ուրախութեան մը հետ դարձնալ, զԼանայապատկերի երթերորդ եւ ութերորդ հատորներուն հրատարակութեան հետ, ա՛յն ցաւազին սնոր թաղարձով նորէն, որ բողոքով մտաւորականներ եկան ու անցան, ուսուցիչներ եկան ու անցան, ընթերցող ընտրանի մը եկաւ ու անցաւ, առանց կոթողական այդ գործին ոգեղիտացած հիւթերը ներծնելու ու փոխանցելու մերձաւորներուն ու հեռաւորներուն, կրթական յարկերու սակ, մամուլի կէտէն:

զԼանայապատկերը՝ բարեք մը, մտաւորական կազմութեան մէջ գանուող ստղծ եւ ուսուցիչներու համար:

Քնտանոմը՝ բարեք մը, հանրային ասպարէզներու համար պատրաստուող երբ-տաւարգներուն:

Քնտանոմը՝ իր թուր էլիքով, իր կողմէ խմբադրուած խմբադրական, նախակային ու յուշարկան թուր բաժնիներուն մէջ, իր մասին պատմուած տղապարտութիւններուն թէ հատարուած վերաւանմաններուն խորքը, որ իրական պատմութեան ընդմէջէն դիւ առ դիւ, ցուք առ ցուք կը մարմնանայ կամ թիւ արթնութեան ու արութեան ոգին, գործող ու գործի մղող, շարժալ ու շարժուլութեան կենդանի ներշնչանք, ժուկկալ ու վա-

ՀԱՄԱՐ 1  
ՔՆՏԱՆՈՄ

7 11 2001

բողիչ, ու այդպէս՝ առայլին որէն, ածելու, մէկ երկրէն միւր, քաղաքէ քաղաք, զիւրէ զիւր, յեզուրիական հիաստուածներու կողքին թէ 10-12 տարեկան իր այնպէսներուն նետ:

Բայց այս ամէնքը կան Հատորին մէջ, աւելին կայ, դարձակցներու եւ սկանտանակրու վերջութիւններուն բարսիուն անմիջականութեամբ, ուսումնասիրողներուն մօտ, մեծ ու մեծանուն Հայուն անձնաւորութենէն ըրած ճառագայթներ իրբու, որոնցմէ մէկը՝ իր պատմութեան շրջանին Հրայ Զարգարեանի ընկարած ապագորութիւնը, կանխատեսք ու կը յանձնենք զԲագինի ընթերցողներուն վայելումին:

Վայելումին:

Մտաւորական, ոգեկրու, քաղաքական բոլոր մարզերուն մէջ յեզուրիական շունչ Հազորզած մեծ յեզուրիականին ազգային, մարզկային, թիւ է ըսել ազգային ու մարզկային, աստուածային ստորոգիւթները խառնող ու պայթեցնող էլ մը, ճնունը՝ արժանիքներու նոյն ազդեցութիւնն ըրած երկեզած յարգանքի, աշխատանք արժանիքներով լի, յորը՝ Հասարակ բնութագրումներով, առջ ու ձգողական: Նման փոքր նուաշի մը վրայ թերեւս թիւ անզամ ուշաքան շատ բան ըսուած է մեր կենքը յեղաշրջած այս կամ այն զէմքին մասին եւ բուսածը թիւ անզամ եզած է այսքան ուժգին, ենթակային բոլոր գիտերուն առիթով, զրուսեան բոլոր Հատուածներուն մէջ, ուր Ռուսումը միւսներուն ազատութեամբ Հանդերձուած անմէն ատրերս անձ մըն է, միւսներուն Հանդերձել ուզածը, զվսեմացածը կորողութիւն:

Ձանգաւածն յառաւումէ մը, որ չի փայլի իրերուն մասին կամ իրերուն առջի յօսելով կամ գրելով: Ան ունի մտաւորութեան զանաւոր այդ իրերուն ճակատագրէր: Ուրիշներ կը յօսին կամ կը գրեն այս առիթ, կամ այն մասին: Ան կը դառնայ բռն իսկ: Անս թէ ինչու իր մեամները կը պատկանին բոլորին եւ յոյր մամանակներուն:

Անուշա: Եւ միայն այդ պատճառով էր, որ թագութիւնները Հետեւեան իրեն եւ զիր նմաններուն. զիրերուն ճակատագրէր զանաւոր մտաւորութեամբ ստուած իր եւ իր նմաններուն Հագնական մարտութիւնը, մաքին խորութիւնը, Հայրքն ու տեսիլք իրբու ճակատագրէր ընդունեցին թագութիւնները, ու նաեւ այն պատճառով, որ ան իր ճեմարդարեան երկայնքին ու կեանքի երկայնքին ցանց մերդաշնակութիւն: Ներդաշնակութիւններուն ամենէն տեսակովը՝ հոգեկեցիմ ներդաշնակութիւնք:

Ձողեղէնին ներգայնակութիւնք:

Որուն պիտի Հետեւէր մարմնեղէն մասնակցութիւնը ու պիտի յայտնուէին Հրեղէն արարքները մեր իրականութեան խաւարին վրայ:

Հոգեկեցիմ ներգայնակութեան եւ միւսներուն յարդարականութեան շնորհիւ էր, որ յեղաշրջուեցաւ Հայ կեանքը, արիացաւ Հայ մարզը ու Հայոց պատմութեան ընդհատուած թիւը կապուեցաւ փաստակց շրջաններուն, արի մարդոց, ստեղծագործ կարողութեանց, Հայրենասպաս զանգուածներուն:

Հրայ Զարգարեանի այս գրութեան մասին, որ տեղ գտած է ճիշտոմբ Հատորին յանդուածին մէջ, խմբագրութիւնը արձանագրած է Հետեւեալ ծանօթագրութիւնը.

«Վեցիւրորդը, եւ վերջինը, Հրայ Զարգարեանէն գրութիւն մըն է, անձուած վախճան Նաստարգեանի արիւնի: Հոգեբանական վերլուծումով եւ խոր ապրումով տրուած գրական հատուած մը՝ Ռուսումի արագրական արժեւորում իրբու փորձ: Գրուած է յայտնագրելու քերթի մը (արդեօ՞ք ճեմարարձի) քայտիկ քիւիմ համար եւ. բոլոր մանօրութեան, առերկած է Ռուսումի Թախարանը Հրայ Զարգարեանի մէկ աշխատասիրութեան (մեկի անձնաւոր): Թուական չի կրեքք:

Զարգարեանի գրութիւնը ինք եւս կը կրէ նման յայտարարութեան մը.

«— Մնաց որ, ինչպէս հետագայ գրութիւնները ցոյց պիտի տան...»

Ու տեսնուածին Հարցումը.

— Գրուած են արդեօք ծանուցուած այդ ճեմարար գրութիւնները:

Կը թուի, թէ պատասխանը կրճուց տայ միայն Հեղինակը, Հրայ Զարգարեան:

Եթէ աւարտած է գործը, ի որով պիտի մաղթէինք, որ անիկա օր տալ Հրայարքանէ Հանուէր, որովհետեւ, կը կարծենք, որ այս նախանշակէն հազ արգար չէ ընթերցողը զրկել ամբողջին վայելքէն, ենթադրելի լուսնի, խորհուրդէն, Հասարակ, քորթի, իրականութեան զգաստանող ու կարուցանող տարիքներէն...



## Ռ Ո Ս Տ Ո Մ Ը

(Տեղին կառուցանող հանճարը)

Quelque chose de silencieux enveloppe  
ses actions...

Ce ne sont pas ses destinées que porte  
ce héros d'une nouvelle espèce, ce sont  
celles de son pays.

CHATEAUBRIAND

*Կը ճանչնա՞ք Ռոստոմը: Տեւէ՞ք: Կը յառաջանայ փողոցին մէջ, զանգ-  
ածնեղ, թխտեխիլ, հաստարեստ, խոպան, տարերային: Ու յանկարծ՝ ժը-*

Որքան հայ անհատը կը հանդիմանայ կողմադուրս մէջ, որքան հաւաքակազմութիւնները կը կրնն տարբարութեան որոշը, այնքան այլ Ռոստոմը կը ներկայացնէ կողմակիցութեան տեղը, միատուրութի մղումը, հասարական ու բարձրագոյն կամքի մը հետապնդումը:



Զանգուածեղ խառնուածք մը, որ չի փայլեր իրերուն մասին, կամ իրերուն առթիւ խօսելով կամ գրելով: Ան ունի մոզոքիւնք դասնալաւ այդ իրերուն ճակատագիրը: Ուրիշներ կը խօսին կամ կը գրեն այս առարիւ, կամ այն մասին: Ան՝ կը դառնայ բանն իսկ: Ահա թէ ինչու իր նմանները կը պատկանին թուրքին եւ քուրդ մամանակներուն:



Ռոստոմները իրենց յոյսը կ'առնեն վերէն: Արժէքներու հուրապեառութիւնը կը զստարտուի անկէ սկսելով՝ իտեպլեն, մարդկայնականներն: Իսկ իսկալը՝ նախ ինքնուրացում է, զոհարեւում, կատուցանում: Ռոստոմը այս նոր կարգին պատկանող հերոսն է:



Ճողովուրդները, իրենց աքնութենէն յետոյ, կրնան անխտորէն փակել իրենց թարթիչները, արդարութեան մէջ, երբ Ռոստոմները կը հեղին:



Մարքոզն, Գաուգիէն, Արեւսիէն եւ այսպիսիներէն անհամեմատօրէն աւելի՝ իր զգայնութիւնն ու մասնութը կը բարտեւր թոյլութիւնը: (Կը յիշեմ այն բացառիկ ու զուտ խանդավառութիւնը, որով իր հակա մարմինը համակուած էր՝ երբ կորուստ ինքի, ամբողջութեամբ, թուրքոյն շնորհ մանը):

Հ. Զ Ա Ր Դ Ա Ր Ե Ա Ն

սիւտ մը: Ու ամբողջ նախնական տարերքը կը փոխարկուի վճիտ հողի: Անտառային հանդարտութիւն, ուր սրտիկ ազմուկները կը չքանան, ուր ամենափոքր լոյսը իր աղաստանը ունի. անտառ՝ որ փայտատակումներ կրնան խռովել: Համբերատար, տոկուն՝ ինչպէս Ղարաբաղի անառիկ մէկ ժայռը, որուն սաքերուն կը փչուին փորձանքներուն, ձախորդութիւններուն ալիքները: Այո՛, անտա՛ռ. այո՛, լե՛ռ: Կը կազուրէ, կը վերանորոգէ, կը վերադնէ: Եւ նաեւ՝ մայր եկեղեցի: Ընդունարան իմացութեան եւ հողի վէճակատումներուն: Ու լո՛ւտ. իր կենսքը պարտաւած լուրջեամբ: Բայց ի՞նչ կենսք: Յեղին հակատարերները կրող մարդիկը իրենց կենսքինը կը լքեն: Աւ Աւայիկներին համար ըստուած սա խօսքերը՝ բնորոշումն են նաեւ Ռոստոմը:

սումին: Ո՛վ աւելի իրաւունք կընայ ունենալ, քան Ռոստոմ մը, մշակութային արտայայտութեան մը մէջ — ինչպէս մամուլի այս բացառիկ թիւը — իր տեղը ունենալու:

\* \*

Անա տպաւորութիւններ, ուժե՛ղ, որ մարդ կը ստանայ Ռոստոմին մերձեցումէն, որ կրեցի ես՝ փոքր մանուկ, երբ հայրս յանձնեց զիս իրեն Պոլիս՝ տանելու իրեն հետ կարին, Սանտարեսն վարժարանը, Օսմանեան Սահմանադրութեան տարիներուն: Փոքրիկ պատահարներ, զորս յիշողութիւնս հաւատարմօրէն պահած է, խորհրդածութեան ազօրիքներէն անցնելէ յետոյ այսօր, բոլորն ալ կու գան յատկանշելու Ռոստոմին անհատականութեան էական — եթէ ոչ միակ էական — մէկ դիժը:

Ամէն մէկ հայ անհատ կը ներկայացնէ մտային շփոթութեան, նկարագրի տատամսումի, հերձուածական միտումի ժառանգական տուեալներ: Այդ անհատներէն կազմուած զանազան խմբաւորումները, որպէս բնական հետեւանք, երեւան կը բերեն ուժղին, յամառ մղումներ դէպի կազմալուծումը, հաւաքական կեանքի բեկումը եւ ծանօթ այս կարգի վէճեր, որոնց գոյութիւնը եւ աւերները կը հաստատենք ամէն օր, մեր սուտին թէ հասարակական կեանքին մէջ, եւ նաեւ կրթող խոնձուածքը, արտաւոր սէրը դէպի ֆրակն ու հետորութիւնը, մտաւորական միջկողորեորին իմաստակութիւնը չեն կազմեր մեր ճակատագրին թշուառութիւնը պայմանաւորող նուազագոյն ազդակները: Եւ հայ անհատին դիւրահաստութիւնը, արտակարգ պարզամտութիւնը եւ տարապայման խորամանկութիւնը, որ, ի վերջոյ, առաջինին մէկ տեսակն է՝ սպառնաց, որ երկուքին ալ դործնական արդիւնքը միեւնոյնն է: Աւելորդ է վերլուծումը այս բացասական տուեալներու պատճառներուն: Հող է Պատմութիւնը: Մեզի հարկաւորը՝ առարկայական հաստատումն է, ցոյց տալու համար, որ ցեղը — մի՛շտ կենդանի, ու իր պահպանման բնազդները մի՛շտ սրուած — ի՛նչ ձեւով կը թօթուէ ինքզինք, կը լուծէ իր վրէժը թէ՛ եկուոր, թէ՛ ժառանգականօրէն բացասական իր միտումներէն, զրկելով մեր իրականութեան նայալուցան մը, Որիմեան մը, Անդրանիկ մը, Ռոստոմ մը, — որպէս խոնձիտուած ըսուած անուններ:

Ռոստոմը ծառայաւ մեր իրականութեան մէջ որպէս շանթարգել մեր հաւաքական յոռի ձգտումներուն: Որքան հայ անհատը կը հանդանայ կազմալուծումէն, որքան հաւաքականութիւնները կը կրեն տարրալուծման որդը, այնքան ալ Ռոստոմը կը ներկայացնէ կազմակերպութեան տենչը, միաժուլումի մղումը, հաւաքական ու բարձրագոյն կամքի մը հետապնդումը: Ու այս՝ ստացական կամ մտային որոշումով ձեռք ձգուած առաքելութիւնն է: Անոր բնախօսական պայմանաւորումն է: Ինչպէս ձուկը ջուրին մէջ միայն կրնայ ապրիլ, Ռոստոմները կրնան ապրիլ՝ կատարելով իրենց կառուցումի դործը, որ ներքին զործանութիւնն է: Այդ առաքինութիւնը հազիւ սկսած էր թէ՛ մը ընդհանրանալ մեր քաղաքական վերադարձիտումի առաջին օրերէն սկսեալ: Անոր ստորոգելիները սակայն բացառիկ էին Ռոստոմին մօտ, ինչպէս բացառիկ է բնատուր տաղանդ մը, իր լայնքովը, իր խորութեամբը: Ու որքան ստրկացման, ուժեղացման այլքները կը զրուեն ցեղին մակերեսնե-



ըը, այնքան իր ծոցէն ժայթքած մէկ զաւկին հակաթոյնի կարողութիւնը կը հասնի անհաւատալի խորութիւններու:

Անցնինք, աւելի շուտ, փաստերուն: Տեսնենք մարդը՝ զգործելիս: Այն ալ՝ սահմանափակ ժամանակամիջոցի մը մէջ, Պոլսէն դէպի Կարին այդ ճամբորդութեան իսկ ընթացքին: Նախ եւ առաջ նոթապահէք ոս մէկ փոքրիկ փաստը, որ կարող է շատ մտանակի թուիլ եւ որ սակայն մեծապէս բնորոշ է Ռոստոմիս համար: Մեղի կ'ընկերանային բժիշկ Յ. Տէր-Դաւթեանը՝ նոր պակուած Օր. Ս. Պարտիզպանեանին հետ: Միութիւն մը, որ միմիայն գործն էր Ռոստոմիս: Ոչ թէ անոր ստեղծած առիթներուն կամ զանազան զիւրացումներուն հետեւանքով: Ա՛չ: Անոր միջամտութեանը, անոր ստիպումին, անոր յամառ հարկադրանքին հետեւանքով: Հարկ կա՞յ ընդզոհելու տարբերութիւնը: Ա՛ս՝ զործ լուծի այն բարեմիտներու թիթեւանքին միջամտութիւններուն հետ, որոնց փափկազգացութիւններն ու վերապահումները վատնողութեան կը շտուին: Հոս տեղի ունեցողը մեծ կամքի մը պզտիկ մէկ ալիքին կիրարկումն է: Հոս կեցած է մէկը, որ կը կատարէ առանց տատամտումի իր արու ժեսթը, միանգամընդմիջ տունելով իր վրայ պատասխանատուութիւնները: Կամք՝ որուն բոլոր ալիքները, մեծ թէ պզտիկ, նոյնքան քնազգական թափով, կը մղտին կիրարկուելու: Այդ աէթը, հազարներու մէջէն որպէս մէկ օրինակ, հաւատքի մը — աշխարհահայեացքի մը — մէկ մանրիկ ցորացումն է: Ամբողջացնենք պատկերը: Այդ միութեանէն առաջ, նոյն կարգի ճիւղերով, գլուխ բերած էր պսակը զմայլելի Ս. Բարսեղեանին եւ Օր. Պ. Պարտիզպանեանին միջեւ, ջրոյր առաջինին: (Հազարներու մէջէն երկրորդ օրինակ մըն ալ միայն): Այս երկու ջրոյրն ալ՝ մատղաշ աղջիկներ, զուրս բերուած արդէն Ռոստոմիս ձեռքովը հայ մանր բարեբաւաղութիւններէն եւ լծուած հաւաքական կեանքի: Ահա մէկ ցուրը այդ կառուցողական նկարագրին — զուրս բերել անհասնելի հաստէր ուժացումի կէտքէն, զնեւ գանոնք մարդկային ուզիչ ճամբաներու վրայ, կայացնել տալով քնականոն միութիւններ. իրարու ջով բերել այդ մասնակի միութիւնները, հետապնդելու համար տեղական, ազգային, մշակութային նպատակներ. իջարու. զօղել բոլոր այլ տեղական համախորհումները, ի խնդիր ցեղային իտէալի: Եւ ահա թէ ինչու այս գործի աստիճանաշարին վրայ Ռոստոմը ի յայտ կը բերէր, որեւէ մէկ աստիճանին համար ալ, նոյնքան ուզիչ միջամտում եւ յամառ կամք: Յեղաշին կամքի ջրվէժը կրնար հոսիլ միայն մասնակի առուակներուն որդեգրումովն ու միաձուլումովը:

Եարունակենք մեր ճամբան եւ հասնինք Բարսեղ: Անմիջապէս կու գայ մեզ տեսնելու յայտնի հայդուկը — այժմ զօրավար Սեպուհը — որ անհամբեր կը սպասէր Ռոստոմիս ժամանմանը: Մեղանի վրայ է իթթիհատականներու եւ հայերու ծանրակշիռ խնդիրը: Որքան փայլով կը բանի կարիճ հայդուկին զէնքը ու յստակատեսութիւնը կուրին մէջ, նոյնքան շփոթի ենթարկուած են իր առնելիք որոշումները, քողքնի լարծուն գետիններուն վերայ: Ռոստոմը նստած՝ կը լսէ: Բայց ի՞նչ լսել, ի՞նչ բնական այրուեստ: Ունկնդրութիւնն իսկ արդէն կամաց-կամաց կը տարածէ լո՛յսը: Երբեմն բարի հեզանք մը, Երբեմն հարցում մը, որ որոշ կէտի մը վրայ մասնաւոր ուշադրութիւն կը կեդրոնացնէ: Յանկարծ ժպիտը կը կորսուի զէմքէն, եւ քերանը կ'արտասանէ ամբողջական խօսք մը: Հիմնաբար մը կը գրուի: Կը սկսինք նուազ ծածանիլ օդին մէջ: Ոտքերը հաստատ հողի կը հանդիպին: Հայդուկը կը խօսի: Թէ՛յ կը խմենք: Յանկարծ Ռոստոմը բան մը կը պատմէ, վերջերս պատահած, այժմէական: Մեր շուրջը կը լուսաւորուի: Հայ

դու կը ի՛նքը գտած է իր ճամբան: Ան դիտէ ալ, թէ ի՛նչ պէտք է ըսել թուրքին, ինչպէ՛ս պէտք է ըսել այս կամ այն կարելի պարագային: Բայց այդ ճանակի իրերահասկացողութենէն զուրս՝ ուրիշ զոհուակութիւն մը համակած է մեզ: Խորհրդատուր զոհուակութիւն մը: Հաղորդուքիւմ մը կատարուած է:

Թուրք ծառան անգամ մը եւս կը լեցնէ դաւաճները: Նայ կը խմենք: Կը շարունակենք մեր ճամբան: Երզնկայէն ոչ շատ հեռու, ուրիշ լրան մը կ'իջեալինք: Կը հասնի շքեղ կառք մը եւ փարթամ տեսքով մարդիկ վար կ'իջնեն: Վարդգէսն է: Երբ կը մտենայ կազարով՝ վարդի իւղի բուրում կը տարածուի, մինչ մանրկեկ ազամանդ մը կը շողողայ մետաքսեայ փողկապին վրայ: Ոտքը կը ցաւի: Խո՛ստ է ու աղմկալիցորէն յանձնապատասխան: Փառլամենք, քանտիտարիւր, մեպուս, Գաշնակցութիւն, Իթթիհաս... Կրթութիւնը ուսուցիչներ կը ծամածուկէն դէմքը, բարձրացնել կու տան ձայնը, կատարել կու տան մեծ ու հասու շարժումներ: Զափի գոցցումն ու տարրական ողջախոհութիւնը խորտակուած են: Ռոստոմը մտիկ կ'ընէ, զլուրէ ծռած, լուրջ: Դիմացներին կրքի ուսուցիչ մէկ ցայտումին՝ կը բարձրացնէ դուրս ու կը քննէ խօսակիցը, յայտնապէս ուրիշ հարցումներու պատասխան փնտռելով, քան թէ հետեւելով յորձանուտ խօսքերուն: Յետոյ, դարձեալ, լուս, կը կ'ընէ դուրս: Բոպէն դրիթէ արտարանական թանձրութիւն կը ստանայ: Ռոստոմին հակադրող, ծանրանիստ հանդարտութիւնը կը զայրահնէ միտին կիրքը: Եւ յանկարծ կը պայթի սա խօսքը. «Եթէ... եթէ... եթէ... այն ժամանակ ես առանձի՛նք կը դնեմ իմ քանտիտարիւրս»:

Ռոստոմը, այս անգամ, դուրսն իսկ չի բարձրացներ: Կը կատարէ իր ընտանի ծեսերէն մէկը — ալ միջնեմատր, վարժ ու գիտուն թաւալումներով, կը կատարէ պեղումներ քթի խոռոչներուն մէջ: Երկու բոպէ լուրթիւն Ապա, անխոսով մեղմութեամբ, կը հարցնէ.

— Ո՞տք է ցաւում, Վարդգէ՛ս:

Տիկիները մօտեցան եւ յայտնեցին, որ կրնայինք ընթրել: Յաջորդ առաւօտ, հեռուէն տեսայ, որ խօսակցութիւն մը կը թռչտի երկուքին միջեւ, պայծառ առաւօտուն մէջ, թեթե՛ւ, զուա՛րթ: Վարդգէսին սուր, քիչ մը կնոջական ձայնը երբեմն կը պայթի խնդրէ մը մէջ, մինչ Ռոստոմին դէմքը կը փոփոխի այնքան մտայն ու նուրբ ժպիտի մը տակ: Երբ հրաժեշտ առինք, Վարդգէսին հին յեղափոխականի աչքերը իրենց ամէնէն աղուար ակնարկներէն մէկը կը ցոլացնէին:

Ռոստոմին մեծդի ձեռքերը անդադար, այսպէս, ծեփեցին իր Տունը: Ենդին կատուցանող հանճարն է, որ նստած է իր լաւագոյն դաւակներէն մէկուն հողիին: Ու ամէնէն բարձր կատուցումը: Ոմանք, այդ ցեղին զաւակներէն, ուրիշներու հրապարակներուն վրայ բարձրացուցին ճարտարապետական յուշարձաններ, ոմանք նոյն հանճարին ցոլացումը եղան՝ թուղթն ու դրիշը զործածելով, ոմանք՝ ձայնանիշը, ժողովուրդը՝ ձայնը: Ռոստոմը զործածեց կամքերը՝ իր սաճարը կատուցանելու համար: Տաճա՛ր՝ ուր պիտի պաշտուէր այն կուռքը, որմէ աւելի վաճառ ժողովուրդները չեն ճանչցած, — անկախութեան, հողիի ազատութեան խնայում: Եւ եթէ ստրկացնող մուրճերը, դարբնով, իշան ժողովուրդի երեսին՝ անոր ցեղային դիմադիրը ազարտելու, ապա ուրեմն, նոյն ցեղին մէկ ընտրեալ զաւակին կատուցողական հանճարին թափը բաւ եղաւ ծառայելու համար կ'ըստ հասակները, վերադարձրելու համար ամէն մէկ անգամին սկզբնական կրակը, ու խոնարհած հօտ մը՝ դարձնելու դիտակից զանրուած, պատրաստ՝ կամ դիմելու իր վսեմ հակառակորդին, կամ զոհուելու:

Այդ թափին խորութիւնն ու լայնքը զազափար կրնան ալ անհատին ծանրութեան մասին: Ժողովուրդներու ծառերը չեն կրնար արտադրել աւելի ազնուենի պտուղ մը: Այդ հիմքով, մարդկութիւնը կարելի է բաժնել երկուքի: Անոնք՝ որոնց ժամանակը կը խեղդուի իրենց իսկ ո՛լլուտ կեանքին մէջ, եւ անոնք՝ որոնց կեանքը, իրենց կառուցումի մեծ ձգտումովը, կը միանայ իր նմաններու ճակատագրին, կը նոյնանայ անոր հետ: Մեֆիսթոֆելէս ասանց մեծ դժուարութեան կը յաջողի քանչեւ Պառուտին մեղքի ըմբռնման պատուարը: Արդարեւ, այն բոլորին երբ պատճառներու վերլուծումը չարի աճքը հասկնալի կը դարձնէ մեղի, մեր բարոյական հակադրեցութիւնը կը դադրի գործելէ: Բայց պարտուած Պառուտը, մեղքի բոլոր փապուղիներէն անցնելէ յետոյ, երբ կը վերադառնայ սկզբնական յղացման, անխորտակելի, կէօթէական միջնաբերդի մը մէջ կը ցցէ սա ճշմարտութիւնը, — այո՛, թերեւ մեղքը, թերեւ չարք չկայ, բայց աշխարհը կը բաժնուի երկու տեսակ մեծ ուժերու: Առաջինը՝ կառուցանող, ստեղծագործող ուժերը՝ երկրորդը՝ աւերող, հակաստեղծագործական ուժերը՝ սասանան: Ընարեալները՝ ստեղծագործողներն են, կառուցանողները: Ռոստոմները կառուցանողներն են՝ իրենց շինարարական մագնիսը կը քաշէ ու կը նետէ իրերուն զանգուածները կառուցողական իտէալի վտեմ պայտներուն մէջ, ուր անձուկ անհատը կը մեռնի, ուր օրէնքը՝ հաւաքականութեան կամքն է: Անմահ կամքը՝ որ պատմութեան զարգանդին ընդմէջէն կը ձգտի իրագործուելու:

Ահա թէ ինչու Ռոստոմին՝ այս նոր տեսակի հերոսին զէնքերը խորհրդաւոր են, դժուար վերլուծելի: Ո՛չ փայլուն մտաւորականութիւնն է իրենց յատկանիշը, ո՛չ հեռատրութիւնը, ո՛չ իսկ բիրտ ուժին գիտութիւնը, ո՛չ ալ լպրծուն նրբութիւնները քաղաքականութեան: Ի՞նչը հապա, ինչպէ՞ս . . .

Չանգուածեղ խոսնուածք մը, որ չի փայլի իրերուն մասին, կամ էրերուն առթիւ խօսելով կամ գրելով: Ան ունի մագալիսը դառնալու այդ իրերում ճակատագիրը: Ուրիշներ կը խօսին կամ կը գրեն այս առթիւ, կամ այն մասին: Ան՝ կը դառնայ բանն իսկ: Ահա թէ ինչու իր նմանները կը պատկանին բոլորին եւ բոլոր ժամանակներուն:

Չոյզ մը թոք շնչած Ղարաբաղի վճիտ օդերը, որ կը թուալին իր արեւին մէջ Գողթան հայրենիքի անիմանալի ու խորհրդաւորէն արգաւանդ աւանդութիւնները: Պանծալի երկիր Չոկերու: Կը թեւակոխէ կեանքին մէջ երբ սլու ցեղը, ՅՕական թուակրաններուն, իր մէկ քանի մեծագոյն գաւազներուն ձայնովը, անմահ շէտերով, կը ձայնեղէ մեծագոյն իտէալը՝ մարդկայնականը: Ու նախանամօրէն այդ օնուկին կարօտ իր հոգին կը զուգադիպի համապատասխան ժամանակաշրջանին: Մարբաէն, Կառուցիկէն, Մանուկէն եւ այսպիսիներէն անհամեմատօրէն աւելի՝ իր զգայնութիւնն ու մտածումը կը բարախէր թուրթոյով: (Կր յիշե՛մ այն բացատրիկ ու զուսպ խանդավառութիւնը, որով իր հսկայ մարմինը համակուած էր՝ երբ կարդաց ինձի, ամբողջութեամբ, թուրթոյի շերտէ մտիւք):

Գոնհիկը, շարքայինը, միջակը արժէքներու նեղլիկ ստորհասնալի մը կ'ընդգրկէ, սիսեղով վարէն, հիմնուելով իր անհատական շահերու ըմբռնումին ու ապա՝ դասակարգային ապականած համերայնութեան վրայ: Ասոնք անմիջապէս որ գտնուին այդ ստորհասնէն վեր մակարդակի մը վրայ՝ կ'ուենան գլխու պտոյտ, կը սայթաքին, կամ յանցապարտօրէն կ'իյնան: Ռոստոմները իրենց լոյսը կ'առնեն վերէն: Արժէքներու նուիրակեցութիւնը կը դասաւորուի անկէ սկսելով՝ իտէալի, մարդկայնականի: Իսկ իտէալը՝ նախ ինքնուրացում է, զոհարեցում, կառուցանում: Ռոստոմը այս նոր կար-

զին պատկանող Հերոսն է: Իրենց բերած հարստութիւնովն է, որ ցեղերը կ'ապրին:



Վերջին օրն է: Վաղը կարին պիտի Հասնինք: Ձիերը կը վրնջեն, ու իրենց քաշած կտաքին աղմուկէն, խոպան քայտաներու վրայ, կենդանիներ՝ խրաշած, կը փախչին: Ռոտտոմը զուարթախոհ ու հայեցողական տրամադրութեան մէջ է: Կ'ըմբռնէ խորհրդածութեան խորագոյն հաճոյքը: Այդ կտրդի ընդհարական հաճոյք գիտնականը կ'ունենայ. ստեղծագործում է այդ — մնաց որ, ինչպէս հետագայ գլուխները ցոյց պիտի տան, պատրաստուած մասնազէտ մը կար իր մէջ, մասնաւորապէս բնական գիտութիւններու: Կը խօսինք. կը պատմենք:

... Վեհանձն առիւծը իմ ամբողջական, մանուկի խանդավառութիւնս հուսմի մէջ է գրեթէ: Երեւակայեցէ՛ք... չէ բղկտեր փայտահատը: Ազնի՛ւ կենդանի: Ինչո՞ւ: Ոտքին փուշն է հաներ: Ա՛խ առիւծ մը ըլլար, առիւծի մը հանդիպէինք, է՛ս ալ մտնենայի, է՛ս ալ փուշ մը հանէի, է՛ս ալ բան մը ընէի... Վեհանձն անասուն: ...Ռոտտոմին թուի մագերուն, ալտերուն, ճակտին, քթին, բերնին վրայ նրբին ժպիտը ծաղկեցաւ: Իր փոքր, սեւ աչքերը փայլեցան այն ամէնէն իմացական, բարի հեզնանքի լոյսովը: Սեղմեց, կտաքէն մէջ, վախտ իրանս կուրծքին ու ըսաւ.

— Եթէ Հանդիպիս նրան՝ յամենայնէպէս, լմտենա...

Վերջին գիշերը խանին մէջ: Դուրսէն, ամէն կողմէ անապահովութեան զգացում: Սենեակին դուռը փաստած կղզւանք մ'իսկ շունի: Ամէն կողմ ճեղքեր. խարխլած ձեղուն: Քանի անդամ ըսեր ենք. «Եթէ զան, կողոպտեն, մեռցնեն՝ ի՞նչ պիտի ընենք: Իրենց բրածը իրենց պիտի մնայ»: Իմ մանուկի տրտում ու արդէն անձկագին խանուածքս զրեթէ նոպայի մը կը մասնուի: Ռոտտոմը ներս կը մտնէ: Անկողինս ճիշդ իրենին ջովը. ներքնակները իրարու կպչած: ...Մոգականօրէն սիրտս կը գտնէ իր հանդարտութիւնը, իր ջերմութիւնը: Երազանքը ա՛լ չի խրոչիւր: Հիմա ոչինչէ, ոչ ոքէ, ո՛չ ալ մահէն կը վախնամ: Խորհրդաւոր ամբարտակներ կը խորտակուին ու լոյսի, ու կեանքի կոհակները անընդհատ կը հոսին: Ես հանդարտօրէն կրնամ քնանալ, երբ մօտս կը շնչէ հսկայ մը: Ժողովուրդները, իրենց աքնութենէն յետոյ, կրնան անխուփօրէն փակել իրենց թարթիչները, արդարութեան մէջ, երբ Ռոտտոմները կը հսկեն:

Ահա, անսպասելի, ինչպէս բնութիւնը կրնայ ունենալ, շտեմարան մը: Այս ճամբորդութեան երկայնքին ու իր կեանքի երկայնքին, ան ցանցի ներդաշնակութիւն: Ներդաշնակութիւններուն ամէնէն տեսականը՝ հողեղէնին ներդաշնակութիւնը: Այն՝ ուր կրնան սուճանալ ժողովուրդի մը ձգտումները, այն՝ որուն կշռոյթն է մարդկայնականին բարախումբը, այն՝ ուր ամէն ինչ խոհուն է ու պայծառ, այն՝ ուր ամէն ինչի ու ամէն ոքի համար տեղն ու ճամբան որոշուած է: Այն՝ ուր կը ծածանին բարբիւն, մեծին, վեհանձնին զբօլակները:

Ա՛խ, պաշտելի՛, պաշտելի առիւծները իմ ցեղիս:

ՀՐԱՁ ՁԱՐԴԱՐԵԱՆ

Գ. Թ Ե Մ Ի Զ Ե Ա Ն

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Նշեմքի ՅՕամենկն հազ հրապարակ իջած նոր տեսներին  
 ձկն է բանաստեղծ Գէորգ Քեմբզեան, որ 1978ին լոյս ընծայեց  
 «Մով եւ կղզի» խորագրեալ իր անդրանիկ քերականագրքը:  
 Մեր այս թիւին մէջ լոյս տեսած Քեմբզեանի զոյգ բանաստեղ-  
 ձու-թիւները մաս կը կազմեն իր երկրորդ հատորին, որ է մասու  
 լոյս տեսի տեսնէ «Շարժում» խորագրին տակ:  
 Արխոսարդ բանաստեղծը աւարտած է Հալէպի Ազգ. Քարէն  
 նփփէ Ճեմարանը, ապա հետեւած է Գամառնիոսի պետական հո-  
 ժաշարանի թշկական գիւղին, իսկ իր մասնագիտութիւնը հեռք  
 ձգած Միացեալ Նահանգներու մէջ: Ան ներկայիս կը բնակի Հա-  
 լէպ եւ կը զբաղի բժշկութեամբ:  
 Քեմբզեան այսուհետեւ պարբերաբար պիտի աշխատակցի  
 «Բազմ»ին:

Բառը կ'ըլլայ երփնալուցկի  
 մոռցումս՝  
 խաներուն մէջ, պահերում,  
 որոնք յաճախ կը հոսին ռուցեքրուս շուրջ,  
 ծակտիկներում մէջ մտքիս  
 եւ կը մնան անձնաբեր:  
 Բանը կը մնայ տարանջատ,  
 տարագնաց՝  
 խրամներում, ճամբաներում,  
 տամարներում մէջ փնտռելով  
 մարմինը ճոր՝ անկերպարան շաղկապին:  
 Կը ճամբորդեմ թառերուս հետ  
 երիցուկի մ'առասպելին ձգտութեամ մէջ ինկած  
 ու կը գառնամք՝  
 (օղակ-օղակ  
 այնքան արագ  
 գլխապտոյտ)  
 այս գիբացող արշաւէն դուրս ելլելու,  
 որուն համար ողբասացներ վարձեցին  
 «ասպետները մերժին»  
 ու կայեցին «մութ խողին»,  
 մինչ եւ անդին կ'արձակեմ կամուրջներս,  
 սիրահարուած ուղտերս,  
 թուրս խոս՝  
 կոտորակուած շարքերում,

Եւ կը մնամ առանց ձայնի,  
 պրիսմակի,  
 ջրհորներու, ֆարայրներու մէջ կարտուած,  
 ուր ջազացիներ կը ձայնեն  
 ջուրի, հացի հատիկներ:

ժամանակի, տարածութեան սաղրա՞նքն է մեզ միացնող-անջատող  
 բա՞ն մը  
 բանե՞ր  
 բառե՞ր  
 դառե՞ր  
 կամ շինական պարիսպներ...:

Առաւօտը ի՞նչ կը բերէ՝ խարխափումին,  
 դարերու մեր ազազակին,  
 ազմուկին,  
 քուազրուած ստրկութեան, միմտութեան,  
 կամ «արուեստին պնակալէզ»՝  
 վերնայարկի կառոյցներուն,  
 ֆմայֆներուն սալոնի,  
 ֆազիսնի մաճր քննուկներուն մէջ խրած...:

Ինչպէ՞ս հասնիլ իրարու,  
 որ կարենանք իրարու հետ նստիլ կրկին՝  
 պրպտելու վանկերը «լուս խաւերուն»,  
 խաղերն այրող առաւօտին,  
 որոնք արդէն կը կայեն մեզ —  
 կ'անջատեն,  
 առանց սագի  
 կամ փողի...:

## ՏԵՂ ՄԸ ԼԵՋՈՒԻՆ ԵՒ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՄԻՋԵՒ

Տարածութիւն,  
 կը խտանամ ուր դարեր  
 ու ծարաւէ կը բռնկին  
 ուսմբերուն մէջ երազի՝  
 տիեզերքի աչքէն հեռու,  
 տեղ մը՝ կաւի կառոյցներուն,  
 որոնք յաճախ կը փխրին,  
 կառուցուելով կը փոխուին՝  
 հասնելու մեր  
 շարժումներու  
 շնչառութեամբ:

Տարածութիւն՝ այնքան մտիկ,  
 ուր կը սպասենք՝ սպասելով,  
 խոնարհելով,  
 չես գիտեր ո՞ր լարախաղաց միմասին  
 կամ հերոսին տիկնիկային,  
 քր պիտի գայ մեր լեզուին սահմանին մօտ,  
 անուրդներուն, կրկններուն մեզի ազմուկը բերէ :

Քառը ինչպէ՞ս կը բացուի,  
 ինչպէ՞ս կը շարժի,  
 կ'ըլլայ բշիջներ  
 հասանձներուն մէջ .

Ինչպէ՞ս կը պտղի  
 ու կը քափանցէ՛,  
 կը տարրայուծէ  
 կազերն անկատար մեր այրումներուն՝  
 փնտտելով անցքեր,  
 ծակտիկներ յոյսի,  
 մաքառումներու,  
 թուղթի բարբառէ՛ն՝  
 կաւերէն անդին,  
 մինչեւ վեր՝ փռոց,  
 իբրեւ գօրակաջ  
 եւ ժամադրութիւն... :

Կը նահանջեմ հոն երբեմն,  
 գետնաղիներ կը փնտտեմ  
 խաւերուն մէջ լուսօտն,  
 երբ թունաւոր մշուշը գիս պարուրէ  
 ամէն անգամ որ շարժիմ  
 ելլելու դուրս առմիճոյի ցանցերէն .  
 կը նահանջեմ հոն երբեմն,  
 գետնաղիներ բանալով  
 վար,  
 վար՝  
 սեղ մը,  
 բշիջներուն կորիզին մէջ,  
 ուր կ'այցելեն շողեր, ճայներ,  
 աքաղաղներ մտերիմ,  
 դողին համար գարթումի :

Տեղ մ'ընդարձակ  
 միջեւ  
 Լեզուին Եարծումին  
 մե՞նք կը շրջինք  
 դեզերելով թիւերուն մէջ

ու կը շարունակեմ  
 (կը շարժեմ մեզ)  
 իրարու քով  
 (դէմ դիմաց)  
 արքանոցի դրամ առջեւ փաթաթուած,  
 սպասելով, որ շարժիմէ,  
 կտցահարենք՝  
 խածոտելով, արիւնելով մէկմէկ,  
 մինչեւ կաթիլը վերջին,  
 (որ դրուած է անուրդի) :

Ինչպէ՞ս բանալ սահմանը այս խողերուն,  
 դաւադրութեան .  
 Ինչպէ՞ս պատուել դիմակները  
 քառերակիւս տոտեմներուն  
 «հակա-մարտող»,  
 Ինչպէ՞ս քակել թնճուկ խաչքառը՝ շինուած  
 հագարավանկ բառերով՝  
 երկրագունտի կռնակին  
 իբրեւ ժառանգ փակցուած :

Տեղ մը միջեւ երկուքիս  
 քերթուած մը կայ անառակ,  
 որ կը բացուի մայրակի մը կանչին՝  
 ճամբորդելով անվերադարձ պահերուն մէջ  
 սահմաններու խաղէն անդին,  
 բառէն անդին՝  
 տեղ մը պահուած փախուստի...  
 Քերթուած բառի,  
 առաջակի,  
 (գոր երգեցին կամ տեսցին բանաստեղծներ)  
 բաց զայրոյթը բազմապատկուող ու խտացող բաներուն,  
 քակէ լեզուն նախամարդու կրակին,  
 շարժումներուն,  
 ստումներուն կարօտի,  
 մինչեւ, մինչեւ որ ելինք  
 զժողովրդէն հակիթէն դուրս,  
 կեղեւէն գուրս կրաքարի կարծրութեան,  
 քակէ՛  
 քակէ՛  
 քակէ՛ կապերը լեզուին... :

ՊԵՏԻՆՆԱՆ



Գ. Ա Ճ Ե Մ Ե Ա Ն

Ք Ա Ն Ի՞ Տ Ա Ր Ի, Ք Ա Ն Ի՞ Կ Ե Ա Ն Ք

Ընտանիքը ամբողջ հաւաքուած էր երկրորդ կարգի պանդոկի մը մէջ: Կահաւորուած փոքր յարկարածիներ էին աւելի, քան թէ սենեակներ, զորս կը տրամադրէին միայն այն յաճախորդներուն, որոնք ամբողջ կը վարձէին այս յարկարածիները եւ երբեմն ամիսներ կը բնակէին հոն:

Կարապետեանները սակայն այս առաւօա հասած էին Գամասկոս, եւ առանց ժամանակ կորսնցնելու դատած էին պանդոկը, ինչպէս նաեւ իրենց անդրանիկ դաւակն ու երէց եղբայրը, Հրաչը, որ հաստատուած էր հոս ամիսներէ ի վեր: Հրաչ իր ազատ կամքով Գամասկոս չէր եկած անշուշտ, այլ՝ Պէյրուսի փախտական, ապաստան գտած էր հոս առժամեայ կերպով:

Սւ ախոր, չորս ամսուան ընթացքին առաջին անգամ ըլլալով, ընտանիքը լման կազմով — վեց անձ — կը հանդիպէր նոյն յարկին տակ ու, մուգած իրենց մտահոգութիւններն ու զժբախտութիւնը, կ'աղբէին հին օրերէն մէկը: Տխրելու կամ լալու ամէն պատճառ ունէին, բայց կը խնդային միայն հիմա ու կը կատակէին:

— Հայրիկ, մերժելու իրաւունք չունիս, — կը միջամտէ ի վերջոյ Սոսի, որ քսանչորս տարեկանին ընտանիքին երիցադոյն եւ հեղինակաւոր անձը կը նկատուի բոլորին կողմէ անխտիր: Լուրջ, ներկայանալի, հաւասարակշիռ եւ ինքնավստահ աղջիկ մըն է Սոսի, որ համալարարանաւարտ արդէն, երկու տարիէ ի վեր կը պաշտօնավարէ Պէյրուսի տեւտարական մեծ հաստատութիւններէն մէկուն մէջ:

— Զիս ձեռք առնելու բերիք հոս, թէ այս փորձանքը խերով-բարով ճաճբայ դնելու, — կ'անկարկէ հայրերին, Վահան Կարապետեան, գլխու ջղային շարժումով ցոյց տալով Հրաչը:

— Գամասկոս գալու անգամ մըն ալ ե՞րբ առիթ կ'ունենանք, — կը պնդէ կինը, որուն ներկայացուցած առաջարկը պատճառ եղած է այս վէճին:

— Անանիան հա՞յ սուրբ մըն է, թէ օտար, — կը հարցնէ Հրաչ զուարճացած:

— Ի՛նչ կարեւորութիւն ունի, — կ'ըսէ տիկին Վարսենիկ, մայրերին, — լուսահողի մեծ ժօրդ փախաքն է, ուխտը: Իր հարազատ մայրը ուխտած էր զինք Սուրբ Անանիայի եկեղեցին տանել եւ մոմ վառել, եթէ այդ աղջիկէն ազատէր: Սա ի՛նչ ունիմ ասոր մէջ:

— Լուսահողի մայրս քեզ փոխանորդ չկարգեց գլխուս: Ինձմէ դաս զբաղելիք բան մը չունի՞ք: Գոնէ ծերացած ըլլայի՞ր...:

Սւ, իսկապէս, յիսուն տարեկանին Վահան Կարապետեան առողջ, հուսկու եւ զարմանալիօրէն երիտասարդ մարդ մըն է, եւ նոյնքան դեղադէմ՝ որքան Հրաչն ու Վահէն:

— Մօրդ ուխտը չես կրնար ստնակոխ ընել, — կ'ըսէ այս վերջինը, որ քսան տարեկանին՝ չօրը հպարտութիւնն է, ուրախութիւնը:

— Գո՞ւն ալ, Գոնէ դո՞ւն դիս պաշտպանէ:

— Գիտէ՞ք ինչ, — կը խօսի Հրաչ ամենայն լրջութեամբ, — Իրականութեան մէջ պէտք է տիկին Սանդուխտին այցելութիւն մը տանք ուխտը կատարելէ ետք:

— Լակոտներուն նայէ՛: Մօ՛, ես ձեր խաղալի՞քն եմ:

— Ո՛վ գիտէ, մարելիք կու գայ վրան, — կը ժպտի կիներ շարութեամբ:

— Մինչեւ այսօր կը նախանձիս դեռ, հա՞՞:

— Վա՛յ, իր ինչի՞ն պիտի նախանձիմ: Նախանձիք բան մը ըլլար, լուսահոգի մայրը դէմ չէր ըլլար արդէն: Ինչե՛ր չըրաւ՝ քեզ ձեռք ձգելու համար:

— Խե՛ղճը, — Վահան Կարապետեան ինք կը սկսի զուարճանալ, եւ ուշի ուշով կը դիտէ կիներ:

— Արժանի պատիժը դտաւ, — տիկին Վարդենիկ կը ժպտի տակաւին, բայց ակնհերեւ կերպով ըզային է: — Մայրդ իրաւունք չունէ՞ր: Նշանուած աղջիկ մը ուրիշ երիտասարդներու հասէն վազելու ի՞նչ իրաւունք ունի:

— Իրաւունք: Աղջիկը ձեռքով-ոտքով սիրահարուած էր: Նշանուած ըլլալը ի՞նչ մտաւ ասոր մէջ:

— Եւ դուն ալ առիթէն կ'օգտուէիր:

— Ես յանցանք չունէի ասոր մէջ:

— Գիտե՞մ, գիտե՛մ, — ձեռքով անցեալ յուզումներ կը վանէ Թերեւս կիներ, — այր մարդիկ բոլոր նոյնն են:

Այս միջոցին դրան շեմին կը յայտնուի շէկ, սլացիկ հասակով եւ աղաղակով իրականութեամբ աղջիկ մը, որ պահ մը կը քննէ ներկաները իր խոշոր, դրաւիչ անջերով, կը ծեփծեփի, կը ժպտի եւ, ի վերջոյ, կը յառաջանայ ու կը համարուի Հրաչը այտերէն: Ապա կը դառնայ միւսներուն, քաղաքավարութեամբ կը քարեւէ, ու մինչ կը տեղաւորուի Հրաչի կողքին, մահճակալին վրայ, հարց կու տայ անոր, կնոջական ամբողջ քաղցրութիւնը դէնելով ձայնին մէջ.

— Մո՞ղք է:

— Այս կապիկը ո՞վ է, — կը հարցնէ Վահան Կարապետեան, երբ կ'անդադարանայ, որ աղջիկը անպիտան կը խօսի:

— Ընկերուհիս:

— Ընկերուհի՞ք, — կը շփոթի հայրը պահ մը, — բարեկամուհիդ ըսելի կ'ուզես: Կը շնորհաւորեմ: Ճաշակաւոր ես եղեր, եւ ժամանակ ալ չես կորսնցներ: Ուրի՞շ դտար:

— Ինք գիտաւ, — Հրաչ կը փորձէ ինքզինք արդարացնել:

— Սուրիոյ մէջ այս տեսակ ապրանքներ կա՞ն եղեր տակաւին: Ի՞նչ աշխարհ է: Սրկիւրը ինչերէ անցաւ, երեսուն տարուան մէջ ի՞նչ տակնուվրայութիւններ եղան, բայց իրականութեան մէջ բան չէ փոխուած: Պետական հարուածները, ընկերվարութիւն, աղաքանակներ, օտարներու դէմ պայքար... բոլոր պարտաւ բաներ են եղեր:

— Ուրիշ ժամանակ չգտա՞ւ դաշու, — կը դանդաղ տիկին Վարդենիկ, թէեւ հմայուած աչքերը չի կրնար հեռացնել անզուհիէն:

— Գիտէ, թէ վաղը կը մեկնիմ: Շատ լաւ աղջիկ է. թէեւ պարուհի, բայց շատ պատուաւոր աղջիկ է եւ խնթի պէս կապուած է ինծի:

— Ուրախ եմ, որ կը մեկնիս ուրեմն, — կ'ըսէ մայրը: — Ասոնց պատուաւորը կ'ըլլայ: Քեզի պէտ միամիտ երիտասարդներու համար...:

— Մի մտահոգուիր, — կ'ընդմիջէ Հրաչ ներողամտութեամբ, — տըղաղ այդքան ալ ապուշ չէ: Իրեն ամէն ինչ յստակացուցած եմ, եւ ինքն ալ

ակնկալութիւն չունի արդէն: Ասոնք մեզի պէս չեն մտածեր:

— Դուն ալ այդպէս կարծէ: Եթէ ձեռքէն դայ, քեզ հում-հում կը կլլէ, վի՛րջ ալ կը բերէ:

— Բայց կը մեկնիմ արդէն, չէ՞: Մասհողուելու պէտք չունիս:

— Բարեբախտաբար: Թէ ոչ...:

— Լա՛ւ, դուք սա ձեր եկեղեցին դացէք մինչեւ որ ես զործերս կարգի դնեմ: Երկու ժամ ետք հոս կը հանդիպինք վերստին եւ ամբողջ օրը միտքին կ'անցընենք:

— Դեռ կ'ուզես, որ խօսքերուդ հաւատամ, — յուզուած կը աստէ մայրը: — Ինք եկաւ ըսելով, վայրկեան առաջ կ'ուզես մեզմէ ազատիլ:

— Հետերնիշ տարէք դինք: Հանոյթով կ'ընկերակցի ձեզի:

Ու դառնալով Սիւզանին, կոտորուած անդէրէնով կը բացատրէ անոր կացութիւնը: Բայց չի ինդրեր, չ'աղերսեր, եւ ոչ ալ կը փորձէ համոզել, ալլ կը հրահանգէ պարզօրէն:

— Օ՛հ, սքանչելի դաղափար է, — կը խանդավառուի Սիւզան, կը փաթթուի Հրաչին երախտագիտութեամբ ու կը կանգնի ոտքի: — Come on, շարժինք: Գոյրերդ անդերէն կը խօսի՞ն, — կը հարցնէ յանկարծ, եւ երբ հաստատական պատասխան կը ստանայ, Սօսիին հետ թեւանցուկ կ'առաջնորդէ խումբը դէպի դուրս:

— Հիմա ուխտի երթալը բան մը արժեց, — խորհրդաւոր կերպով կը ժպտի Վահան Կարապետեան ու կը հետեւի ընտանիքի անդամներուն:

— Աղջիկը խելքէ չհանես, — կը կատակէ որդին:

\*\*\*

346.2001

Հրաչ Կարապետեան փոխանակ առկախ մնացած կարգադրութիւնները ընելու, կը պառկի անկողինին վրայ եւ անգիտակցաբար երկրորդ սիկարէթ մը կը վառէ, մինչ առաջինը կը միայ մոխրամանին մէջը: Ձորս ամիսէ ի վեր միս'ն կըրցած է պառկիլ այսպէս ու մտածել: Ո՛չ աշխատած է, եւ ոչ ալ ուզած է դուրս դալ սենեակէն: Վա՛հէն նոյնիսկ, անդրադառնալով, որ եղբայրը մենամուկ դարձած է յանկարծ, կարելի եղած չափով փորձած է չխանդարել զինք, եւ ժամանակին մեծ մասը անցուցած է դուրսը, սրճարաններու մէջը: Քանի մը անգամ միայն յաջողած է դուրս հանել զինք, ծանօթանալէ ետք Հիւսէյնին, որուն պատահամբ հանդիպած է սրճարանի մը մէջ եւ մըտերմացած: Հիւսէյն, իրեն տարեկից դամազուցի երիտասարդ մը, եղբօր մը պէ սիրած է զինք, հակառակ անոր, որ ունի հինգ եղբայր եւ չորս քոյր, որոնցմէ երկուքը ամուսնացած են արդէն:

Մինչեւ այսօր, մինչեւ այս պահը տակաւին, Հրաչ երկուութիւն մը կ'ապրի: Գիտէ, թէ իր կեանքի իսկազան իրակամութիւնը այս է ներկայիս — անհանկարգէն յեղաշրջուած մէկ օրէն միւսը — եւ թէ կեանքը փոփոխուած է յանկարծ իրեն համար: Բայց նաեւ ինք իր նստիկին անձն է տակաւին եւ ամէն մարդու պէս կ'ապրի բնական առօրեայ մը՝ իրեն ծանօթ եւ հարազատ աշխարհի մը մէջ: Ու յաճախ կը մոռնայ, թէ փախուտական է եւ առանձին, անտէր եւ անապահով՝ օտար քաղաքի մը մէջ: Մինչեւ որ իր ներկայ կացութեան տարողութիւնը խոտովէ դարձեալ գիտակցութիւնը եւ վերադարձնէ զինք սահմանեցուցիչ իրականութեան:

Ճի՛շդ է, որսւած է հետանալ այս երկիրներէն, եւ վաղն իսկ կը մեկնի դէպի Յունաստան, ուր վստահաբար պիտի կարենայ նաեւ մը վրայ աշխատել:

ԱՐՄԱՐԻ  
1990

տիլ դարձեալ: Ու հոնկէ՝ մինչեւ հեռաւոր ափերը ծովերուն եւ ովկիանոսներուն: Սակայն մինչեւ ե՛րբ: Քանի՞ տարի, քանի՞ կեանք: Որովհետեւ գիտէ, թէ երբեք պիտի չկարենայ վերադառնալ Պէյրութ, որ թէեւ քարուքանդ վիճակի մէջ, իր ծննդավայրն է սակայն, իր քաղաքը — աշխարհի վրայ միակ հարազատ վայրը իրեն համար:

Վերջին երեք տրիներու ընթացքին, ամէն անգամ, որ վտանգուած են Պէյրութի հայկական թաղամասերը, գիտակից պատասխանատուութեամբ առաջին գիծի վրայ գտնուած է միշտ ու մասնակցած պաշտպանութեան բոլոր կոնիւներուն: Թէ այդ միջոցին իր արձակած դնդակները երիտասարդ կեանքեր խլած են կամ ոչ՝ չի գիտեր: Ձէ ուզած գիտնալ, բայց նաեւ խղճահարութեան հարց չէ ունեցած երբեք, որովհետեւ ճակատամարտի մը ընթացքին մարդասպանութիւնը՝ ոճիր մը գործած ըլլալու անդրադարձը չի ստեղծեր մէջդ: Հոն՝ կատարածդ պարզօրէն չսպաննուելու ճիգ է, աշխատանք, որ կրնայ գոհունակութիւն պատճառել նոյնիսկ:

Ներկայիս, սակայն, տարբեր հոգեվիճակի մէջ է, թէեւ խղճահարութեան դրացումէ չէ, որ կը տառապի, այլ՝ անիրաւուած եւ անզօր ըլլալու գիտակցութենէն: Անխմաստ, յիմար վէճի մը պատճառով, եւ ստիպուած, կրակած էր զգուելի այդ երիտասարդին վրայ, որ տեղւոյն վրայ անչնչացած էր: Ինք նոյնիսկ զարմացած էր եւ չէր ուզած հաւատալ, թէ մեռած էր տղան: Պահ մը առաջ միայն, հագիւ քանի մը վայրկեան առաջ, յոխորտալով եւ սպաննալով քաշած էր ատրճանկը եւ սկսած էր կրակել ուղղակի՝ առանց բացատրութեան սպասելու: Նախ շփոթի մատնուած, ինք չէր կրցած որոշել, թէ ի՛նչ պէտք է ընէր: Պատահաբար կ'անցնէր Պուրճ Համուտի այդ փողոցէն, ուր ո՛չ ծանօթներ ունէր եւ ոչ ալ պայտպանուելու հնարաւորութիւն: Անթաքարի մը մէջ փողոցը ամայացած էր ու նկատած էր, որ մնացած էր բոլորովին առանձին եւ անտէր՝ հայկական այս շրջանին մէջ: Առանձնութեան այդ դրացումն էր աւելի, որ գինք հասցուցած էր ճարահատութեան, ու խուճապի մատնուած, առանց մտածելու կամ դատելու այլեւս, վերցուցած էր ատրճանակը ինքնաշարժի դարակէն եւ ուղղած էր զայն երիտասարդին ճիշդ կուրծքին: Բլթակը քաշած ատեն գիտէր, թէ իր արձակելիք փամփուռները չէին կրնար վրիպիլ, որովհետեւ դիմացինը, իր տնայարանքին մէջ եւ աւելի ազատ կտրենալ շարժելու համար, դուրս եկած էր ինքնաշարժէն եւ ամբողջ մարմինը թիրախ դարձուցած իրեն: Չինավարժութեան ժամանակ նշանառութեան իր նախընտրած փորձը եղած էր գնդակները ուղղել տուեալ մարմնի մը ճիշդ կեդրոնին, եւ այդ կերպով յաջողած էր միւտ գընդակները անվերջ հասցնել թիրախին: Այս գիտակցութիւնը ինքնավստահութիւն ներշնչած էր իրեն, եւ ամենայն հանդարտութեամբ գործադրած էր անխուսափելիին: Ինքնապաշտպանութիւնը ընադդային եւ տրամաբանական միակ անդրադարձն էր այդ պահուն, եւ ուրեմն չէր կրնար, եւ ժամանակ չունէր, որեւէ այլ հնարամտութեան դիմելու: Երկվայրկեաններու տատամտում մը նոյնիսկ կրնար կեանքը վտանգել:

Սակայն արդիւնքը եւ պատահածին տարողութիւնը շփոթուցած էին գինք՝ առաջին իսկ վայրկեանէն: Այնքան արագ կատարուած էր ամէն ինչ, որ իրականութեան հետ կապը կորսնցուցած էր պահ մը եւ անձնատուր եղած գինք ընդելուզող անդալտութեան: Տեսակ մը թմբութիւն էր կամ անդիտակցութեան վիճակ: Տղուն արիւնլուայ մարմինն ու սարսփահար դէմքը տեսած էր ու ցնցուած էր նոյնիսկ, բայց ինք չկար այս ամբողջին մէջ, չէր կրնար ըլլալ: Երկրորդ անձ մըն էր, որ ահանատես կ'ըլլար անկարելի, երեւակայական տեսարաններով: Գրեթէ անշարժ մնացած



կը զարձնէր զինք անհանդուրժող եւ ջգային: Թէեւ հասարակ պարուհի մը, անկեղծօրէն կը սիրէր զինք սակայն եւ կը զարմացնէր բոլորը այդ իսկ պատճառով: Պարուհիէ մը անկեղծութիւն, սէր եւ հաւատարմութիւն չ'ակնկալուիր, ինքն ալ գիտէր այսքանը, բայց Սիւզանի վերաբերմունքը ցարդ ընդունուած այս համոզումը խախտած էր: Թէ ինչպէս կրնար իրեն պէս խոնարհ արհեստաւոր մը սիրել՝ հանելուկ մըն էր անշուշտ, թէեւ ինք կը մտար անտարբեր եւ չէր իսկ մտածեր այդ մասին: Կհանքի մէջ ամէն ինչ կը պատահէ, եւ այս կարգի սէր մըն ալ կարելի է ըստ երեւոյթին: Եւ ինչո՞ւ չէ: Ինք դժգոհ չէր յամենայնդէպս, եւ սկսած էր նոյնիսկ վարժուիլ անոր եւ տխրօրէն ներկայութիւնէն: Տարօրինակ աղջիկ մըն էր՝ դուարթ բայց տխուր, անմիջական եւ միամիտ: Եւ այս անմիջականութեամբ ալ սկսած էր իրենց յարաբերութիւնը:

— Հրա՛ն է խօսողը, — խօսած էր վաղեմի բարեկամի մը պէս, երբ հեռաձայնած էր իրեն այդ առաւօտ, մօտ երկու ամիս առաջ:

Հիւսէյնը եւ Վահէն քաշկուտելով Բաղարէ տարած էին զինք նախորդ գիշեր, ու լուսաղէմին հողիւ պանդուկ վերադարձած, երբ կը պատրաստուէր անկողին մտնելու, հնչած էր հեռաձայնը.

— Ես Հրա՛ն եմ, այո՛, — պատասխանած էր դժգոհութեամբ. — բայց դուն ո՛վ ես:

— Սիւզանը: Ձճանչցա՞ր: Քիչ առաջ միասին էինք:

— Անշուշտ: Հեռաձայնիս թիւը ուրիշ՞...:

— Հիւսէյնէն առի, — առիթ չէր տուած, սր նախադասութիւնը ամբողջացնէ:

— Լա՛ւ, ինչո՞ւ կը հեռաձայնես, ի՛նչ է հարցը:

— Կ'ուզեմ քեզ տեսնել:

— Ի՞նչ կայ. բա՛ն մը պատահեցաւ:

— Ոչ, ո՛չ:

— Ի՞նչ է ուրեմն:

— Կ'ուզեմ քեզ տեսնել, հետդ ըլլալ:

— Կէս ժամ լանցաւ դեռ, — զարմացած էր Հրա՛ն. — քիչ առաջ ինչո՞ւ չըսիր:

— Ձէի դիտեր: Երթալէդ հոգ զգացի, որ...:

— Յետոյ: Հիմա ոտքի կենալու կարողութիւն չունիմ, եւ նստած տեղս կը քնանամ արդէն:

— Կը խոստանա՞ս, — չէր վերաւորուած աղջիկը. — Ե՞րբ հեռաձայնես:

— Կէսօրէ հաք:

— Լաւ ուրեմն: Խոստումդ չ'մոռնաս:

— Ի՛նչ խոստում:

— Պիտի տեսնեմ քեզ, չէ՞:

— Անպայման, — ընկալուչը հեռացուցած էր ականջէն: — Խե՛նթ է, ինչ է աղջիկը. կամ թերեւ՝ գինով, — մտածած էր յետոյ եւ եզրակացուցած, — հիմա դուն ալ քնացիր:

Երեկոյեան, երբ հանդիպած էին, ըսած էր իրեն.

— Առաջին անգամն է, իմ փորձառութեանս մէջ, որ երիտասարդ մը չի փորձեր առիթէն օգտուիլ:

— Ինչի՛ մասին կը խօսիս, — հետաքրքրուած էր ինք, — ի՛նչ երիտասարդ, ի՛նչ առիթ:

— Դուն: Երէկ գիշեր, քապարէին մէջ, Ինծի զտնալու փորձ նոյնիսկ

լըբիբ: Մինչդեռ ուրիշ երիտասարդներ... զգուսիք է:

— Փորձառութեան հարց է: Ձեի դիտեր: Եթէ գիտնայի, թերեւս փորձ  
մը ընէի:

— Կը կասկածիմ:

— Ձիւն չես ճանչնար, — խնդացած էր Հրաչ, — այնպէս որ՝ շատ մըս-  
տան մի ըլլար:

— Մարդը իր վարձունքէն կը ճանչցուի: Ինչ կ'ուզես ըսէ, ես քեզ են-  
թադրածէդ շատ աւելի լաւ ճանչցած եմ արդէն:

— Այսի՞նքն:

— Ատոր համար ուզեցի քեզ տեսնել:

— Նայէ՛, ես ո՛չ ժամանակ ունիմ, ո՛չ դրամ, եւ ոչ ալ դործ: Այն-  
պէս որ...:

— Աւելի լաւ, խանդավառուած էր Սիւզան, — դրամ չունենալդ առա-  
ւելութիւն մըն է, որովհետեւ դրամ ունեցողները կը փորձեն մեզ գնել: Իսկ  
ժամանակի հարցը... քանի անգործ ես, ժամանակ պէտք է ունենաս:

— Անգործ մնալու նպատակ չունիմ:

— Բարեբախտաբար: Ատիկա արդեւք մը չէ սակայն, որ բարեկամներ  
ըլլանք:

— Անշուշտ, անշուշտ, բայց իմ ըսածս տարբեր բան է: Ես պէտք է  
աշխատիմ. պատասխանատուութիւններ ունիմ, պարտաւորութիւններ, Ծը-  
նողք... ժամանակ չունիմ: Ինչպէ՞ս բացատրեմ:

— Իսկպէս երեխայ ես եղեր, — ժպտած էր աղջիկը, — ոչ մէկ ակըն-  
կալութիւն ունիմ: Քեզ հաւանցայ, սիրեցի, այդքան: Եւ կ'ուզեմ տեսնել քեզ  
իրեմն:

Եւ այսպէս՝ օրերով: Մտերմացած էին յետոյ, եւ ամէն օր քիչ մը ա-  
ւելի զտրմացուցած էր զինք անգլիացի պարուհին: Այլ խօսքով՝ հաստատած  
էր, թէ բող մը չէր Սիւզան, այլ՝ պարզօրէն պարուհի մը: Թերեւս՝ օտա-  
րութեան մէջ տուանմին, վախցած աղջիկ մը, որ վստահելի բարեկամի մը  
պէտք ունէր:

Այս ամբողջը երազ կը թուէր հիմա, անկարելի, խարուսիկ երազ մը:  
Յաջորդ օրը կը մեկնէր, բայց չէր գիտեր, թէ իրեն ինչ կը պատահէր, կամ  
ինչ կ'ընէր: Պէտք է երթար, այո՛, հեռանար, կորսուէր: Այսքանը գիտէր,  
կը հասկնար, սակայն չէր ուզեր մեկնիլ: Վստահ էր, թէ օտարութեան մէջ  
պիտի տառապէր դարձեալ եւ մաշէր: Հինգ տարի առաջ, երիտասարդական  
ցնորքներէ տարուած, ու ծնողացը կամքին հակառակ, բեռնատար նաւու մը  
միջոց գործ ապահոված էր ու շրջած երկրէ երկիր՝ լման երկու տարի: Այդ  
չըջանին է, որ հասունցած էր, կարծրացած, բայց նաեւ օտրված էր հեզ եւ  
խոնարհ ըլլալ եւ գնահատել ընտանեկան կեանքի անփոխարինելի ջերմու-  
թիւնը:

Իսկ հիմա յանկարծ՝ կը գտնէր ինքզինք դժոխային այդ կեանքը վե-  
րապրելու հարկադրանքին տակ: Գաղափարն իսկ կը տանջէր զինք, կը զա-  
րացնէր: Ինք թերեւս առկար, բայց Վահէ՞ն: Ինչ պիտի ընէր, ուր պիտի  
մնար: Դամասկո՞ս: Մինչեւ ե՞րբ: Քանի մը ամսուան մէջ փոխուած էր ար-  
դէն եւ դարձած անճանաչելի, մեկամողձոտ սղայ մը, հակառակ անոր, որ  
Հիւսէյնի ծնողքը իրենց հարազատ գաւկիտ պէս կը սիրէին զինք ու կը գուր-  
գուրային իր մրայ: Բայց ապարդիւն: Տղան դառնացած էր, զէնտուած, եւ  
ինքզինք կը պատժէր՝ գիշեր-ցերեկ փողոցները սլաքալով:

Յանկարծ նստեցաւ անկողինի վրայ եւ, անդառնալի որոշում մը առած  
մարդու վճռականութեամբ՝ սկսաւ պատրաստել պայուսակները: Հիմա ա-

ւելի հանգիստ էր, աւելի խաղաղ, ու նոյնիսկ՝ դու, զուարթ։ Որոշած էր։  
 Պէտք ուրիշ վերադառնալ։ Կը մերժէր կեանքը ամբողջ փախստական ապ-  
 րիւ եւ այդ կերպով զոհարում տալ իրենց։ Կենդանի մեռեալ մը նոյնն էր  
 վերջին հաշուով։ Զինք ձեռով մը սպաննած պիտի ըլլային, պիտի փնայնէին,  
 եւ կատարուած պիտի ըլլար իրենց կամքը։ Իսկական մահը նախընտրելի էր.  
 եթէ իրեն վիճակուած էր մեռնիլ, ոչինչ կրնար ընել։ Մահը անխուսափելի  
 է, եւ երբ մահը հասնի, պարտորէն կը մեռնիս՝ որքան ալ փորձես փախուստ  
 տալ անկէ։ Իսկ եթէ մամուլ չէ հասած, անձնասպանութիւնն ինք ապարդիւն  
 է։ Կը մնաս ողջ։

Ուրե՞մն։ Ինչո՞ւ խուճապահար այս փախուստը։ Նկատելով մա՛նա-  
 ւանդ՝ որ անմեղ էր եւ հետեւաբար պէտք չէ գործադրէր իրեն պէ՛մ արձակ-  
 ւած անարդար վճիռը։ Եթէ հեռանար, ընդունած պիտի ըլլար իրենց վճիռը,  
 եւ ինք իսկ պիտի գործադրէր զայն։ Վատութիւն պիտի ըլլար։ Ինք վաս  
 չէր սահայն։

Մնողքին իմացելու պէտք չունէր։ Տուն պիտի չկարենայր երթալ ար-  
 դէն, եւ ուրեմն նախընտրելի էր չվերդովել անոնց խաղաղութիւնը եւ անտե-  
 ղի կերպով մտատանջել զիրենք։ Թող իրենք վերադառնային Պէյրուսը՝ այն  
 համոզումով, որ վաղը ինք կը մեկնի։ Ժամանակի ընթացքին, յետոյ, կը  
 հաշտուին դադարաբին հետ։

\*

Երեկոյեան, ծնողքը ճամբելէ ետք, Սիւզանին հետ կը վերադառնայ  
 պանդուկ՝ անտրամադիր եւ շղային։ Այն գիտակցութիւնը, թէ խաբած է զի-  
 րենք ու դադարաբար կը գործէ, կ'ընկճէ զինք։

— Ի՛նչ է, տրամադրութիւնդ փոխուեցաւ յանկարծ, — կը խօսի աչ-  
 ջիկը, ինք եւս ընկճուած։

— Կեանքիս մէջ մարդ չեմ կրցած խաբել։

— Ի՛նչ ըսել կ'ուզես։

— Յունաստան պիտի չերթամ վաղը, — կ'ըսէ Հրաչ, — վերջացաւ։

— Աւելի լաւ։ Ուրախ եմ, որ դուն որոշեցիր։ Սքանչելի է։ Որքան  
 փորձեցի քեզ համոզել ակիդրը...

— Պէյրուս պիտի վերադառնամ։

— You're crazy, — կը բացազանչէ Սիւզան, անակնկալի եկած։

— Խենթութիւն է, բացարձակ խենթութիւն։ Ի՛նչ փաստելու համար։

— Իմատտ չունի։ Կեանքս ամբողջ չեմ կրնար պահուելու, չեմ ուզեր։

— Եթէ կը կարծես, որ քաջութիւն է ըրածդ, կը սխալիս։ Երիտասար-  
 դական ունայնամտութիւն է պարզապէս։ Ոճիր է։

— Ոճրագործ եմ ի վերջոյ, չէ՞։

— Տղայական խօսքերու պէտք չկայ, ի սէր Ատուծոյ։

— Իրականութիւնները պէտք է ընդունիլ, — հանդարտորէն եւ համո-  
 ղումով կը խօսի Հրաչ, — եթէ յանցաւոր եմ, պէտք է արժանի պատիժս ըս-  
 տանամ։ Իսկ եթէ...

— Կեանքի շատ միամիտ, երեխայական ըմբռնում է ասիկա, — կ'ընդ-  
 վզի աղջիկը, — մարդկային կեանքը երկնային արդարութեան վրա՞յ հիմնը-  
 ւած է կը կարծես։ Մա՛նուանդ Լիբանանի պէս տեղ մը, ուր ո՛չ օրէնք կայ,  
 ոչ ալ իշխանութիւն ներկայիս։

— Որոշած եմ։

— Բայց իրաւունք չունիս։ Եթէ դուն քեզ նկատի չունիս, ծնողքիդ



մասին մտածէ գէթ, քեզ սիրողներուն մասին: Մքանչելի ծնողներ ունիս, ի միջի այլոց, եւ հրեշտակի պէս քոյրեր: — Կը լուէ պահ մը Միւզան, կը մտմտայ եւ ի վերջոյ կը շարունակէ: — միասին Անպիտ կ'երթանք: Ամէն ինչ կը կարգադրուի, վստահ եղիր. անդիտական հպատակ դառնալու իրաւունք կ'ունենաս, եթէ ամուսնանանք:

- Ամուսնութեան առջաջող, — կը ժպտի Հրայ:
  - Գիտեմ, գիտեմ: Հայերդ օտար ազնիկ չէք առնէր, յաճախ կըրկնած ես: Բայց եւ այնպէս գիտես, թէ կը սիրեմ քեզ, եւ կ'ուզեմ հետդ ամուսնանալ, ինչո՞ւ չէ:
  - Բայց ես անպիտացի չեմ:
  - Մէրը ազգային սահմաններ չի ճանչնար: Ես ալ հայ չեմ: Ի՞նչ կը փոխուի կացութենէն:
  - Ձեր ըմբռնումով ճիշդ է: Եւ իրաւունք ունիս թերեւս. կարիւրը մարդն է այս տեսակ պարագայի մը, եւ ոչ թէ անոր ազգութիւնը: Բայց երջանիկ չենք կրնար ըլլալ, անկարելի է: Ձախող ամուսնութիւն մը կ'ըլլայ:
  - Պատճա՞ռ:
  - Մեր մտայնութիւնները տարբեր են, — լրջօրէն կը տրամարանէ Հրայ, մղրտած՝ Միւզանը համոզելու անկեղծ փափաքէ մը. — որքան ալ սիրես զիս, բազմաթիւ հարցերու մէջ պիտի չկարենանք համաձայնիլ երբեք:
  - Ինչո՞ւ:
  - Որովհետեւ ես հայ եմ, եւ դուն՝ անպիտացի, — կ'եզրակացնէ Հրայ, խօսակցութիւնը շարունակելը անխառն նկատելով. — անկարելի է, որ զիրար հասկնանք:
  - Մինչեւ հիմա զիրար հասկցած ենք սակայն, — կը վիճի ազնիկը, — եւ ոչ մէկ վէճ ունեցած ենք, ո՛չ իսկ տարակարծութիւն:
  - Գիտեմ, կ'ընդունիմ: Եւ պէտք է խոստովանիմ, որ զարմացուցած ես զիս: Բայց ամուսնութեան պարագային տարբեր կ'ըլլայ... դուն հայը չես ճանչնար, չես կրնար ճանչցած ըլլալ: Մտայնութիւններու եւ բարձրութեան տարբերութիւնները պէտք չէ անտեսել, կարելի չէ:
  - Բայց քեզ կը սիրեմ եւ պատրաստ եմ ամէն զոհողութիւն ընելու: Ուզածիդ պէս հայ կ'իմ կ'ըլլամ, տանտիկին. կերակուր կ'իփեմ, հայերէն կը սորվիմ:
  - Կը հաւատամ, կրնաս ընել: Հոյակապ ազնիկ ես, Միւզան, մա՜նաւանդ նկատելով անպիտացի ըլլալդ: Այս բոլորը շատ բարի. գիտեմ, կ'ընդունիմ ու կը դնահատեմ: Կրնամ ինքզինքս բախտաւոր համարել նոյնիսկ եւ այլ պայմաններու մէջ՝ շատ բնականօրէն պիտի ուզէի ամուսնանալ հետդ: Սակայն հիմա պատրաստ չեմ: Ոչ թէ պատրաստ, կեանքիս այս հանդրուանին ընդունելին տարբեր մարդ մըն եմ, տարբեր աշխարհի մէջ: Պէտք է առնեմ այս քայլը, որոշումս գործադրեմ, թէ ոչ... ո՞վ եմ ես, ի՞նչ կ'ընեմ, ինչո՞ւ կ'ապրիմ: Հիմա չեմ գիտեր, ուղղութիւնս կորսնցուցած եմ ու չեմ կրնար իմաստ գտնել կեանքիս մէջ, ամէն ինչ պզտոր է, անորոշ: Պէտք է ինքզինքս փրկեմ, նախկին անձս ըլլամ վերստին: Կը խնդրեմ, որ հասկնաս զիս. ո՛չ միայն հասկնաս, այլեւ՝ օգնես:
  - Միւզան արտութեամբ, թերեւս հմայուած, կը գիտէ սիրած տղան, կը փաթթուի անոր ու կը հեկեկայ:
  - Կը խորհիմ, որ կը հասկնամ: Աստուած իմ, ի՞նչ պիտի ընեմ:

ԳԵՌՐԳ ԱՃԵՄԵԱՆ

Պէյրաբ, Յունիս 1980

## ԲԱԶԿԵՐԱԿԴ՝ ԿԵԱՆՔԻԴ ԴԵՄ...

Փոխանակ ամեն օր,  
Գիտակցելով թե առանց զիտակցելու,  
Օրերուդ միջին դրամագլուխը դանդաղօրէն նուազեցնելու,  
Համրելով գացածը,

Գացողը,

Մնացողը,

Կամ՝ ձեռնածալ սպասելու,

Որ պատահի

Չսպասուածը,

Սպասածը,

Փոխանակ գերին դառնալու

Վայրկեաններում,

ժամերում,

Օրերում,

Կեանքիդ,

Հակասազգիք կոչուածին,

Որո՞նք իբրեւ շնորհիք

Տրուած են քեզի, բայց,

հորքին մէջ,

Դժոխք մըն են Դժոխքէն մեծ,

Եւ, ի վերջոյ,

Փոխանակ դառնալու անշունչ ապրող,

Մարմին փնտռող դիմակ,

Դիմակ փնտռող դիակ,

Եթէ կ'ուզես,

Եթէ կրնաս,

Վե՛րջ տուր

Ամենօրեայ չարչարանքիդ,

Աւօրեայ հաշուապահութեան,

— Հաշուեփակի օր է —

Վերագտի՛ր նախաօրդ ուժը,

Կամքը,

Վե՞տակաւորութիւնը,

Կտրէ՛ր քաղկերակներէդ մէկը,

Եւ ինքնատեղծումի,

Առանց սահմանի,

Առանց պայմանի

Ժայթփելու ազատութիւն տուր արեանդ,

Տուր այն, զոր չունեցար դուն ընտ,

Եւ մի՛ նախանձիր անոր ազատութեան...

Այլ լուռ, հանդարտ դիտել  
ժայթքումն անոր յարգառատ,  
Ու այդպիսով,  
Վրէժ լուծել մարդկութենէն,

Դուն քեզմէ,  
Ամէն ինչէն,

Որ ստիպեց քեզի՝  
Կեղծել,  
Լռել,  
Ընդունիլ,  
Միայն լսել,  
Համբերել...

Յետոյ,

Գոնէ մէ՛կ անգամ,  
Քո՛ւ եւ միա՛յն քու կամֆդ  
Դուն քու վրայ,  
Առանց կատարակի գործադրած ըլլալու

Գոհունակութեամբ,

Անվտիտէն հաշուէ

Ձեռնուրած վայրկեաններուդ միաժամանակ սպառումը,  
Ու դիտել

Քեզի տրուած շնորհներուն

Քո՛ւ իսկ ձեռքով վերադարձը՝  
Շնորհադին...

Ո՛չ,

Մի՛ վախճար..

Մի՛ երկմտիր.

Վրէժխնդրութեան լուսագոյն առիթն է հիմա.

Մի՛ մտածեր

Որ մարդիկ ի՛նչ կ'ըսեն, կրնան ըսել.

Գէթ մէ՛կ անգամ,

Եւ՝ ա՛յս անգամ

Մի՛ մտածեր.

Մի լսեր ա՛յ ուրիշները.

Մի՛ քաճցներ էութիւնդ.

Ուրիշին ի՛նչ,

Ինչո՛ւ կ'երբաս, ինչպէ՛ս կ'երբաս:

Մարդ այդքա՛ն ալ ազատ չէ,

Որ իր կեանքը սահմանէ,

Գէթ իր վերջը տնօրինէ

Ի՛ր իսկ ձեռքով,

Ի՛ր կամֆին պէս,

Այնքան ատեն, որ չի վնասեր ուրիշներուն...

ՇԱՀԵ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

Ն. Տ Է Ր Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ա Ն

Թ Ա Ւ Ա Լ Ո Ղ Ք Ր Ք Ի Զ Ը

— Բարեւ Ջարմիկ, — ըսաւ կինը ներս մտնելով:

— Ինչպէ՞ս ես, — հարցուց Ջարմիկ գարմանով ու խորհրդաւորութեամբ նայելով իր եին դրացուհիին դէմքին:

— Լաւ, — եղաւ Աստղիկի պատասխանը ու վայրկեան մը շուրջը դիտելէ ետք, խորունկ արտաշնչումով մը նստեցաւ:

Աստղիկ երկար մտածած էր այս հանդիպումին մասին ու յաճախ վարանած էր վնասական քայլ մը առնելու:

Այժմ երկուքն ալ լուս էին եւ միջոցը ծանրացած կը հետար:

Ջարմիկ կը դիտէր իր երբեմնի գրացուհին, որ այնքան փոխուած, զարդարուած, գեղեցկացած էր ու իր գրաւչութեամբ կը խորտակէր սենեակին լուսքիւնը: Երբեք այսպէս չէր տեսած զինք: Յիշողութեանը մէջ պատկերացաւ անոր անցեալի դէմքը, երբ տակաւին իր ճախիկին տան մէջ էր: Հոն՝ այդ տժգոյն պատերով սենեակին մէջ, ուր հին ու մաշած առարկաները իրենց խեղճութիւնը կը մատնէին: Աստղիկ մաշած զգեստի մը մէջ, խեղճ ու ոգորմելի դէմքով, օրերու ծանրութեան տակ կ'ստէ՝ յուսահատօրէն կը շրջէր: Անդին՝ Արամիկի նիւջը կը գարնուէր դալուկ պատերուն, եւ անուսինը, որ խմբիչի քաժակին շուրջ դարձող բզեզի մը տպաւորութիւնը կը ձգէր, կը նստէր անկիւնը, անգոյ տաքակայի մը նման:

— Ինչպէ՞ս է Արամիկս, — հարցուց Աստղիկ՝ յուզումը զսպելով:

— Լաւ է, — պատասխանեց Ջարմիկ՝ հալածելով Աստղիկի խուսափող հայեացքը:

Եւ բառերն ու մտքերը սկսած երբեւեռելով Աստղիկի մտապատկերին մէջ: Դէմը պատկերացաւ իր փոքր տղան, Արամիկը, տան սալաշատակին վրայ սողալու պահուն: Յիշեց ինքզինք, երբ տան պատերը նեղ զգալով՝ հետզհետէ սկսաւ նետուիլ դուրս եւ սիրելի փողոցներու պերճանքը: Որքան արհամարհանով լեցուած էր իր հոգիին այդ տան մէջ: Կ'արհամարհէր ամուսինը, որ անհոգի նայուածքներով կ'երբեւեռէր փողոցներուն մէջ, մինչ ինք, դրան հետեւ պարփակուած՝ կը սպասէր գաւարք օրուան մը ճառագայթումին, որ երբեքով կ'երկարէր ու անյոյս երազի մը պատրանքը քը ստեղծէր:

— Արամիկը յաճախ կը փնտռէ քեզ, — ըսաւ իր երբեմնի դրացուհին, Ջարմիկ, որուն հետ ժամադրուած էր այս օտար տան մէջ, Արամիկին մասին տեղեկութիւններ ստանալու:

Աստղիկ չպատասխանեց, ձերբազատուցաւ իր մտածումներէն ու, ձեռքը երկարելով՝ պայուսակէն փոքր ծրար մը հանեց ու պահեց արկերուն մէջ: Այս փոքր նուէրը բերած էր Արամիկին համար:

Տարօրինակ զգացում մը անցաւ մէջը: Արամիկը իր գաւակն էր, իրմէ բաժնուած այն մասնիկը, որ պիտի գոյտանէր միջոցին ու ժամանակին մէջ: Իսկ ինք հեռացած էր Արամիկէն, եւ օրերու թաւալումին հետ տարօրինակօրէն ինքզինք անոր կապուած ըլլալու զգացումէն կը տառապէր: Իր էութեամբ անոր կապուած ըլլալու զգայնութիւնը ընդլզնացուց զինք այժմ եւ պարուրեց հոգին թափում եւ անբացատրելի սիրով մը: Նայեցաւ

ափերուն մէջ գետնդուած ծրարի՞ն եւ յիշեց Արամիկը, որ թերեւս հիմա տենեակին մեծութեան մէջ մօր կարօտը կ'աւարտէր: Ու ծննա յանցարարի զգացումը, իր հարազատ գաւակը լքելով հեռացած անիրաւ մօր մը պատկերը նայնացաւ իրեն հետ, եւ փոքրացաւ ինք այդ պատկերին դէմ, իրականութեան դէմ ու վշտագին դիտեց ծրարը: Ընդամէնը այդ էր իր տաւրէն գաւակին, փոքր խաղալիք մը, որուն հետ ան պիտի խաղար: Եւ արդեօք պիտի խաղա՞ր, թէ պիտի նստէր զայն մէկ կողմ, ամէն անգամ, որ անոր ներկայութիւնը մօրը բացակայութիւնը պիտի յիշեցնէր:

— Ինչպէ՞ս է ամուսինդ, Վազգէնը, — հարցուց դրացուհին՝ նայելով Աստղիկի ափերուն մէջ պարփակուած ծրարին, ուր այժմ խտացած էր կնոջ ներաշխարհը:

— Լաւ է, — պատասխանեց Աստղիկ եւ մտածեց, թէ ի՞նչ գործ ունէր այդ երիտասարդը, հաս, հիմա, երբ ինք հարազատորէն իր անձին հետ էր, իր գաւակին յիշատակով վերացած, տարուբերելով սիրայ եւ արեամբահանքի զգացումներուն միջեւ: Համդիպած էր Վազգէնին օր մը, փողոցը, ուր մարդիկ յաճախ կը միանան ու կը բաժնուին: Այդ օրուրնէ սկսեալ բան մը փոխուած էր իր մէջ, սկսած էր զգալ իր շարքը թաւալող աշխարհին գրաւչութիւնը, անոր ներդաշնակութիւնը, մարդաց ժպիտներէն փոխանցուող, անոնց հայերուն հետ ծնող ու ներմուծուող: Եւ կիներ սիրած էր այդ երաժշտութիւնը, մօտեցած էր այդ օտարականին ու անոր հետ ընթացած միջեւ հեռուները, բաժնուելով տունէն, գաւակէն, ամուսինէն, յանձնաւելով այդ երկտասարդին, որ թախչեմբ ունէր իր հագիին մէջ ու իրեն հետ կը տանէր նաեւ գինի, դէպի գրաւիչ աշխարհ մը, ուր վայելէն ու երջանկութիւնը անկութեան գնայելի պահեր կը ստեղծէին: Եւ ինք կը սիրէր կեանքի այս նոր դէմքը:

«Բայց ի՞նչ մնաց ժամանակի այդ ձայնէն, եւ ո՞ր ստանցաւ այդ հմայիչ շերմութիւնը», մտածեց Աստղիկ:

Ձարմիկ գարմանով կը շարունակէր

դիտել իր դիմացը նստող կիներ: Ան այժմ արձանի մը լրջութիւնը ունէր: Տեսակ մը վեհաբարեւել կ'աւարէր իր լուսութեամբ: Ի՞նչ կը մտածէր, արդեօ՞ք գաւակին կարօտը կը զգար, թէ կը յիշէր ամուսինը:

— Խնդրեմ, այս ծրարը Արամիկին տուր, — ըսաւ Աստղիկ՝ ստի՛ ելլելով ու, ձեռքը երկարելով՝ ծրարը դրաւ կնոջ ափերուն մէջ: Ու մինչ ծրարը կը բաժնուէր իրմէ, անդին աշխարհ մը փուլ եկաւ, ամէն բան իրար անցաւ, ամէն մընտածում, ամէն զգացում: Զգաց, թէ իրմէ բան մը բաժնուելով կ'անցնէր ուրիշին: Անհուն մը ծաւալեցաւ հագիին մէջ ու զգացումները խրտեսան տարօրինակ բափով: Իրեն այնպէս թաւեցաւ, թէ սալոյտասակին վրայ արցունքի կաթիլներ կային, որոնք կը պայթէին կարօտի միջերով:

Ու ան իջաւ փողոց:

Բան մը անջատուած էր իրմէ ու կարողացած ամայութեան մէջ:

Ջերմութիւն էր շքաւ դին: Օրուն շնչահեղձութիւնը, շէնքերէն բարձրացող ազմուկն ու փողոցի թաւալանը միանալուած՝ ներդաշնակութեամբ կը պարուրէին անցողները, որոնցմէ իւրաքանչիւրը իր աշխարհին մէջ ընկղմած կը փախէր, իր կարգին գառնալով մաս մը այդ ընդհանուր ներդաշնակութենէն:

Եւ ժամանակը կը թաւալէր մարդաց հայերուն հետ, կ'առաջանար, կը խորատուգուէր մթաթեան մէջ, եւ մթաթիւնը, ժամանակին հետ թանձրանալով՝ իր մէջ կը խտացնէր բազմութիւնն ու շրջապատը: Եւ մարդաց հագիները կը վարակէին հագրը շուգումով, անոնց աչիներուն մէջ կ'արտացոլար շրջապատին դալկալութիւնը:

Աստղիկ դիտեց շարքը: Որքա՞ն ծանօթ էր իրեն այս փողոցը: Յանախ զգացած էր անոր հեւքը, կշռոյթը, շարժումը, մինչ հիմա փողոցը կը դիտէր գինի՝ իրրի օտարական մը: Աչիքը հետզհետեւ պարփակեցիմ փողոցի համայնապատկերը: Ան հիմա կը փախէր դանդաղօրէն, կարծես հետադարձ ու ամայի անտառի մը մէջ կ'երթերեկէր:

Ձեռքը երկարեց մագերու խաղձին

մէջ ու թեթեւ շարժումով մը ետեւ մե-  
տեց զանգ՝ Գայլերը թեթեւցան: Մա-  
նօք դէմքեր կը ծայտէին իրեն ու ինք  
կեզծ ծայտով մը կը պատասխանէր:  
Գեմքին գիծերը անհունին մէջ մետուած  
անծանօթ մարմիններու տպաւորութիւնը  
կը ձգէին: Թաւալում, կարուստ եւ ան-  
յուշութիւն կար անոնց մէջ, մինչ ան կը  
ֆալէր ներդաշնակօրէն, չորս դիմ սփռե-  
լով իր ներկայութեան գրաւչութիւնը:

Մտածումը թեւ կ'առնէր Ասողիկի  
ֆայլերուն հետ, փողոցին հետ, մարդոց  
հետ եւ շնչառութեան հետ ժամանակի:  
Բացուեցաւ յանկարծ իր ցանկութիւննե-  
րուն աշխարհը: Տունէն հեռամալէն ետք  
այրա՞ն փափաքած էր վերադառնալ հոն,  
ստեղծ այդ հարազատ յարկէն ներս եւ  
գորովանքով գրկել իր միակ գաւակը,  
զգալ տան վազմի բռնը, որուն մէջ իր  
ճաշքէնէն մասնիկներ կային: Բայց եր-  
բեք չէր համարձակած: Ի՞նչ պիտի ը-  
սէին մարդիկ, դրացիները, շրջապատը:  
Վերաւոր թռչունի մը արիւնտ էջքին  
պիտի նմանէր այդ վերադարձը, որմէ  
սարսփած էր միշտ:

Իսկ այժմ արդեօ՞ք շարժումներ կը  
զգային իր ցանկութիւնները, արդեօ՞ք  
իր մտածումները կը գծագրուէին դէմ-  
քին վրայ ու կը փոխանցուէին փառցին:  
Արդեօ՞ք մարդիկ կը կարգային ամենա-  
րեք ցրուած իր մտածումները: Գագտնիք  
մը փոխանցած ըլլալու մտավայրութիւնը  
սարսփեց զինք: Թուեցաւ, թէ պատշգամ-  
ներէն կայտած հետաքրքիր աչքեր կը  
հետեւին իր ֆայլերուն, զգաց, թէ իր  
շուրջ կան փոփոխութիւններ, որոնք հրքայով  
կը սաստկանան: Արագացուց ֆայլերը եւ  
ուզեց անմիջապէս տուն հասնիլ:

Վազգէն տունը իրեն կը սպասէր:  
կը սպասէ՞ր արդեօք:

Վայրկեան մը կանգ առաւ փողոցին  
մէջ: Կասկածին յաճախմէք մտատան-  
ջեց զինք: Այդպէս զգացած էր յաճախ  
անար նկատմամբ: Կասկածած էր անոր  
շարժումներէն, ֆայլերէն, վարուելա-  
կերպէն, բացակայութենէն ու ներկայու-  
թենէն: Եւ ինչո՞ւ այդ կասկածը, երբ

ինք իր տունն ու ընտանիքը ձգելով՝  
միացած էր անոր:

Գիտեց շուրջը: Ինքնաշարժի մը մէջ  
մանուկ մը կը յօրանջէր: Անդին, մայրին  
վրայ կանգնած՝ շրջուն վաճառորդ մը  
արագօրէն իր առարկաները կը հաւա-  
քէր: Վաճառականներ ազմուկով կ'իջե-  
ցընէին իրենց խանութներուն փեղկերը  
եւ թաղը մրափող կատուի մը տպաւո-  
րութիւնը կը ձգէր:

Պարպուռ շրջապատին հետ գա-  
տարկուեցաւ նաեւ հոգին: Իր մէջ հիմա  
անհուններ կային, ընդարձակ ու անսահ-  
ման տարածութիւններ, ուր ինք կ'երթե-  
ւեկէր, հետզհետէ զգալով անոնց խո-  
րութիւնը, վարակուելով այնքան թա-  
փանցիկ ու այնքան խռովիչ զգայութե-  
նէ մը:

Պէտք է շտապէր տուն: Բայց ինչո՞ւ:  
Արդեօ՞ք գաւակ մը ունէր, որ իր գար-  
գարանքին ու խնամքին կը կարօտէր,  
թէ ամուսին մը, որ կը մտահոգուէր իր  
ուշացումով: Վայրկեան մը պրկուեցաւ  
դէմքը, փողոցը շրջեցաւ շուրջը: Այդ ա-  
մէնը իր կեանքին այն մասն է, որ այժմ  
կ'ապրի տարբեր անկիւնի մը մէջ, տար-  
բեր ճակատագրի մը վիճակուած, իսկ  
ինք Հրանդի ձեռքերուն մէջ անցողական  
հեշտանքի մը շերմութիւնը կ'ապրէր, քիչ  
ետք սիրոյ ու կարօտի տարօրինակ յա-  
նախանքէն հայածուելով:

Ամայացած փողոցէն անցնելով՝ ուղ-  
ղուեցաւ դէպի տուն: Մեզմ անձրեւ մը  
կը մազուէր ներքեւ ֆալաքին վրայ: Սի-  
րեց այդ պահը, որ այժմ իր ներաշխար-  
հէն մասնիկներ կը տանէր հետը, հեշտո-  
րէն սահելով փողոցի սեւ սայալասակին  
վրայէն: Եւ կ'իջնէր անձրեւը միօրինա-  
կօրէն, յարատեւօրէն, կը ֆակուէր իր  
զգացումներու կծիկին նման, անխօս ֆա-  
ղաքին եւ ամայի մայրերուն վրայ:  
Մարմինը հետզհետէ կը խմաւաճար եւ  
մերթ ընդ մերթ անցորդները գարման-  
քով կը դիտէին զինք, նկատելով իր հան-  
դարտ ֆայլերը անձրեւու այս գիշեր-  
ւան մէջ:

Երբ դրան մօտ հասաւ, երկար արտա-  
շնչումով մը մատը դրաւ վերելակի կո-

Ֆակին եւ սպանեց: Տակաւին անձրեւի կաթիլները կ'իյնային հոգիին մէջ, երբ Աստղիկ, մտածումի թելէն կայտուած՝ կը բարձրանար իր տունը:

Հանդարտ ու լուռ գիշեր մըն էր: Ան մտնեցաւ տան, բանալիով բացաւ դուռը երբ ներսէն բարձրացող շշուկը գամեց զինք դրան սեմին:

— Զգէ երբեք, — կ'ըսէր կանացի ձայն մը — հիմա կու գայ:

— Թո՞ղ գայ, — կը պատասխանէր Հրանդ ծիծաղելով:

Աստղիկ ետ քաշուեցաւ եւ փակեց դուռը: Շշուկին արձագանգը դեռ կը տաւտէր պարսպին մէջ: Մ'արմինը կ'ուզէր դէպի դուրս. այդ տունը այժմ կը վանէր զինք...

Անձրեւը կը շարունակէր մազալի մրտփոզ քաղաքին վրայ: Հրանդի պատկերը փշրուած ապակիի մը նման կը շոգար փոռոցի թաց քարերուն: Խակ անոթ ձայնը կը շարունակէր կրկնել «բող գայ»:

Ատերութիւնը պրկեց ասիւրը ու կարօտի գգացումը հեռաւոր անկիւններէ մտնեցաւ իրեն՝ Արամիկի պատկերին հետ: Քայլերը ինքնաբերաբար ուղղեցին զինք դէպի իր հին տունը: Արամիկի ըզգայնութեան հետ երկարեցաւ իր մանուկ պարեւը դէպի վիշտին ակունքը: Կը քայլեր այդ տան ռոգուրեւած, վստահ ըլլալով, թէ իր վերադարձը անկարելի երեւոյթ մըն էր, թէ՛ անկարող էր պարփակուիլ այդ նեղ շրջապատին մէջ ու ապրիլ երբեմնի իր կեանքը:

Ինքնաշարժի մը ճշակին ձայնը ըստ-թափեցուց զինք ու, իր մտածումները, անձրեւի կաթիլներուն հետ նայնանալով՝ անհետացան ամայի փոռոցն ի վար:

— Ինչո՞ւ կը քայլես այս անձրեւին, — ըսաւ տղայ մը՝ գլուխը ինքնաշարժին պատուհանէն դուրս հանելով:

Աստղիկ չպատասխանեց ու անտարբերօրէն նայեցաւ անոր:

— Ելի՞ր, հասցենմ, — ըսաւ տղան ու անոր ձայնին հետ Աստղիկ վերակազմեց իր յիշողութիւնը: Սա իր հին տան Ֆարապալանտին տղան էր:

Նայեցաւ անոր դէմքին երջանկախառն ժպիտով մը ու առանց մտածելու մտաւ ինքնաշարժէն ներս: Ներսը ջերմութիւն կար: Անձրեւին ու ցուրտին հակադրուող այս մթնոլորտը, ուր ասիւրիկեան տաք երաժշտութիւնը կը խոյտար, գուարթացուց զինք: Ակնթարթային այս թեթեւութիւնը անջատեց զինք իրականութենէն՝ նետելով գերկը երջանիկ այս պահուն:

Նպարավաճառին տղան շարունակ կը ժպտէր ու հարցումներ կ'ուզէր:

— Դուն Արամիկը կը տեսնե՞ս, — հարցուց Աստղիկ:

— Այո՛, ամէն օր կու գայ խանութս, — պատասխանեց տղան:

Աստղիկ լռեց ու տարօրինակ սէր մը գցաց այդ տղան նկատմամբ, որ ամէն օր իր Արամիկը կը տեսնէր ու անոր հետ կը խօսէր:

— Ո՛ր կ'երթաս, — հարցուց սրբան:

— Ոչ մէկ տեղ, — պատասխանեց Աստղիկ:

— Ինչպէ՞ս, զարմացաւ տղան — կ'ըսեն, թէ ամուսնացած ես:

— Լա՛է, — ըսաւ Աստղիկ քարկացած — այլապէս կ'իջնեմ ու կը քայլեմ անձրեւին տակ:

Տղան նայեցաւ կնոջ դէմքին ու ժրջուեցաւ կրկին, բարձրացուց երաժշտութիւնը ու սկսաւ հրնաւանձով էջել:

— Մեզի երթանք, — ըսաւ նպարավաճառին տղան:

Աստղիկ անտարբերօրէն նայեցաւ, մինչ ինքնաշարժը արագօրէն կը արար:

— Կը յիշե՞ս մեր տունը, — հարցուց տղան:

— Անշուշտ, — պատասխանեց Աստղիկ եւ յիշեց նպարավաճառին կիճը, որուն յանախ կ'այցելէր:

Հասած էին:

Այդ մեծ տունը, ծովափին հանդարտօրէն հանգչող այդ քարէ իրակամութիւնը, երկվայրեկեանի մը համար իր յիշողութիւնը նետեց դէպի անցեալ, եւ անցեալը իր ձեռքերուն մէջ շարժող, շնչող ներկայութիւն դարձաւ: Զեփոցաւ:

ժամանակը ու ամէն ինչ թուեցաւ պատ-  
րանք ըլլալ: Այժմ կար այդ տունը, նոյ-  
նանման, եւ ծովը՝ լանձաւալ, ընդար-  
ձակ ու վեհ, եւ նպարավաճառին տղան՝  
իր երբեմնի ցանկութեամբ, եւ կար ինք:

Դրան առջեւ կեցած՝ դիտեց ծովը: Ա-  
լիքներու տանձարձակ էջքը դէպի ծովափ,  
հեռուէն մտեցող գրաւչութեան նման կը  
վարակէր զինք առնմանազ փոքրկումով  
մը: Զգաց նպարավաճառին տղան ափը  
իր մերկ վիզին վրայ: Նայեցաւ անոր  
դէմքին, երբեք այդքան մտնէն չէր տե-  
սած այդ դէմքը: Յիշեց անոր հայրը, Ե-  
րուս ափերուն մէջ Արամիկ քանի մը ղը-  
րուշ կը սահեցնէր՝ կտոր մը անուշեղէն  
զնեղու համար:

— Ո՞ր է հայրդ, — հարցուց Աստ-  
ղիկ՝ ակնարկը ծովուն նետելով:

— Մեռաւ, — պատասխանեց տղան  
ու առաւ զինք քազուկներուն մէջ:

Մեռա՞ւ, մտածեց Աստղիկ ու խոր-  
հեցաւ, թէ ինչե՞ր մահացած էին իր մէջ:  
Արդեօ՞ք շնչող էակներ մահացած զգայ-  
նութիւններ չէին տաներ իրենց հետ:

Անդին ծովը կ'առնար:

Խռովքը կը քարճրանար հետգետէն  
ու Աստղիկին կը թուէր, թէ ձգողական  
աւծ մը կ'երկարէր իր ու ծովուն միջեւ,  
երկրագունդը կը պրկուէր՝ գոյնով  
զինք աներեւոյթ զգացումի մը, որ ան-  
դիէն կու գար, ծովուն ընդերքէն եւ կը  
ձուլուէր իր ներաշխարհին: Այդ ձգողա-  
կանութիւնը կը կսպէր զինք նպարավա-  
ճառին տղան, որ այժմ փոքրկուսից ծա-  
վուն դէմ կանգնած՝ ազաւորէն կը յա-

փըշտակէր զինք, դառնալով ծովուն չափ  
անշագ, անոր պէս սանձարձակ ու կլա-  
նոզ:

Աստղիկ կօշիկները հանեց շտէն ու  
նետեց: Ուզեց զգալ աւազիմ խոճաւու-  
թիւնը: Տեսակ մը անկեղծութիւն ու հա-  
րազատութիւն կար այս պահուն մէջ:  
Փորձեց իր մէջ ստեղծուած բոլոր շը-  
շուկները սպաննել, փորձեց ծաւալիլ,  
տարածուիլ, դուրս գալ ինքն իրմէ:

— Ներս մտնեմք, — ըստ նպարա-  
վաճառին տղան, — հոս ցուրտ է:

— Ի՞նչ էր անուշ, — հարցուց  
Աստղիկ՝ դրան առջեւ կանգ առնելով:

Տղան չպատասխանեց, մինչ Աստղիկ  
սկսաւ ազաւորէն ծիծաղիլ: Շարժեցաւ  
դէպի ներս ու ծիծաղը ծաւալելով դար-  
ձաւ քրքիջ, բախելով այդ մեծ տան պա-  
տեքուն: Հիմա մարմինը քաժնուած էր  
իրմէ ու հոգին թաւալող ալիքներուն նը-  
ման ծիծաղելով կը գայարուէր, իրեն  
հետ տանելով Արամիկը, աճաւորները,  
վազգէնը եւ նպարավաճառին տղան,  
տանելով նաեւ այն բոլորը, որոնք  
վազը, լուսաբացին կամ երեկոյեան  
եւ կամ միջօրէի ջերմութեան հետ  
պիտի հանդիպէին իրեն, քիչ ինչ իր  
հեզմական ծիծաղին հետ անհետանալու  
համար:

Այս միայնակ տան մէջ, վաղ առա-  
ւօտուն, քրքիջ մը կը յանձնուէր ծովու  
հեշտանմէն:

ՆԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ





Ն. Դ Ի Մ Ա Ք Ս Ե Ա Ն

Յ Ա Ր Ա Լ Է Ջ

«Բողոքի մէջ առայնմ անգամ կրեցող այս ստորագրութիւնը ծածկանունն է մամուլի էջերէն ինկզիմք արդէն լսելի դարձուցած մեր կրիտտաբոյ ուժերէն մէկուն, որ խոստացած է կանոնադրաբար արշաւտակցիլ այս ամսագրին՝ թէ՛ ստեղծագործական եւ թէ խմացական բաժիններուն:

Դիմո՞տեա՞մ մեր տրամադրութեամ տակ դրած է մարդուն Սերալ-խարհիմ եւլովոյթը վերլուծող յօդուածաշարք մը, որուն ազգորու-թեան կը սկսիմք յաջորդ թիւով:

Պայքարի ընկեր: Մարտի ընկեր: Տաղնապի ընկեր:

Յարալէզ:

Մեռար՝ Ի՞նչ ախտէ վարակուած: Ա՛խտ էր, թէ քնական վիճակ: Այսինքն՝ ինչ որ քնական վիճակ եւ ապրում պիտի համարուէր բնաշխարհիդ մէջ, եղաւ ախտագին վիճակ եւ ապրում տարաշխարհիդ մէջ: Կրնայի՞ր տարրեր ըլլալ, վերածուիլ տարրերի, ինքնաստեղծումով, յարմարելով եւ մասամբ նորին: Կ'ուզէի՞ր տարբերիլ, շեղիլ:

Կ'ուզէի՞ր, միւս կողմէ, յարալէզի ճակատագրապաշտութեամբ մնալ Հարազատ դուն քեզի. աններելի կուսութիւնդ չխաթարել: Կարօտով կ'ուզէիք յիշել այն անէծքը, որով դատապարտուած էիք դուն անհատապէս, եւ ժողովուրդդ՝ Հաւաքարար:

Կ'ուզէիք անէծքի՞ն յիշողութիւնը իրագործել, ըլլալ, գործադրել տալ, թէ յիշողութեան անէծքը:

Կ'ուզէիք ինքնացումդ, մշակութայնացումդ, եղափոխութիւնդ բարեխառնել օտարումին, այլասերումին եւ յեղափոխութեան:

Ի՞նչ էր ուզածդ: Ինչո՞ւ կը տաղնապէիք: Ինչո՞ւ մեռար:

Յիշողութիւն: Պատմական կամ այլապէս:

Դատապարտուած էիք:

Անիծուած:

Յարալէզը Սֆինքսի վայելչութեամբ երկարած է: Անապատի կրակ աւազին վրայ ննջած է տէրը: Կենդանաբար դեղձեր այլեւս աւել չեն Հաթթայթեր լեզուին:

Տէրը սպաննուած է: Կարելի չէ յտակօրէն ըսել, թէ ո՞վ սպաննեց զինք: Ուրիշնե՞ր, թէ ինք: Սպաննուած է. նետուած:

Անապատ: Յարալէզ: Տէր:

Անբնական, բայց նաեւ անխուսափելի երեւոյթ: Հեռաւոր յուշ: Փոքր Հայք: Արքայական դամբարան: Կրկներեւոյթ:

Տէրը, ոչ ապահովութիւն ներշնչող բռնակալ, ոչ զգացական յեղինգուկ պոռթկումներով կենսեքին նպոտակ հայթայթող ժարդ, ոչ ինքնակարեւ-

բութեան մոլուցքէն տարուած ժենատէր էր: Ոչ մէկ արքայական չքեղանք  
եւ անձնահաճոյ քմայք:

Եւ յարալէզը մինչ հաշտօրէն, առանց մարմոքի, կը լիզէ եւ կը յիշէ,  
էր կիսախուփ կոպերուն տակէն կը դիտէ կապոյտ հորիզոնին, շաշնոզ արե-  
ւին, հրդեհուած անապատին օտարութիւնը:

Կը զգայ միայն անխուսափելիին ծանրութիւնը:

Մահ, Տէր, Յարալիզութիւն:

Եւ ի՞նչ պայմանի տակ ալ դանուի:

Գայլի ատամներու նման երկինք ցցուած լեռնազաղաթ:  
Նեղ արահետ: Բոպիկ՝ արիւնած ոտքեր: Քանդուած կոճակ՝ եւ մա-  
զերու սեւ խուրճեր հոփին տուած աղջիկ:

Յցուած ատամներու մէջէն սուրոզ հոփ:

Պահ մը այդտեղ կա՛նդ առ, բռնարարուած պղտիկ աղջիկ, շմորուն  
սեւ աչքերով պղտիկ աղջիկ:

Կա՛նդ առ եւ բռնարարումի ամօթը գիւղի մարդոցմէն ծածկելու հա-  
մար այս միջոցին մի՛ դիմեր:

Վարը, շա՛տ վարը, փրփրոտ գետը, ջարդուած մարմինդ պիտի տունի  
հետու, շատ հետու:

Վերադարձի՛ր գիւղ:

Ո՞վ պիտի լուծէ վրէժդ: Ե՞րբ, այս ընթացքով, դուն տկար, անպաշտ-  
պան, սրտիւն աղջիկ, պիտի լուծես դո՛ւն ջու վրէժդ:

Ինչո՞վ եւ մեղաւոր թողոյ՞ աղջիկ, կեանք աղջիկ:

Եւ մինչ դուն այդ լեռնազաղաթէն կը դահալիժիս, մարմինիդ կորու-  
թեան ակնդէտ հետեւող յարալէզը կը լսէ ժայռին վրայ փշրուող մարմինիդ  
ճաթոտիւնը: Կը դիտէ արեան ժայթքումը եւ փէշիդ հետ խաղացող ջուրը:  
Եւ կը յիշէ:

Տօն էր:

Ելաք Վալ ա՛րիզէր: Գուն ու պատահական այդ աղջիկը:

Ընկերներով՝ իրրեւ արտօմարեր՝ ծեփեցիք: Անուշաբոյր ջերուխը ձեռ-  
քէ ձեռք անցաւ: Ներկաները աւելի եւս եղան իրենք զիրենք: Պղպղակները  
պայթեցան:

Բոլորը, արբշխ երանութեանց մէջ, ինկան իրենց անկիւնները: Կթոս  
քայլերով ճաշ սպասարկեցիք թուրին:

Պատահական աղջիկը ըսաւ. «Ինչո՞ւ մենք պէտք է վճարէինք թուրին  
համար»: Ականջիդ հասան. «Ինքզինք ամէն դնով սիրցնել կը փորձէ, «Ար-  
ժանապատուութիւն յունի», «Ինքնադատահոթիւնը կորսնցուցած է», «Տկար  
է», «Մեղք է», «Մտորակայութեան բարդոյթէ կը տառապի»:

Ախտաճանաչում ամէն դնով: Հաւասարութեան, ինքնաճանաչումի եւ  
ինքնաստեղծման օրէնքով ոչ ոք ստիպուած է ծառայել միւսին: Վարկաբե-  
կում է:

Եւ մինչ ներսը զոյգեր դահուկներու վրայ կը գիրկընդխառնուէին,  
մերկ աղջիկ մը կը պարէր եւ երիտասարդ մը իր գաղջիկը՝ պարանով կա-  
պելէ ետք կը ծեծէր, դուն դուրս կ'իլլէիր սառած լիճին վրայ քայլու համար:

Ուրի՞՞ ուր. յանկարծ յիշեցիք:

«Ընկերներս սուփրիմ գիմի

Ու իսպ ըլնեմ միմչիւ Էգուց...»

Միայն լուսին կար, պող հոփ եւ դէմքիդ վրայ սառած արցունք:

Երբ կու գար յանձնառութեան ժամը, դուն՝ յարալէզ, ամբողջութեամբ  
չէիր կրնար տրուիլ պահուած:

Պատճառները, դարձեալ ախտաբանական, որովհետեւ բնականութեան  
չափանիշները ո՛չ միայն քուկը չէին, ալիւ չէին կրնար ըլլալ, երկկողմանի  
էին: Մասամբ կու դային քեզմէ: Ի՞նչն ալ կրնայիր միւսներուն պէս յանձ-  
նուիլ արբիտ մոռացութեան, չի՛րէի, փաթթուիլ ազիճին եւ ամբողջութեամբ  
տրուիլ պահուած: Ի՞նչն քու մթին խորհերուդ մէջ չէիր կրնար, հակառակ ջան-  
քերուդ, խորտակել ա՛յն՝ որ կար քու եւ տարաշխարհիդ միջեւ: Դիտո՞ղ մըն  
էիր. տեսանո՞ղ մը: Յաճախ այնքան հեռու կ'երթայիր անձնատուութեանդ  
մէջ, որ կը կարծէի խորտակուած տեսնել պատուարը: Վերջին պահուն ան  
դարձեալ երեւան կու դար:

Ձի նշանակեր սակայն, որ դիտակցարար կ'ընէիր այդ վերադարձը:  
Ճանչցած անձերէդ շատերէն աւելի կը մխրճուէիր կացութիւններու մէջ:  
Կրնամ ըսել՝ կ'ըլլայիր պահ: Միշտ կը վերադառնայիր սակայն:

Ինչպէս բախ, միայն մասամբ դուն էիր պատճառը: Կար նաեւ պատ-  
ւարը, դոր տարաշխարհի ստեղծած էր քեզի համար:

Եւ թերեւս դիտաւորարար այդ պատճառով հուսարիմ կը մնայիր  
յարալիզութեանդ: Քեզ քու արժանապատուութիւնդ ոտքի կը կանգնեցնէր:  
Արժանապատուութիւնդ յիշողութիւնդ էր: Կը յիշէիր:

Մանկութեան ընկեր:

Ստիպուած եմ մերժել քեզ, ուրանալ:

Ստիպուած եմ նայիլ աչքերուդ եւ անոնց մէջ տակաւ կազմուող աղեր-  
սը առել: Ատել քե՛զ:

Ի՞նչն դիմով ընկեր. դուն հայդուկ ընկեր:

Տարինե՛ր, տարինե՛ր: Եղար անձնազուհ, յանդուգն, խոնարհ, տիպար:  
Եղար քեզ:

Յետոյ չյարատեւեցիր: Հող չէ թէ տարիներու երկայնքին միայն մէկ  
ժամ, մէկ ահեղ ժամ շահողիդ դուն քեզի. սայթաքեցար: Մերժեցիր, ու-  
րացար դուն քեզ: Ատելով դուն քեզ՝ յանձնուեցար շամբըտ այդ պահուն,  
որ դիտեմ՝ երանութիւն իսկ չէր:

Եւ եղբորդ կիներ: Եւ հայդուկ եղբորդ կիներ:

Երբ դնդակը մեկնի ատրճանակէն, հպարտ եղիր: Մի՛ սայթաքիր,  
մի՛ ընկճուիր, մի՛ խնդրեր:

Ձէ՞ որ իմ մանկութեան մտերիմն ես:

Ձէ՞ որ կ'ուզեմ յիշել քեզ: Ձէ՞ որ մարդիկ պիտի ուզեն յիշել քեզ:

Իբրեւ հերոս, որ հպարտօրէն քաւեց իր մեղքին պատիժը:

Եւ հատուցմամբ՝ արժանի եղաւ յիշուելու, յիշողութեան:

Օտարում՝ այո՛: Յեղափոխութիւն՝ այո՛: Այլասերում՝ թերեւս:

Բայց իւրաքանչիւր քայլ, որ առիւր, ամէն անգամ, որ դուն քեզ հս-  
կապէս փորձաքարի դարկիր՝ քայլ մը եւս վերադարձար կարծես դուն քեզի:  
Ոչ թէ այնպէս՝ իբրեւ թէ կանխածրադրուած էր այդ ճանապարհը: Այլ այն-  
պէս՝ իբրեւ թէ՝ իւրաքանչիւր արարքի մէջ, երբ կարծես այլեւս այնքան  
նոյնացած էիր կացութեան թէ յարաբերակից անձին հետ, երբ այլեւս ինք-  
նութիւն, անհատականութիւն եւ անհատականացում չքանային:

Երբ հասած ըլլայիր հոն՝ ուր վերադարձի ճանապարհ գոյութիւն չու-

նի. ուր օտարացած ես դուն ջեզմէ, քեզ չմանչնալու աստիճան. ուր քու դո-  
յութիւնդ պայմանաւորուած է նուազագոյն անբաժան երկրորդով մը. ուր  
հասած ես անհատ եւ անջատ մարդ ըլլալու զերոյն. յանկարծ՝ ուրիշ՝ քու  
մէջը ծայր կ'առնէր վայրագ մոլուցքը ազատութեան ձգտումի: Ինչպէ՞ս բա-  
ցատրել, որ օտարու՞մը սահման մը ունի, ուրիշ անդին կ'ընդգծի, կ'ըմբռո-  
տանայ մարդ: Մարդ: Յարալէ՛զ:

Օտար ափեր լինկած յարալէզ: Բի՛ւ խոցուեցար:

Այլամերժութեամբ, արհամարհանքով եւ չարութեամբ, կճո՛ղ չա-  
րութեամբ, շքուեցա՛ւ քեզի, որ վերադառնաս զճո՛ն՝ ուրիշ եկած  
ես...: Աշխարհի ծայրը տեղ մը, որուն ուր ըլլալը կորեւոր իսկ չէ: Չհար-  
ցուցի՞ր դուն ջեզի. ճի՛ւր վերադառնամ... ո՞ւր է հոգս... ուրիշ՝ կու դամ  
ես...»:

Չդրուեցա՞ն աղեւտ աշխատանքի արգելքներ: Փողոցներու մէջէն կը-  
նաւանդ չհաւաքեցի՞ր: Անուշիդ եւ դիմազիծիդ պատճառով խտրական վե-  
րաբերումի շարժանացա՞ր:

Եւ ի՞նչ տիեզերական երազով ուղեցիր քանդել կապանքները, խօսիլ,  
չաղուիլ, հասկնալ, հասկցուիլ: Պոռալ անարդարութեանց, բոլոր տեսակի  
անարդարութեանց դէմ:

Հաղորդակցիլ: Հաղորդուիլ:

Քեզ դիմադրական անողոք պատեր:

Տաղանպեցար եւ պայքարի տարբեր միջոցներ փնտռեցիր:

Յեղափոխական շրջապատի աղջիկ՝ Ինկրիտ:

Անքուն դիւեր: Հայածող եւ հալածուող սրնթաց ինքնաշարժներ:

Փամփուշտի սուլոց եւ ահագանդի ճշակ: Անկիւններու վրայ ճոնուող անիւ:

Ի վերջոյ՝ նեղ փողոցներու դարձարձիկ ազահովութեամբ փախուստ:

Ապաստան՝ Ինկրիտի մօտ: Թեթեւ դիւերազգեստով դրան արագ բացխօսմ:

Յետոյ՝ մութին մէջ, ջրո՞ջ, թէ սիրահարի պէս, բայց զերազանցապէս դճ,

երկար համբոյր:

Կը լուսացուիս: Ինկրիտ կը բանայ իր միակ անկողինը եւ քովդ կ'եր-  
կարի: Հատուցման հանելի պահ:

Կու գայ հասուն այն պահ, երբ կոնքի մկանները կը ձգուին եւ ող-  
նայարբ անդրապարձ շարժումներ կը թելադրէ: Յոգնած ուղեղը սակայն,  
յանկարծ, կաթիլ առ կաթիլ ներարկումներ կ'ընէ:

Ինկրիտ, աղուոր Ինկրիտ: Մայր մը բանտի մէջ: Անմանթ հայր: Հին

այս երկփեղկեայ քաղաքին մէջ ձեռքէ ձեռք անցած Ինկրիտ: Մօրը ըմբոստ

ընկերները կերակրեցին քեզ, խնամեցին, բայց երբ տակաւին շատ փոքր էիր,

վարձահատոյց եղան:

Մէջը մնաց միայն մէկ երազ: Մօրդ եւ քու վրէժդ: Մայր ապին մօլե-

դին թշնամութիւններ, նախանձի երեւոյթներ: Բայց դուն մնացիր անմեղ,

որովհետեւ երախապարտութիւնդ քու գիտցած միակ ձեւովդ կը յայտնէիր:

Եւ հիմա գարձեալ: Աղուոր Ինկրիտ: Անմեղ Ինկրիտ:

Ոչ ոք թելադրեց քեզի, թէ բոլոր անոնք, որ անցան կեանքէդ, պար-

տաւոր էին լուծելու վրէժդ: Ոչ ոք փորձեց քու փոքրիկ, անձնասէր, հա-

կեդրոն, բայց անմեղ ուղեղիդ մէջ սերմանել ա՛յն՝ որ քու վրէժդ միայն մէկ

մասն է ամբողջական մէկ վրէժի:

Յաղաղ ննջէ, Ինկրիտ: Թող յարալէզը իր մեծ երազին մէջ առնէ քեզ:

Ամէն անգամ, որ Յարալէզը այս ձեւով կ'արթննար իր մեծ երազէն, չէր յուսահատեր: Պարզապէս, մեծ երազի իրագործման ճամբուն վրայ անկիւնաքար մը կը համարէր հղածը եւ կ'անցնէր:

Անկիւնաքարերը իրարու վրայ կը դիպուէին եւ երբ անոնց առջեւ կանգ կ'առնէր, անորոշ կերպով կը զգար այն ուղղութիւնը, զոր անխուսափելիօրէն պիտի ընդգրկէր ուշ կամ կանուխ: Երբ որ հարթուէին կնճիտները եւ կախարհը՝ իր գունագեղ տոպրակի պէտքուն ապակիներով, կառոյց մը պատարասէր իրեն համար:

«Կը հասնի՛՞մ», կ'ըսէր ան: «Ձեմ կրնար չհասնի՛լ»:

Անխուսափելին կ'առնէր գինջ իր ուրտին մէջ եւ, հակառակ վտանգի սովորութեան՝ տարօրինակ ապահովութիւն մը կը ներշնչէր:

Եւ պատահեցաւ անխուսափելին:

Վերադարձաւ հոն՝ ուրկէ կ'եղծ էր...:

Քիչ մը ամէն տեղ հանդիպեցաւ Վարդէն իսկ բազմիցս տեսնուած» երեւոյթներու:

Կը խօսէր ինքնացման, օտարումի, այլասերումի, յեղափոխութեան, կուսութեան, ճակատադրապաշտութեան, անէծքի եւ կարօտի մասին:

Մտիկոյթի, ըմբռնման եղանակի եւ աշխարհահայեացքի տարբերութիւններ կը նետուէին հրապարակ: «Դուն մեզ չես հասկնար», կը լսէր ամէն կողմէ: Եւ իրկապէս կ'անդրադառնար, որ չէր հասկնար: Ասոր մէջ դէր կը կատարէր այլեւս հասկնալու չկամութիւնը: Ինքն ալ ունէր իր մշակոյթը, ըմբռնման եղանակը, աշխարհահայեացքը:

Յարալիցեանը:

Անդրադարձաւ, որ ինք պարզապէս ամառնային խոնաւ երեկոյ մըն է: Պարզապէս յոգնած, պարտասած:

Մինակ էր եւ օտար նոյնիսկ հարազատներու մէջ: Ինչպէս միշտ:

Կա՛մ ինք օտարացած, այլասերած էր, կա՛մ հարազատները:

Ինք կը հուսատա՛ր անէծքի, յիշատակի, յիշողութեան եւ դատապարտութեան:

Պարզապէս ընդունեց զանոնք:

Պիտի երթար եւ Արտաւազդի ու Փոքր Մհերի նման փակուէր քարանձաւի մը մէջ:

Քարանձաւը պէտք է սակայն ըլլար օտար մէկ տեղ, որպէսզի չսրբապղծուէին նախնիները:

Եւ հիմա, մեռած եւ արդէն: Սպաննեցի՞ն քեզ, թէ դուն քեզ կամօ՞վին լքեցիր վերջնապէս:


Յարալէզը՝ կողքիդ երկնցած՝ իր անխուսափելի, ճակատադրապաշտ եւ անվախճան ծիրակատարութիւնը կը կատարէ:

Դուն չես իշխանն հայոց եւ ոչ արքայ ամենակալ: Փոքր Հայքը շատ հեռու է քեզմէ եւ դուն քու այլասերումիդ մէջ, թերեւս պարտադրուած կամ ինքնապարտադիր, կը մնաս նետուած անապատի մը հեռու որ տափաստաններու լայնքին, տեղ մը, անորոշ, ինչպէս որ էր արդէն նախապէս:

Ի՞նչ ձեւով կարելի է թարմացնել յիշատակդ եւ սերունդներ յուղել անով:

Կարելի՞ է ենթադրել, որ օրինակելի բան մը կը գտնուէ յիշատակիդ մէջ:

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ



Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

### ԱՆԻԾԵԱԼ ՀԱՆՃԱՐՆԵՐ

#### Գ.— ՏՐԱՆՍՍՈՒԱ ՎԻՅՈՆ

Շանթը կը հարուածէ այն կաղնիները, որոնց դուրսը կը հասնի աստղերուն եւ կ'արհամարհէ անոր շուքին տակ անոյ բոյսերը: Հանճարը երկնային տուրք մըն է եւ զայն ստացողը ընտրեալ մը, որ կաղնիի մը կամ փարտի մը պէս կը բարձրանայ մարդկային հօտին վրայ եւ կը հովանաւորէ զայն, եւ մարդկութիւնը վախով եւ սկնածանքով կը դիտէ աստղերուն ըստպանացող այս մեծութիւնները եւ կը վախնայ ժառանգու սնոնց: Չհարհրնալով այս հսկաներուն պատգամը, մարդկային հօտը կ'անտեսէ, կ'արհամարհէ եւ կը հարածէ զանոնք, ինչպէս պիտի հարածէր հետաւոր մտորակներէ եկած գերմարդերը: Եւ հանճարը կը մնայ առանձին եւ կը տառապի իր մարդ-եղբայրներու այս վերաբերումին համար:

Այնպէս որ՝ եթէ ինչպէս կ'ըսէ Գիլգըլ, «Անդին փոխարժէքը մահն է», Հանճարին փոխարժէքը անէծքն է: Անէծք մը, որ կու գայ կարծէք վերէն, այդ ձերքերը պարզեւողէն, եւ վարէն՝ իր կենդանութեան եւ տղտութեան տիղմին մէջ տապալկող մարդկային ամբօրէն:

Ես խաւարածն եմ, այրին, տնայիթարը,  
Քանդուած աշտարակով Աֆիքէնի իշխանը,  
Մէկ հատիկ աստղս մեռած...

Կ'ըսէ բանաստեղծը, եւ կ'աւելցնէ.  
Այո՛, ես անոնցմէ եմ, զորս կը ներշնչէ Վրիժառուն,  
Ան ճակատս խարանց իր գայրացած շրթներով...

Անիծեալ հանճարները կը պատկանին արուեստի եւ գիտութեան կարճածին, անոնք կը կոչուին բանաստեղծ, երաժիշտ, նկարիչ, դիտնական:

Անոնցմէ ոմանք ծանօթ են ժողի եւ կը հանդիսանան համաշխարհային գրականութեան եւ արուեստին դիտաւոր աստղերը, ուրիշներ՝ թէնւ նոյնքան արժէքաւոր, սակայն անծանօթ կը մնան դեռ ընթերցող հասարակութեան, կարծէք անոնք դատապարտուած ըլլալին դուրս շփուլ իրենց քաւարանէն:

Հանճարեղ անիծեալներէն ոմանք անձնասպան եղած են, ուրիշներ՝ սպաննուած: Շատեր մեռած են իրենց երիտասարդ տարիքին՝ հիւանդութեան, թշուառութենէ կամ արկածէ, ուրիշներ բանտարկուած կամ աքսորուած են: Անոնց թիւը կը հասնի հարիւրներու, թերեւս հազարներու: Իր լինելութեան ճանապարհին վրայ, մարդկութիւնը յարձար տեսած է զո՞նք իր լա-

ւազոյն զաւակները, մեղմացնելու համար շար ուժերու եւ շար աստուածներու զայրոյթը, Յաւային այն է, որ այս ողջակիզումը բրած է յաճուխ անդիտակցարար, անտեսելով ու ոտնակոխ ընելով զամպոտաններու այս իշխանները, եւ կամ՝ իւր ճապի մէկ պահուն, վրանալով անոնց անդիմադրելի հուրէն: Զանոնք դարձուցած է ծաղրի եւ արհամարհանքի նշուակ եւ անոնց ձայնը խեղդած է մութ գնտաններու մէջ:

Հին եւ նոր ժամանակներու համար հանճարեղ մարդը այն է, որ կը փնտռէ եւ կ'իրագործէ անկարելին եւ կը զերգանցէ իր նմանները: Հասարակ մարդուն համար հանճարը հոմանիչ է օրինազանցութեան եւ բմբոստութեան, եթէ ո՛չ Աստուծոյ, զոնէ աշխարհի կարգուսարքին ու ճակատագրին զէմ: Հանճարեղ մարդը դրախտէն վտարուած զերմարդ մըն է, որ կ'աշխատի ու երբեմն կը յաջողի նուաճել երկինքը:

Անոնց նախահայրը Պրոմէթէոս արտանն է, որ յանդգնեցաւ աստուածներէն յափշտակել երկնային հուրը եւ զայն փոխանցել մարդոց, որովհետ լուսաւորուի անոնց ճակատագրին զժողակ ճամբան: Աւ պատժելու համար Պրոմէթէոսի յանդգնութիւնը, աստուածները զայն շղթայեցին Կովկասի ապտաթնեղէն մէկուն վրայ եւ իբր ընկեր անոր զրկեցին սովաւրուկ անզղ մը, որ անդադար կը ճեղգէր անոր կողք եւ կը կրծէր յարզը:

Հանճարեղ անիծեալները կը բաժնուին երկու դատակարգի: Ոմանք հայածու ելով եւ տառապելով հանդերձ՝ անէծքի թեման չեն մշակած իրենց գործերուն մէջ, իսկ երկրորդ դատակարգը, որով պիտի գրազննք յաջորդ էջերուն մէջ, այդ թեման դարձուցած են իրենց ներշնչումին գլխաւոր թեմաներէն մէկը:

Հայ ընթերցողը բաւական ծանօթ է մեր գրականութեան անիծեալներուն, որոնք կը կոչուին Պետրոս Դուրեան, Մեծարենց, Արփիար Արփիարեան, Տեմիրճիպաշեան, Եղիշէ Զարենց, Ակոբ Բակունց, Միամանթօ, Վարուժան, Զօհրայ, Տիրան Զրաքեան եւ Յակոբ Օշական, որոնք զոհերը եղան թուրքերու ետնադաշին ու Զեկայի գնտաններուն, կամ չքաւորութեան եւ իրենց չբնապատի անհասկացողութեան:

Անք ուսումնասիրութեան կարուծը պիտի բլլայ միջազգային օտար գրականութիւնը, սկսելով Նիդ դարէն եւ առաջանալով ժամանակի հոսանքին հետ:

«Բազմոյնի նախորդ թիւերուն մէջ արդէն ներկայացուցած էինք անիծեալ երեք հանճարներ՝ Շարլ Գօալէր, Ժերար տը Ներվալ, Կոմս տը Լօթմէսան:

Մեր ներկայ ուսումնասիրութիւնը պիտի սկսինք Մելլին դարու այն անտակ որչիտով, որ կը կոչուի Տրիստան և Իզոլտ:

Գրականութիւնը այն գերազանց ասպարէզն է, որ հեղինակէն կը պարզեւէ իսկական անմահութիւն: Գրականութիւնը կ'անտեսէ հեղինակին ընկերային դիրքը, համբաւն ու հարստութիւնը, եւ անմահութեան իր թաղը կը պարզեւէ միայն անոնց, որոնք օժտուած են ձիրքերով: Հանճարները մտքի եւ ժամանակի արքաներն են եւ իշխանաւորները յաճախ անոնց զիմած են, որպէսզի իրենց անունը յիշուի անոնց երգերուն մէջ:

Կը բաւէ մէջբերել այն քտեակը, զոր Ժ.Ձ. դարուն, Ֆրանսայի Շարլ Թ. Թազաւորը կ'ուզէր օրուան մեծագոյն բանաստեղծին, Ռոնսարին.

Փերբողութեամ արուեստը, հակառակ շատերու կարծիքիմ,  
Պէտք է դաստի անլի վեր, էամ իշխելու արևեստը:  
Դում ու նս կը կրենէ անխառնքեամ քազը.  
Ես՝ քազաւորը, գայմ կը ստամամ, եւ դում բամաստեղծ՝ գայմ կը պարգեւես:



Դուր մը ետք, բանաստեղծ մը սիրտի արձագանդէր թողուորի այս տողերուն, յայտարարելով՝ «Ինչ որ Մալերայ կը գրէ՝ կը մնայ յաւիտեամս»։ Մէկ խօսքով՝ աշխարհի մեծամեծները՝ թողաւորները, իշխանները եւ աշխարհակալները ո՛չ միայն կ'անկածին բանաստեղծներէն, այլեւ կը նախանձին սևոնց, նոյնիսկ եթէ անիծեալ հանճարներ հղած բլլան վերջինները։ Իւ սակայն ո՞ր մտահոգացուն սիրտի նստանձէր Յրամտուա Վիլյոմիմ, որ եղաւ շարագործ, մուրաստան, թշուառ, անօթի, որ կտխաղանին հեռանկարով ապրեցաւ իր խոնաւ ու մութ զնդաններուն մէջ, եւ ՅՅ տարեկանին անհետացաւ այս կեանքէն, խորհրդաւոր կերպով, թերեւս կտխաղանի մը շուանը վզին։

Գրականութեան բոլոր մասնադէտները Պրանսուա Վիլյոնը կը նկատեն արդիական բանաստեղծութեան առաջին ներկայացուցիչը։ Ըսր դարձրանելով բանաստեղծութեան առանցքը՝ Վիլյոն կ'ուզէր երգել իր ողբերգական կեանքին անցուղորձերը, եւ որովհետեւ հսկառակ իր յաճախած միջավայրին, օժտուած էր անտարիկեյի հանճարով, ան դուաւ պէտք եղած բառերը եւ շեշտը, բանաստեղծութիւնը օժտելու համար այն խորհրդաւոր սարսուռով, զոր կը զգանք նոյնիսկ այսօր, հինգ հարիւր տարի ետք։

Պրանսուա Վիլյոնի կեանքը նիւթ հայթայթած է ո՛չ միայն զբաղանազէտներու, այլեւ՝ վրայսահանքներու, թատերադրանքներու եւ շարժապատկերի բեմադրիչներուն, այնքան շատ են իր այրած արկածախնդրութիւնները։ Բաւականանա՞ք՝ յիշելով քանի մը յատկանշական դէպքեր։

Իր վկայութեամբ իսկ, Պրանսուա Վիլյոն ծնած է 1431ին, այսինքն՝ այն նոյն տարին, երբ Ռուան քաղաքի Հրապարակին վրայ անդլիացիները կ'այրէին 19ամեայ աղջիկ մը, որ յանդուած էր զէնք վերցնել իր երկրի թշնամիներուն դէմ։ Վիլյոն չէ մոռցած այդ դուրախարկութիւնը եւ տարիներ ետք իր «Անցեալի տիկի՞նք» բալլատօնին մէջ, պիտի յիշէ Օրլէանի կոյսին ողբերգական եւ անմահ ճակատագիրը։

Ապագայ բանաստեղծին հայրը համեստ ջուլհակ մըն էր, որ երկար շապրեցաւ։ Այդ օրերուն ջուլհակները կ'աշխատէին ապարողջ, մութ ու խոնաւ նկուղներուն մէջ եւ դադար ու հանգիստ չէին ճանշար։ Մայրը համեստ, բարի, աստուածամայիս եւ անուս կին մըն էր։

Բանաստեղծին եւ մօր վիճակը անտանելի պիտի դառնար, եթէ իրենց հետաւոր աղակերպներէն մէկը՝ Կիլյոմ Վիլյոն, օգնութեան հասած չբլլար։ Ան ձրի բնակարան մը ապահովեց անոնց Սէն-Պրնուա վանքի շրջափակին մէջ, ուր սենեակներ կը տրամադրուէին ուխտաւորներուն եւ շքաւորներուն։ Կիլյոմ Վիլյոն, որ բարձրաստիճան կղերական մըն էր եւ ունէր բաւարար եկամուտ, Պրանսուան տուաւ իր պաշտպանութեան տակ եւ հօր մը պէս հող տարաւ անոր, Պրանսուայի իսկ վկայութեամբ։ Եւ իր երախտապարտութիւնը յայտնելու համար այս բարի մարդուն, Պրանսուա, որ կը կոչուէր Մոնթբորպիէ տէ Լոս, իր անունին կցեց Վիլյոն մականունը։

Կիլյոմ Վիլյոնի օժանդակութիւնը նիւթական չեղաւ միայն։ Ան կարողաւորել սորվեցուց այս անհանդարտ լանին, որ իրեն ժամանակակից մանուկներու պէս պիտի մնար անուս ու տղէտ եւ իր ժամանակը պիտի անցընէր փողոցներու մէջ թափառելով եւ շարագործութիւններ ընելով։

Աւարտելէ ետք իր երկրորդական ուսումը՝ Կիլյոմ Վիլյոնի միջնորդութեան շնորհիւ Պրանսուա ընդունուեցաւ Փարիզի համալսարանը, զոր երկու դար առաջ հիմնած էր Ռոպէր Սորպան։

Իր խոստովանութեամբ իսկ, Պրանսուա կանոնաւոր եւ ուշիմ աշակէրս

ժը շեղաւ: Եւ տարիներ ետք, ան իր զղջումը պիտի յայտնէր իր անառակութիւններուն համար:

Ատուած իմ, եթէ լաւ ուսումած ըլլայի  
Խեմք երիտասարդութեամբ ծամամակ,  
Եւ լաւ վարումով ունեմայի,  
Հիմա պիտի ունեմայի տուծ եւ փափուկ անկողին:

Միջին դարու համայնարանը կը գտնուէր Եկեղեցւոյ իրաւասութեան տակ, եւ ուսանողները կը կազմէին մենաշնորհեալ դասակարգ մը, ա՛յն ի՞նչ մաստով, որ իրենց արարքներուն համար անոնք պատասխանատու էին ոչ թէ քաղաքական, այլ՝ եկեղեցական արդարութեան առջեւ, որ աւելի մեղմ էր ու ներողամիտ: Կը բաւէր, որ կատարուած շարագործութիւններէն ետք, անոնք ապաստանէին համայնարանի շրջափակէն ներս, որպէսզի թագաւորին ուստիկանները դադրեցնէին իրենց հետապնդումները: Սակայն եթէ յանցանքը շատ ծանր ըլլար, եկեղեցական իշխանութիւնները, ընդատա՛րելով թագաւորի պահանջին, ենթական կը յանձնէին քաղաքական արդարութեան, որ շատ կտրուկ էր ու խիստ:

Հաւանական է, որ այս անկանոն ուսանողը, հակառակ իր խնամակալին դիտողութիւններուն, շատ քիչ անդամ ներկայ կ'ըլլար դասընթացներուն ու թէեւ իր շրջանակը դինք կը կոչէր մեքք (մագիստրոս) Ֆրանսուա, կը կարծուէր, որ ան ոչ մէկ վկայականի կրցաւ տիրանալ: Վիյոն կը խոստովանի, որ տկար կամ քի տէր ըլլալով՝ կը արուէր իր ընկերներէն, որոնց հետ խմբակ մը կազմած էր: Այս խմբակին անդամները իրենց գիշերները կ'անցընէին պինտուներու եւ հանրատուներու մէջ եւ ցերեկները, փոխանակ համայնարան յաճախելու՝ կը մնային իրենց անկողինին մէջ: Այսպիսի ըլլալու կեանք մը ապրելու համար, դրամ պէտք էր: Ուստի՝ դրամ ապահովելու համար անոնք կը դիմէին խարէութեան, գողութեան եւ նոյնիսկ ոճիւրի: Անոնցմէ շատերը իրենց երիտասարդ տարիքին ձերբակալուեցան եւ բարձրացուեցան կախաղան:

Առանց անթիմ մը ունենալու իրենց դրպանը՝ անոնք յաճախ խնձոցոնի կը կազմակերպէին: Խնձոցին մասնակցողները պէտք է ապահովէին ուսանանդէն եւ խմիչք, եւ կազմակերպողները կ'որոշէին իւրաքանչիւրին մասնակցութեան բաժինը: Մէկը պիտի հայթայթէր հաց, ուրիշ մը՝ մսեղէն, ուրիշ մը՝ ձուկ, չորրորդ մը՝ պտուղ, հինգերորդ մը՝ խմիչք, եւ այլն: Անոնք առտուն կ'իջնէին շուկայ, կը ոլջոտային խանութներուն եւ սեղաններուն առջեւ եւ մեծ ճարպիկութեամբ կը զոզնային իրենց ապուրուած ազրանքները:

Այս շարահանութիւններն ու գողութիւնները կը մնային անպատիժ: Ասկէ քաջաշերտած՝ անոնք սկսան դրամ զոզնալ տուններէն, անցորդներ կոչուտել:

Ֆրանսուա Վիյոնի մասնակցութիւնը այս արշաւանքներուն եւ քաջազործութեանց թէեւ անառարկելի, բայց անորոշ կը մնայ, մինչեւ 1455 թուականը, երբ, առաջին անգամ ըլլալով՝ իր անունը իբր մարդասպան կ'արձանագրուի դատական տոմարներուն մէջ:

Գիրախի երեկոյ մը, Յունիսի տաք օրերուն, Ֆրանսուա նստած էր Մէն-Պընուա վանքի շրջափակի քարէ նստարաններէն մէկուն վրայ: Իրիկուան ժամը ինն էր: Այդ եղանակին օրերը շատ երկար կ'ըլլան, եւ այդ ժամուն, թէեւ արեւը մարը մտած կ'ըլլայ, սակայն տակաւին կը տիրէ որոշ լուսաւորութիւն մը: Ֆրանսուայի ալ կողմը նստած էր Իդապէլ անունով աղջիկ մը, իսկ ձախին՝ Ժիւ կոչուող կրօնաւոր մը, եւ երեքը միասին կը զրուցէին:

Պրանսուա Հագած էր կարծ վերաբերու մը եւ մէջքին կը կրէր պզտիկ դաշոյն մը, որ այդ օրերուն մաս կը կաղմէր Հագուստ-կապուստին :

Յանկարծ յայտնուեցան երկու անձեր՝ քահանայ մը եւ Համալսարանական մը : Պրանսուա ոտքի ելաւ, զանոնք զիմաւորեց, սակայն քահանան զայրացած կը թուէր .

— Վերջապէս քեզ դտայ, — ըսաւ երիտասարդ քահանան, — Հիմա մաքրենք մեր Հաշիւը :

Եւ Պրանսուան հրելով՝ նստեցուց տեղը : Ներկաները, Հասկնալով որ բան մը պիտի պատահի՝ հեռացան : Պրանսուա եւս ելաւ նստարանէն եւ քաշեց դէպի վանքին մուտքը : Երիտասարդ քահանան վազեց ետեւէն եւ սքեմին տակէն երկար դաշոյն մը հանելով՝ Հարուածեց Վիյոնի դէմքը : Հարուածը ակօսեց Պրանսուայի այտը եւ չրթները եւ արիւնը սկսաւ հոսիլ : Արեան Հոտը առնելով՝ Պրանսուա Հանեց իր դաշոյնը եւ իր Հակոտակորդը Հարուածեց փորէն ու հեռացաւ : Սակայն քահանան լուտանքներ տեղացնելով՝ խուժեց անոր կողմը : Այս անգամ Պրանսուա ատաւ խոշոր ջար մը եւ նետեց իր Հակառակորդին գլխուն, որ դետին փռուեցաւ : Մարդիկ սկսան Հաւաքուիլ եւ վիրաւորը փոխադրեցին վանքէն ներս : Ներկաներէն մէկը վազեց մինչեւ Շաթրլէի բանտ-դատարանը եւ լուր տուաւ : Մինչ այդ, Վիյոն մտած էր սահմանի մը խանութք՝ իր վէրքը դարձանել տալու Համար : Երբ Հարցաքննիչ դատարորը ժամանեց դէպքին վայրը, քահանան Հողեվարքի մէջ էր : Վերջին շունչը փչելէ առաջ, քահանան յայտնեց, որ կը ներէր իր ոճրագործին՝ զանձնական պատճառներով :

Պրանսուա Վիյոն արդէն ելած էր Փարիզի սահմաններէն դուրս, որպէսզի չձերբակալուի :

Կը կարծուի, որ այս արիւնայի մենամարտին դրդապատճառը Քաթրին տը Վօսէլ կոչուած գեղեցկուհին էր, որուն կապոյտ աչքերուն Համար բանաստեղծը սպաննած էր Փիլիպ Սերմուաղ անունով քահանան :

Իր աքտորափայլէն Վիյոն զղումի նամակ մը շարադրեց թագաւորին եւ քանի մը ամիս ետք, ստացաւ ներումնազիր եւ, Ս. Մնուշդի տունէն առաջ, վերադարձաւ իր այնքան սիրած քաղաքը :

Պէտք է ըսել, որ այդ ժամանակաշրջանը կը նկատուի Եւրոպայի ամէնէն մութ եւ ոգրերգական դարաշրջանը : Ճիշդ այն տարին, երբ վերջ կը գտնէր Հարիւր տարուան պատերազմը, որ սպառեց Անգլիոյ եւ Պրանսայի ողջ ուժերը, թուրքերը առիթէն օգտուելով կը գրաւէին Պոլիսը, Եւրոպական միւս երկիրներուն մէջ կացութիւնը աւելի փայլուն չէր . ամէն կողմ պատերազմ, Համաճարակ, սով :

Մեծ մայրաքաղաքները, մանաւանդ Փարիզը դարձած էր ամէն ազգի շարագործներու բոյնը : Այդ շարագործները ընդհանրապէս ուսանողներ էին, թէեւ անոնք զիրքի երես չէին տեսած : Ինչպէս ըսինք, Համալսարանը, որ կը գտնուէր Փարիզի արքեպիսկոպոսին Հովանաւորութեան տակ, կը վայելէր անձեռնմխելութեան իրաւունք :

Եկեղեցական ատեանը շատ թոյլատու էր եւ զրեթէ պատիժ չէր սահմաներ իր կորսուած ուխարներուն : Այս պայմաններուն մէջ պէտք չէ զարմանալ, որ Համալսարանը դարձած ըլլաւ ամէնազգի ոճրագործներուն ապաստանարանը : Կը բաւէր արձանագրուած ըլլալ իրր ուսանող եւ վճարել կրթութիւնը :

Պրանսուա Վիյոն, որուն մարմինը տկար էր, բայց միտքը շատ արագ, ընկերացաւ այդ երիտասարդ շարագործներուն եւ մասնակցեցաւ անոնց բոլոր արշաւանքներուն : Մէկ խօսքով՝ Միջին դարու մեծագոյն բանաստեղծը

ս'չ միայն աւազակախումբի մը անդամ էր, այլեւ՝ զող, քսակահատ, խա-  
շազող ու ոճրագործ :

Երկար է Վիյոնի մաս կազմած աւազակախումբին քաջագործութիւն-  
ներուն ցանկը : Միայն ըսենք, որ 1467ի Յուլիսին, Վիյոն կը պատրաստուի  
կրկին խոյս առլ Փարիզէն եւ այդ առթիւ կը շարադրէ իր բանաստեղծու-  
թիւններուն առաջին շարքը՝ «Պարսիկ կտակը», որուն երգիծական երանիչը  
անուրանալի է : Ի՞նչ է սակայն այս փախուստին պատճառը :

Յուլիս ամսուն կը սկսին դպրոցական եւ համալսարանական արձա-  
կուրդները : Մեկնելէ առաջ, ուսուցիչները կը ստանան իրենց յետնեալ թո-  
շակները . մէկ խոսքով՝ այդ օրերուն, դանձապահներու անուկները լեցուն  
կ'ըլլան սակիով : Ուսանողները եւ, մանաւանդ՝ աւազակ ուսանողները լաւ  
գիտեն այս բանը : Մէկ օրուան ընթացքին Նափա Գոլէժի անտուկի 600 ոսկին  
եւ եկեղեցիի մը լուսարարին մօտ գտնուող 500 ոսկին կ'անհետանան, հա-  
կատակ առնուած քոլոր կանխամիջոցներուն : Այս անգամ անձեռնմխելու-  
թեան հարց չկայ : Թագաւորին աստիճանութեան կը տրուին հետապնդումի  
բոլոր իրուստութիւնները : Ստիկանութիւնը կը յաջողի ձերբակալել Կի Թա-  
պարի կոչուած ուսանող մը եւ շարաւրանքի տակ անոր իրատոյժանի կու-  
տայ իր մեղսակիցներուն անունները, որոնց կարգին՝ Ֆրանսուա Վիյոնի ա-  
նունը :

Այս իմանալով՝ զողութեան մասնակցող բոլոր շարագործները կը լսա-  
պեն հետանալ Փարիզէն, ուր այլեւս ոչ մէկ պաշտպան ունին :

Ֆրանսուա կը բռնէ հարաւի ճամբան, դէպի Անժէ քաղաքը, ուր իբր  
թէ ունի կրօնաւոր աղաքական մը : Խորքին մէջ, ան հոն դրկուած է անխոս-  
տովանելի առաքելութեամբ մը . պատրաստել հասութեանք զողութիւն մը՝  
լուար գետի հարուստ վանքերէն մէկուն մէջ :

Սակայն Անժէ չհասած՝ Վիյոն կը ձերբակալուի Օրլէան քաղաքին մէջ  
եւ կը նետուի գնդան : Այս բանտարիութեան պատճառը անձեռնմխելի  
կը թուի, որ Վիյոն քանի մը ընկերներով կողոպտած էր հարուստ ճամբորդ  
մը Օրլէանի մօտիկ անտառներուն մէջ : Ծամբորդ կողոպտելը կը նկատուէր  
մահացու մեղք եւ Վիյոն արդէն ինքզինքը կը տեսնէր կախուած չուանի ծա-  
րը, Օրլէանի հրապարակին վրայ : Ծիշոյ այդ օրերուն կ'իմանայ, որ Օրլէա-  
նի դատահին ծնունդ տուած է աղջիակի մը : Վիյոն կ'աննէ գրեւը եւ կը շա-  
րադրէ Ջոն մը՝ ի պատիւ իշխանուհի Մարի Կ'Օրլէանի ծնունդին եւ կը զրկէ  
երջանիկ մօրը : Պատասխանը չ'ուշանար : Բանտապահը կը բանայ զնդանին  
դուռը, սովալլուկ բանաստեղծին կը յանձնէ քսակ մը եւ, «Աստուած հետդ»  
ըսելով՝ կ'արձակէ աղատ :

Փարիզի մայթերուն վարժուած այս երեսունամեայ շարագործը, իր  
քսակը պարպելէ ետք, կը վերադառնայ սիրած քաղաքը, ուր կը ձերբակալ-  
ուի, քանի մը տարի առաջ ըրած իր զողութիւններուն համար : Նոյն բանտին  
մէջ կը գտնուին իր մեղսակիցներէն ոմանք, միւսները կը թափառին հեռա-  
ւոր ճամբաներու վրայ :

Փարիզի ոճրագատ ատեանը, որ այս առիթին կը սպասէր, շարաւրան-  
քի տակ խոստովանեցնելէ ետք զանոնք, դատապարտեց մահուան :

Քաշուած իր խոցին մէջ, որ մութ ու սառուցեալ գնդան մըն էր,  
Վիյոն երեւակայեց Մոնֆօքոնի կախաղանը, գերաններու քառանկիւն հսկայ  
ու բազմաթիւ սարքաւորում մը, ուր հարիւրաւոր կախեալներ, ոմանք կը-  
մախք, ոմանք նեխած դիակ եւ ուրիշներ տակաւին թարմ միս, կը կազմէին  
քստմեծի եւ սարսաղեցիկ անասան մը : Եւ այս զգայուն տղան, տար-  
ած մահուան սարսափէն, յօրինեց իր հռչակաւոր «Լախիսալմերու բալլադ»

և նոյն ատեն շարադրեց ներումի չափածոյ կոչ մը, ուր կը փառաբանէր դատաւորներուն արդարաւորութիւնը, զիտութիւնը եւ բարի սիրտը: Վճիռին վաւերացման օրը, դատաւորներէն մէկը բարձրաձայն կարդաց Վիյոնի դժգոհարանական քերթուածը, որ հրաշք գործեց: Վիյոնի բոլոր ընկերները բարձրացուեցան կախաղան, իսկ ինք դատապարտուեցաւ աքսորի:

Վիյոն կրկին թունց հարաւի ճամբան, բայց այս անգամ շանցաւ Օբլէան քաղաքէն, հասկնալի պատճառներով: Բայց կարծէք չար բախտը իրեն կը սպասէր Լուար գետի երկայնքին: Հապիւ անցած Մէօնի քաղաքի դարպասը, Վիյոն կը ձերբակալուի եւ կը նետուի զնդան, ահաւոր փոս մը, դետի մակարդակէն վար, պատերը խոնաւ, առաստաղը ցած, յատակը ցեխ: Իրբ մտունը կտոր մը ոռւ հաց եւ ջուր:

Այս անգամ ան կը զգայ, որ եթէ երկար մնայ այս զնդանին մէջ, պիտի մեռնի հիւանդութենէ, իսկ եթէ դուրս գայ, ուղղակի պիտի առաջնորդուի կախաղան: Վիյոն այն բանաստեղծներէն է, որոնք մահը տեսած են բառին բուն իմաստով:

Սակայն այս անգամ եւս մահը չյարդեց իր ժամադրութիւնը, թերեւս զթալով այս հանճարեղ եւ անառակ մարդուն:

Ճ Նոկահմբեր 1461ին, Մէսնի քաղաքը ցնծութեան մէջ էր: Եկեղեցիներու զանգակները կը զօղանջէին, տունները եւ փողոցները մաքրուած ու զարդարուած էին եւ երկւեյիներու պատուիրակութիւն մը կը սպասէր քաղաքի մուտքին: Այդ օր, նորոժ Լուի ԺԱ՝ Թագաւորը, որ Փարիզէն կու գար, պիտի անցնէր Մէսնի քաղաքէն: Այդ օրերուն Թագաւորները կը նկատուէին երկնային իշխանութեան ներկայացուցիչները, ժողովուրդին հայրը, եւ ներողամտութիւն ցոյց կու տային իրենց ամէնէն յետին եւ շար զաւակներուն հանդէպ իսկ: Թագաւորը հագիւ անցած էր քաղաքներու պարիսպներուն դարպասը, երբ բանասպանները, նախապէս իրենց ստացած հրահանգներուն համաձայն, բացին բանտերուն եւ զնդաններուն դուռները, պտալով:

— Բոլորդ ալ սգա՛տ էք, Թագաւորը ձեզի ներում կը շնորհէ:

Եւ Վիյոն դուրս եկաւ իր ժութ եւ մահացու նկուղէն ու ինք ալ խառնուեցաւ ժողովուրդին, ծափոջնուեցաւ համար այս ճակատադրական իշխանը, որուն կը պարտէր իր ազատութիւնն ու կեանքը:

Այնուհետեւ, Վիյոնի հետքերը կը կորուզին: Այդ նոյն տարին, Թափառական բանաստեղծը կը գրէ իր զլուխ-գործոցը՝ «Մեծ կտակը», ու կ'անհետանայ հրապարակէն: Ամէն պարագայի, ան այլեւս չի վերադառնար Փարիզ, ուր տակաւին հաշիւներ ունէր արդարութեան հետ: Կը կարծուի, թէ ան քաշուեցաւ վանք մը եւ կամ տարրեր անունի մը տակ ապրեցաւ Լուար գետի շէն քաղաքներէն մէկուն մէջ եւ զբաղեցաւ բեմադրութեամբ:

Անխարհէն վերջնականապէս բաժնուելէ առաջ, իր ճամբուն վրայ հանդիպեցաւ Պլուա քաղաքը:

Գարնանայիւրջի պայծառ օր մըն էր: Հոս ալ կը տիրէր սունական մըթնոլորտ: Վիյոն անցորդէ մը իմացաւ, որ Օբլէանի իշխանը մեծ ճաշկերոյթ մը կու տար իր ազնկան ամուսնութեան առթիւ եւ սեղան բացած էր բոլորին համար: Վիյոն, որ քայած էր առտուրնէ ի վեր, յոգնած էր եւ անօթի: Ինք ալ բունց զղեակի ճամբան եւ մասնակցեցաւ ճաշկերոյթին: Օբլէանի Եարլ իշխանը, որ 25 տարի գերի մնացած էր Անգլիա, քաշուած կ'ապրէր Պլուայի իր զղեակին մէջ: Օբլէանի իշխան տիտղոսը կը տրուի Թագաւորի կրտսեր եղբոր: Հակառակ իր դիրքին, Եարլ օ՞րլէան չէր զբաղէր քաղաքականութեամբ, թէեւ հետապալին իր զաւակը պիտի բազմէր Ֆրանսայի գահին վերայ՝ Լուի ԺԲ. անունին տակ: Ան կը սիրէր տրուեստը եւ կը զբաղէր գր-

կանութեամբ: Եարլ տ'Օրլէան կը նկատուի Միլլէն դարու Ֆրանսայի լաւագոյն բանաստեղծներէն մէկը, մեծազոյնը բլլալով Ֆրանսուա Վիյոնը:

Գրականութեան պատմութեան ամէնէն վիպային դէպքերէն մէկը անկախած այս երկու բանաստեղծներուն հանդիպումն է: Երկուքն ալ գիրար կը ճանչնային անուծով եւ գործով, բայց առաջին անգամ բլլալով կու գային դէմ յանդիման: Անմոռանալի տեսարան: Իշխան բանաստեղծը ետսած իր գահին վրայ, շրջապատուած իր շքախումբով, եւ թափառական ու չարագործ բանաստեղծը, ճամբորդի իր պարկը ուսին, հինգած հագուստներով, որ կը մտնէ ընդունելութեան օրահէն ներս: Եւ բանաստեղծ իշխանը ոտքի կ'առնուի որդեգիր գահին մօտ եւ նստեցուց իր քովը: Իշխանը հրաւիրած էր նաեւ ուրիշ բանաստեղծներ եւ, ըստ այլ օրերու սովորութեան՝ կաղմակերպեց մրցում մը: Այս մրցումին մասնակցեցան Վիյոն, Եարլ տ'Օրլէան եւ շրջանէն 11 ուրիշ բանաստեղծներ: Բանաստեղծութեան ձեւը պիտի բլլար բալլադ, իսկ առաջին տողը.

Մարալս կը մեռնիմ աղբիւրին մօտ

Հարկու լաւագոյն քերթուածները Վիյոնի եւ Եարլ տ'Օրլէանի յորինածներն էին: Իշխան բանաստեղծը, իշխանական վեհանձնութեամբ Վիյոնը հայկեց յաղթական: Յետոյ անոնք առանձնացան ժամերով: Իշխանը աշխատեցաւ համոզել փախտականը, որ մնայ իրեն հետ: Անոր պիտի յատկացնէր հանգստաւէտ սենեակ եւ կեանքի բոլոր յարմարութիւնները եւ թոշակ, որպէսզի իր արողը ուսով նուիրուի բանաստեղծութեան: Բայց ինչպէս ժժ. դարու իր գրչեղբայրը՝ Թեմպոն, Վիյոն հրաժեշտ առած էր գրելու արուեստին եւ կը նախընտրէր թափառական կեանքը: Յաջորդ առտու, ան դուրս կու գար գղեակէն՝ նստուելու համար անծանօթին մէջ: Թէ ի՞նչ ըրաւ անկէ ետք, ո՞ւր գնաց, ե՞րբ մեռաւ — այդ կը մնայ պատմութեան անզոյնութեան մէկը:

Ֆրանսուա Վիյոն այն հազուագիւտ բանաստեղծներէն մէկն է, որոնց համարը եւ ժողովրդականութիւնը երբեք անկում չեն ճանչցած: Ենթոհիւ Եարլ տ'Օրլէանի թոռ Ֆրանսուա Ա. թագաւորի հոգածութեան, Ֆրանսուա Վիյոնի գործերը հրատարակուեցան 1488ին, պատիւ մը, որ շատ քիչերու արուած է, որովհետեւ այդ թուականին տպարանը քանի մը տարուան կեանք ունէր միայն եւ հրատարակուող առաջին գիրքերը կրօնական ու իմաստասիրական բնոյթ ունէին: Իրեն ժամանակակից գրողներուն եւ բանաստեղծներուն գործերը այդ պատիւին արժանացան տարիներ եւ նոյնիսկ դարեր ետք միայն:

Բոլոր գրականագէտները եւ քննադատները Վիյոնը կը նկատեն արդի բանաստեղծութեան ռահիրան: Ինչո՞ւ: Բրովհետեւ Վիյոն բանաստեղծութիւնը դարձուց ենթակայական: Բանաստեղծութիւնը, որ առարկայական էր, այսինքն՝ կ'երզէր ուրիշներու զգացումները եւ տառապանքները, հանգիստացաւ բանաստեղծին ներաշխարհին արտայայտութիւնը:

Ֆրանսուա Վիյոն կը նկատուի ժ.Ը. դարու բանաստեղծներուն նախադրարը եւ ճակատագրի եւ ներշնչումի շատ մը նմանութիւններ կան իր եւ Ներվալի, Պատլէրի, Վերլէնի եւ Թեմպոնի միջեւ:

Վիյոն չէ յորինած երկարապատում գործեր, ան չէ երգած մեծ առասպելներ եւ անպարտելի հերոսներ: Ան ներշնչուած է միայն իր կեանքէն, տառապանքներէն, ուրախութիւններէն, ներաշխարհէն: Եւ պէտք է ըսել, որ

անոր կեանքը՝ իր վերիվայրումներով, իր արկածախնդրութիւններով եւ իր անձկութիւններով, ներշնչումի հարուստ սուեայինքը կը պարունակէր եւ կըրնար նիւթ հայթայթել ունէ գրագէտի: Այս մահադարտին կուրծքին մէջ կը բարախէր մանկական ու անկեղծ սիրտ մը, անմեղ պատանիի մը բուրդը զգայնութիւնները: Ան չարիք կը դործէր, բայց միշտ կը ձգտէր բարիին: Կը զըզը շար իր շարադործութիւններուն համար, թողութիւն կը խնդրէր Աստուծոյ, կը ծածէր կուրծքը, բայց յաջորդ օրը կը տարուէր փորձութենէ: ԺԼ. դասը ու իր միւս գրչեղբայրներուն՝ Պօտիլի, Ռեմպոյի եւ Վերլէնի պէս՝ անոր միտքը արագ էր եւ մարմինը՝ տկար:

Վիյոն կը ներշնչուի իր կեանքէն, իր մանկութենէն, իր տառապանքներէն եւ, մանաւանդ՝ մահուան դազափարէն: Վիյոնի տմբողջ կեանքը եղած է մենամարտ մը այդ անասոր իրականութեան հետ, որ իրեն հետ կը խաղար կատուին եւ մկան խաղը:

Վիյոն ծնած է ու ժեծցած Փարիզի մէջնէն ժողովրդային թաղերուն մէջ եւ եղած այդ թաղերուն մէկ լածը, նախատիպարը «Թըռաւնըր» Կոմբոլին: Ան կը սիրէր կատակել եւ ծաղրել: Կը ծաղրէր իր շրջապատը, իր թըռնածինները եւ ինքզինք: Երբ առիթը ներկայանար ու պահ մը ձերբազատուէր զինք հալածող մղձաւանջէն, կը դառնար շարաճճի, կը կշտամէր եւ կ'անարզէր բոլոր անոնք, որ զինք ցաւցուցին: Եւ յանկարծ գրիչը կ'իյնար ձեռքէն, կը նայէր պատուհանէն դուրս եւ կը յիշէր մանկութեան օրերը, իր մայրը, եւ իր ընկերները, որոնք կախաղան բարձրացան եւ հիմա դարձած են փոշի եւ մոխիր:

Եւ այս լածը ունէր զգալու եւ արտայայտուելու բնածին կարողութիւն մը: Ան իր օրերը չէ անցուցած զպրոցներու նստարաններուն վրայ, եւ գիշերները չէ լուսցուցած յոյն, լատին կամ ժամանակակից մեծ գրողներուն եւ բանաստեղծներուն գործերը ուսումնասիրելով: Հակառակ ասոր, ան ունէր գրական ոչ արհամարհելի պաշար մը: Երբ առիթ մը կը գտնէր, Վիյոն կը կարգար: Երբ իր շարադործ ընկերներուն հետ արշալի կ'ելլէր ճամբորդները կողոպտելու համար, իր տպարանին մէջ կը փոխադրէր քանի մը մատեան եւ հանդիստի պահերուն, ծառի մը տակ նստած՝ կը կարդար:

Վիյոնի բանաստեղծութիւնները 200էն 250 էջ հաշուող հատոր մը հազիւ կը լեցնեն: Բացի իր Պոլիկ եւ Մեծ կտակներէն, Վիյոն գրած է ուրիշ զանազան բանաստեղծութիւններ, որոնք ամփոփուեցան 1489ին հրատարակուած հատորին մէջ: Վիյոնի գրական կեանքը տասը տարին չէ անցած: «Պոլիկ կտակ»ը յօրինած է 1456ին, իսկ «Մեծ կտակ»ը՝ 1461ին:

Վիյոն սիրոյ բանաստեղծը չէ, թէեւ կիներ եւ սէրը ներկայ են իր գործերուն մէջ. Վիյոն, ամէն բանէ տուալ, տառապանքի եւ մահուան բանաստեղծն է:

Ես մեղաւոր մըմ եմ, գիտեմ,  
Բայց Աստուած չ'ուզիք մահս...

Կը կարդանք «Մեծ կտակ»ի 14րդ ութեակէն մէջ:  
22րդ ութեակէն սկսեալ, Վիյոն կ'անդրադառնայ իր անցեալին եւ մահ-  
նութեան եւ կը խոստովանի իր մեղքերը ամենայն անկեղծութեամբ:

— Եթէ դպրոցէն չգիտէիք եւ հետեւէի գառերուս, — կը գրէ մահա-  
պարտը, — հիմա պիտի չպտնուէի այս գնդանին մէջ: Մաքուր սէր չճանչցայ,  
որովհետեւ որք էի եւ անօթի: Տկար գտնուեցայ եւ հետեւեցայ զէշ ընկեր-  
ներու, որոնց պատճառով դարձայ մահապարտ:

Մօրը յիշատակը այնքան վառ է իր սրտին մէջ, որ բանաստեղծը մոռ-

նույնի էր ծանր միճակը, անոր կը նուիրէ «Բալլադ» աղօթելու համար Ս. Կոյսիմ» գործը: Այս բալլադը կը նկատուի իր գլուխ-գործոցնէն մէկը:

Սակայն, ինչպէս ըսինք, Վիյոն ամէն բանէ առաջ, կեանքի ունայնութեան եւ մահուան երգիչն է եւ այս մարզին մէջ ան կը մրցի աշխարհի մեծագոյն քանաստեղծներուն հետ: Մահը իրեն համար անորոշ կամ հեռաւոր գաղտնիք մը չէ, այլ՝ ապրուած իրականութիւն մը, տգեղ եւ քսամենի իրականութիւն մը: Իր գէժ արձակուած մահափնտրին գործադրութենէն քանի մը օր առաջ, ան կը գրէ իր հռչակաւոր «Կախաւորներու քալարը»: Մութ զնգանին մէջ, տարուած իր երեւակայութեան ուժղնութեամբ, Վիյոն ինքզինք կը տեսնէ կախուած՝ քաղմաթիւ ուրիշներու շարքին եւ Մոնֆօքոնի շարաշուկ զերաններուն ու հանդիսատես ամբսին կ'ուղղէ իր խօսքերը.

Մ'որդ եղբայրներ, որ պիտի ապրի մեզմէ ետք,  
Մեզի հանդէպ մի՛ կարծրացնէ՛ք ձեր սիրտը, ...  
Այլ աղօթեցէ՛ք Աստուծոյ, որ գրա՛յ մեզի:

Եւ տարուած իր ներշնչումէն, բունաստեղծը անգերագնացի ուժղնութեամբ կը նկարագրէ կախուածներու տեսարանը, իրապաշտ եւ վարհուրելի մանրամասնութեամբ:

Այս համամարդկային եւ անխուսափելի ճակատագրին մէկ դարձած կայ միայն, Աստուծոյ անհուն զուժը եւ Քրիստոսի սէրը՝ կորուսած ոչխարներուն եւ զղջացող աւազակներուն հանդէպ: Եւ Վիյոն ինքզինք կը տեսնէ խաչուած Քրիստոսի աջին, բարի աւազակին տեղը:

Այս ահաւոր ճակատագիրը ունի ուրեմն մէկ դարձան եւ մէկ սփոփանք, այն համոզումը, թէ մահը համայնական է, եւ մեծ կամ ողորկ, հարուստ կամ աղքատ, թագաւոր կամ մուրացկան չի ճանչնար:

Եւ այս դազափարը սցուն գործնելու համար՝ Վիյոն կը գրէ երկու քալար, մէկը նուիրած էրքեմի իշխաններուն, իսկ երկրորդը՝ էրքեմի տիկիներուն, որոնց մէջ Վիյոն կը յիշէ պատմութեան նշանաւոր գեղեցիկուհիները եւ Հերոսուհիները: Վերջինին երրորդ ութնեակը ամէնէն ծանօթն է.

Շուշանի պէս սպիտակ Պիանշ քագուիմ,  
Որ կ'երգէր ծովաեայշի ճայնով...  
Եւ ժամն, լօրեմցի բարի կոյսը,  
Ջոր անգլիացիները ալիցիմ Ռուանի մէջ,  
Ո՛ւր եմ հիմա, ամենակարող Ս. Կոյս...  
Բայց ո՛ւր եմ անցեալ տարուան ձիւները...

Բանաստեղծութիւնը ինքնեկ է, ան հուստ մըն է թաղուած ընտրեալներու ներաշխարհին մէջ: Բայց այդ հունար ծղելու եւ ծաղկելու համար պէտք ունի սնունդի, եւ այդ սնունդը ընդհանուր առմամբ եւ, մա՛նաւանդ՝ անիծեալ հանճարներու պարագային տառապանք է:

Հոս կը ծագի հարց մը: Եթէ Վիյոն եղած չլլաւ այդ անտակ որդին, այդ շարագործը, արդեօք իր բանաստեղծութիւնները պիտի ունենային նոյն ուժղնութիւնը: Ապահովաբար՝ ո՛չ: Վիյոնի պարագային բանաստեղծութեան հունար արգասաւորող ազդակը եղաւ իր անտակ կեանքը եւ, շնորհիւ իր հանճարին՝ ան յաջողեցաւ այդ տիղմը եւ տառապանքը վերածել ալքիմիական ոսկիի:

ՆՈՒԳԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ



Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՄԱՐԴԸ ՍՐԲԱԳՐՈՂ ՎՐՁԻՆԸ

(ՓՈԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍԻՆ ԱՌԻՔՈՎ)

Փուլ Կիրակոսեան այս տարի տուա անհասական երկու ցուցանակներ, առաջինը՝ Ազրեյն, Անթիխոսի Մար Իլիաս Էկեղեցոյ մէջ, իսկ երկրորդը՝ ամիս մը հաջ, Ճեանին ցուցադրուածին մէջ:

Կիրակոսեան, առաջին առիթով, զեղարուեստաբան Կահրուժեան ներկայացուց Փրանսայի բանաստեղծ ժող Լըպրոթոնի ձևն որ կը նուազար իր այնքան աւ ձեռնարուն երկարաշունչ գերթուածը մեկնարանոց Յի լալիներ, իսկ երկրորդ պարտադրին՝ ստեղծագործական երեսնամեայ կենսագրութի մը հիմնական երեսները բնորոշող իւղաներկով, ըրաներկով, շինական մեղանով եւ անխամառնով իրագործուած Յի յորձուածներ:

Մեր այս համարին մէջ կու տանք առաջին ցուցանակներն անգործարձոց Ս. Կիրակոսեանի յօդուածը, իսկ մեր հետագայ թիւերին մէկուն մէջ պիտի տանք խմբագրութեանս թելադրութեամբ Փուլ Կիրակոսեանի հետ կատարուած ընդարձակ հարցազրոյց մը:

I

Բառագոյն հանդիպումը նորութիւն մը չէ Փուլ Կիրակոսեանի աւելի բան երեսնամեայ զեղանկարչական կեանքին մէջ: Բառն աարիէ ի վեր բազմիցս կըրկներած ժամագրութիւն մըն է այս մտերմութիւնը: Բառին պորութեան ակունքներէն ծաւալող, ներդրուող մթնոլորտներն ու կենդանի խօսքին սրտատրոփները — ինչու չըսենք սրտին համանուագները — մարմնաւորելու պահն է ասիկա, այլ խօսքով՝ անհրեւոյթ հոգեմիտակներուն արոյշ մարմիններ շնորհող ինքնավստահ վրձինին արարական ժամանակը՝ գերթուածի մը դունային թարգմանութեան ակնթարթը բլլալէ առաջ եւ վերջ:

Սողոմոնի «Երգ երգոց»ին խոր փիլիսոփայութիւնը եւ սիրոյ պատարագները թատերական կառոյցի մը ուժեղ յարակցութիւններով վերագրած Ունտի Հաթի թարգմանիչ քնարախաղէն կը սկսի Կիրակոսեան — բանաստեղծութիւն

հին մտերմութիւնը, ձրպրան Պալիլ ձրպրանի «Մարգարէն» անուն գործին իմացական Էյաիէտերէն թափ առած՝ կ'անցնի զգացողութեանց նոր տարածութիւններէ, «Եգիպտոսի կոյր աշուղդին» շէյխ Իմամ Երֆի ներքին տեսողութեամբ բանուած ողբերգութիւններուն ի լուր, իր կարգին, կը թանձրացնէ բանաստեղծին պոռթկումներուն սրտակեղեք մթնոլորտը, Ունտի Հաթի «Առաքել լուսին» միջնու իր սկզբները երկարազ մտերմով՝ սիրերգութեան աննրթեղէն երջանկութիւնը կը բազմապատկէ դունային բազմահնչութեան միստիք մաքրութեամբ, Իլիաս Տէյրիի «Եր մնա միայնակ ու կը գրաս» սեւ մէջքի էջերուն փուլ Էկոյ մարդկային յարաբերութիւններուն անհեթեթ անկումին դիմաց՝ ըզրպերկ վրձնաշարագրութեանով կը պայքարի մարգուն յաղթանակին ի խնդիր, եւ այսպէս, շարունակ:

Առաջին աչքով ստացուած այս տը-

Բնութեան ամենաբազալի ստեղծագործութիւնը մարդն է:

Մարդը ինքը բնութիւնն է: Միայն մարդու միջոցով է բնութիւնը ճանաչում իրեն: Դա մարդու մեծագոյն կրթանկութիւնն է: Հսկայական, անվերջ բնութիւնն է փոփոխի մի տարած, որ իր մէջ կրում է այդ անսահման մեծութիւնը:

Արուեստը կենց այդ օլորսմերից է, որ պիտի է ազդեցութիւն գործի մարդու վրայ, բարձրացնի, սւժ ապ եւ ոչ թէ բնկնի նրան: Արուեստը մարդուն պիտի է կեանքի, պայքարի կռիւի համամարդկային, համաժամանակային յուսատու ժողովների եւ ոչ թէ թուաբափ անոյ սեւեռների, ցուտի դեպքերի ներկայացման միջոցով:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ



Նիրակոսեանի թուաւոր ծառերէն

պատրութիւնը պարագայական հանդիպումի մը սահմաններէն շատ անդին կ'անցնի: Պէտք է աւելցնել անմիջապէս, որ կիրակոսեանի պարագայական թէ ծրարողութեան գունային ընթերցումները բնութացիկ պատկերագրութեան չեն, իսկ քերթութեանն ու արձակ ստեղծագործութիւնները գրգիռներ են պարզապէս, որպէսզի գեղանկարիչը սեփականացնէ այդ էջերուն թրթռացող յոյզերն ու կացութիւնները, զանոնք անձնաւորէ իր կեանքի փորձով հաստատուած աշխարհաւայելացային ինքնուրոյն յատկանիշներով ու գոյներով՝ գեղարուեստական գրութեան մը վերաստեղծագործման երկրորդ հնարաւորութեան մասին վկայականոյ արուեստագէտի ամուր հողին մը բայ կանգնած:

Այս սեփեղ որակն ու ներքին անկախութիւնը կը պարզէին նաեւ հայմանկամ բանաստեղծ Ժազ Լըպրոթոնի «Ան որ կը

հաւատար իր աչերուն ու ձեռներուն» խորագրեալ աղօթք-գերթութեանն եւ կիրակոսեան-միջինին մտերմութենէն ծընունդ առած ՅՏ լաւիները, որոնք ցուցադրուեցան Ապրիլի աւարտին, Անթիլիասի Մար Իլիաս եկեղեցւոյ մէջ: Կրօնաբոյր մթնոլորտի մը ներքեւ ընթերցող աչքին հետ զրուցող Փօլ կիրակոսեանի նորագոյն յղացումները — ինչպէս էին նախապէս յիշուած պարագայական իր միւս ստեղծագործութիւնները — գեղանկարչական պատասխաններ էին, որոնց միջոցաւ կեանքի անզուպէի խնթութեամբ տենդաւար այս արուեստագէտը կը բանար իրեն հետ յարաբերող բանաստեղծին էութիւնը այնպէս որ ամաթիք հարցումներուն կծկուող օղակները՝ մարդուն հանդէպ տածած իր անհուն սէրն ու հաւատքը շեշտագրող ճշմարիտ արուեստագէտի լուս վճռակամութեամբ:

Այդ իսկ պատճառով, մարդը ամէն

բանէ զերիվեր եւ ամենաթանկազին ար-  
ժէքը դաւանած այս զեղանկարէլը, տը-  
ղամարդկային վեհանձնութեամբ, հոս  
եւս կը դառնայ մարդուն անպարտու-  
թեան վկայարեբը, անոր յաղթանակը  
փառաբանող ինքնավստահ ձայնը եւ եր-  
ջանկութեան զերազոյն ուղին արարչու-  
թեան մարտին մէջ մատնանշող լաւատես  
ուղեցոյցը :

II

Բառ-գոյն-երաժշտութիւն ամբող-  
ջական արուեստը մնայուն նպասակի վե-  
րածած Փօլ Կիրակոսեանի նորագոյն զը-  
ծանկարներուն աշխարհէն ու յեղուն  
ներս թափանցել փորձելէ առաջ, կը կար-  
ծենք, որ անհրաժեշտ է քանի մը խօսք  
ըսել տուեալ ստեղծագործութեանց ներ-  
քին կրակը արթնցուցած հովերուն, այ-  
սինքն՝ Ժազ Լըպրոթոնի եւ իր «Ան սր  
կը Խաւաւար...» գերթուածին մասին :

Ո՛վ է Լըպրոթոն եւ որո՞նք են իր  
ինչորոյ առարկայ գործին ներշնչման  
աղբիւրները : Լոնտոնէն Փրանսացի Ժո-  
ղովուզին ուղղուած Շարլ տը Կօլի կո-  
չին ընդառաջելով՝ ան կը զրուի կամա-  
ւոր եւ, 1940ի Յունիսին, Ալամէյնի ճա-  
կատամարտի ընթացքին կ'ենթարկուի ա-  
հաւոր արկածի մը : Արձակման համար  
պատրաստուած ձեռնառումը, կուռի  
մէկ տաք պահուն, կը պայթի երիտա-  
սարգ կամաւորին ձեռքին մէջ, որուն  
հետեւանքով ան կը կորսնցնէ իր երկու  
ձեռքերն ու տեսողութիւնը :

Մահուան սարսափին հետ պարտա-  
զրաբար «մտերմացած» հաշմանդամ դեմ-  
ւորը կը փոխադրուի հիւանդանոց, ուր  
ամիսներ շարունակ կ'ապրի մեծ տրամ  
մը : Ֆիզիքական ու հոգեկան տառա-  
պանքները անպաշար կը մաշեցնեն ան-  
կողմին զամուսն երկուսն առոյգ կա-  
մաւորը, բայց հողեփուլովան հարուած-  
ները վերջ կը պտնեն, երբ իր նմանը բա-  
պաններու ելած Լըպրոթոնի հոգիին կը  
սկսի անհիւ անհուն սէր մը մտքը արտ-  
բածին նկատմամբ ու կը յայտնադործէ

«Ճշմարտազոյն Երջանկութիւնը» : Ապա,  
ան իր կեանքը կը նուիրէ գրկեալ մար-  
դոց եւ Ատոռոյ ծառայութեան : Կը  
հաստատուի թիթեղի եւ տախտակի բե-  
կորներով կառուցուած հիւղաւանի մը  
մէջ եւ իր հաւատացեալ տիկնոջ հետ կը  
լծուի ընկերային ու սենտիքայական գոր-  
ծունէութեանց :

Պայքարի այս ոճը, սակայն, կը բա-  
խի անյողթանարեյի խոշորութեանը :  
Լըպրոթոն կ'ըմբոստանայ «Ճշմարտա-  
զոյն Երջանկութեան» դէմ, կ'ըլլայ ան-  
հաւատ եւ կ'անդամագրուի Ֆրանսայի  
Համայնավար կուսակցութեան : Ութ տա-  
րի շարունակ կը պայքարի իրրեւ ուխ-  
տեալ համայնավար, բայց հոս եւս կը  
ճաշակէ դառնութեան բաժակներ : Կը  
հասնի ոչնչապաշտութեան խեղանոր  
սահմաններուն եւ, անբուն գիշերներու  
հողեկան փոթորիկներէն ետք՝ «անառակ  
որդին» — ինչպէս կ'ըսէ ինք — կը վե-  
րադառնայ իր իսկական Տիրոջ :

Այս կենսափորձէն մեկնած՝ ան կը  
դէ՛ աղօթքին խաղաղութեամբ յազեցած  
հաւատացեալի իր թուղթը, իբրեւ վկա-  
յութիւն ընտրելով Աւետարանի քա-  
րոզած կարգ մը ճշմարտութիւններ :

Մահուան եւ պատերազմի, ազատու-  
թեան եւ սիրոյ, զրկանքի եւ երջանկու-  
թեան, շուայտութեան եւ հոգեմաւոր  
արժէքներու, տոռապանքի եւ հաւատքի  
ծանօթ թեմաներուն շուրջ հարցադրու-  
մեր կատարող աղօթք մըն է Լըպրոթոնի  
գերթուածը, զրուած՝ սեփական մոր-  
թին վրայ ապրուած ցաւերու եւ կոտորա-  
ցող հոգիի մը համամարդկային թելա-  
դրանքներով :

Մեկնելով այս տուեաներէն, Փօլ  
Կիրակոսեան կը բանայ քրիստոնէական  
փարզապետութեան անաւարտ հորիզոնը :  
Ղազարոսի յարութեան խորհուրդը կ'անձ-  
նականացնէ վերյուշին ընդմէջէն ծաւա-  
լող իր կրօնական դատարարութեան  
մանկական դոյներով, Կանայի հարսա-  
նիքին կերպարներուն կը փոխանցէ իր  
հաւատացեալի էութեան վեհասլաց աղ-  
նըութիւնը, պատերազմի դաշտին վրայ  
նահատակուած անմեղ զոհերու պարզած

ողրերգութեան շարագրման իբրև զըստանակ՝ կը վկայակոչէ մեր ազգային ողբերգութեան ապրելեան մղձաւանջները: Ապա, սիրոյ, հաւատքին, յոյսին ուղեկցութեամբ կը վազանէ մարդկային կերպարները՝ անոնք ըլլան տկար սեռի ներկայացուցիչներ թէ մանուկներ եւ, մանաւանդ՝ կայսրփոխ զանոնք համաձայն իր խոնձուածքային գիծերուն, համոզումներուն, ստեղծադրծելու արարքին մէջ գոյութեան իմաստը ընդզօղ ձեռքին աջիւ ու անգույ մարդասիրութեամբ, բարութեամբ, զարմացող ու զարմացնող մտնկական լուստեսութեամբ:

III

Սպիտակի վրայ սեւով շարագրուած գծանկարը միշտ ալ եզած է կերպար-ւեստին հէնքը: Հոս տեղ չունին տարածութիւնները լեցնելու խողին նպատող գունային հրապոյրները, պատաստին յեղուին մէջ իբրև փոս քոս սարդած զարդանկարչային թէ երանգային աւելորդարանութիւնները, ինքնանպատակ նախադասութիւնները չեն կրնար ըլլալը նել հանդիսատեսին տեսողութիւնը, ընթերցող աչքը գոյներու եւ կատոյցներու մակերեսային ճարպիկութիւններով կամ բունաբոս ողբերգականութեամբ խորելու խողը իր կեղծիքը կը մատնէ առաջին իսկ ակնթարթին, ձեւամոլութեան անկենդան դիմակները վար կ'իյնան ինքնարեւարար, իսկ տաղանդաւոր նկարիչներու պարագային՝ ամէնէն աւելի գծանկարին մէջ կ'արտայայտուի անոնց անհատականութիւնը, աշխարհընկալման փիլիսոփայութիւնը, աշխարհահայեացքին իրաւութիւնը, գեղադիտական լեզուին հասունութիւնը եւ, նոյնիսկ՝ գունային մտածողութեան անխարդախ ապակները:

Աւելին՝ գծային մշակոյթը անմիշտապէս կը բնորոշէ ստեղծագործութեան, բայց մանաւանդ արուեստագէտին դեղանկարչական բնատրուութիւնը, որովհե-


տեւ հոս գոյութիւն չունի գոյնը, իսկ մենք դէմ յանդիման կը գտնուինք միմիայն ստեղծագործական մտածողութեան, անոր առանձնատուկ խոնրուածքին, այսինքն՝ էութեան եւ ամէն աւելորդաբանութիւն մերժող ճեղքն ու բարբարոս մերկ լեզուին:

Այս ճշմարտութեան լուսադէպ ազգայնները կրնան հանդիսանալ ո՛ր միայն, օրինակի համար, Միքիլանձելոյի, սա Վինչիի, Մաթիսի, Փիքասսոյի, Արչիլ Գորգիի, Մարտիրոս Սարեանի, Գրիգոր Սանջեանի եւ Մինաս Աւետիսեանի ածխամատիտով, մատիտով կամ չինական մեկանով գրատուած գծանկարները, այլեւ՝ նոյնիսկ թուղթի կտորի մը վրայ կատարուած անոնց վարկեանական ճեպանկարներն ու սեւագրութիւնները:

Եթէ լեզուական պատճառներն ու թոթովանքները շեշտուած ձեւով իրենց խոցելիութիւնը կը մատնեն անխամատիտով, մատիտով կամ չինական մեկանով իրագործուած թէկուզ աշխատուած գրծանկարներուն մէջ, այնուամենայնիւ, այս պարագան աւելի բուռն կերպով ի յայտ կու գայ յատկապէս լուիններուն մէջ: Չինական մեկանի եւ ջուրի արագ վրձնահարուածներով ստուարաթուղթին վրայ գրառելու այս ոճը փորձաքար մըն է բոլոր վաւերական նկարիչներուն համար: Ատիկա կը պահանջէ ամբողջական թեքնիքի տիրապետած ծայր աստիճան հմուտ եւ արագաշարժ ձեռք եւ, մանաւանդ՝ հոգեկան կեղերոնացման ծայրագոյն կարողութիւն:

Անվերաքննելի նախադասութիւն է հոս գրուած իւրաքանչիւր վրձնահարուած: Վերահսկումի կամ սրբագրութեան հնարաւորութիւնը կաշկանդուած է ի սկզբանէ եւ ուսումնասիրուած գծանկարչութեան աշխատանքային կարելիութիւններէն զեղանկարիչը հրաժարած է կամովին՝ իր առած յանդուգն որոշումին իսկ բերումով:

Անզուսպ զգայնութեամբ, խօսքի ջերմութեամբ, լիակատար հմտութեամբ, վրձնահարուածներու բիւրեղային մաքրութեամբ, պարզ, բայց ժուժկալ զծա-



Մահազոյն անշարժութենէն մինչև յարաբեամ խոյանէր

Հարազրուծի կենսունակ յատկանիչներով բնորոշուող Կիրակոսեանի լաւինները, ինչպէս ըսինք, կ'անցնին տեսանելիին սահմաններէն անդին, կը տարրալուծեն անհրեւոյթ էութիւնը գրաւման գրգիռները արթնցուցած հողելիճակներուն՝ այդ կացութիւններուն նորոգ մարմիններ եւ բովանդակութիւն շնորհելու, վերաերթաւարդացնելու նպատակակէտէ մը առաջնորդուած :

Այդ իսկ պատճառով, հողեկան կեդրոնացման արտակարգ կարողութեան մը ծնունդը հանդիսացող Կիրակոսեանի լաւինները կը յաջողին նուաճել կեանքի ըզրացողութեամբ թրթռուծ, խտացեալ կենսափորձի մը արդիւնքը հանդիսացող բիրեղացած լեզուի մը գծուարին ոլորտները, հողեբանական նախադրեանները կը գետեզին կեանքի ու գոյութեան հարցերը սիրոյ փիլիսոփայութեան պայծառ

լուսարձակներով ընթերցող թելադրական ուղիի մը մէջ :

Ապա, կը սկսի ստեղծագործութեան կազմաւորումը, սպիտակ ստուարաթուղթին վրայ սեւ մելանը կը պարէ տգասօրէն, ինքնավստահ համայնութիւններով, երբեմն անսլով գեղանկարիչին ներքին պիւրկ կշռոյթին, մերթ հոսելով անոր հողեկան խաղաղութեան համընթաց մեղմութեամբ, խտացեալ հողելիճակին անցնելով բնութեան զարմանային հեշտանքին համազօր հաւատքին, որ մահուան գիւղերնէն ետք կը կառչի նորածինի մը ճիշին հետ բարձրացող յորսին, կենդանարար ջերմութեան, պայքարի հրաւերին :

Այսպէս, մահուան ահաւոր ժամկէտին հետ բողբոջող կեանքի հաւատքը կը ճիւղաւորուի ստուարաթուղթին վրայ, սպիտակ լոյսերը կը խեղդեն անէացման

ամենաթանձը կառայցներն անգամ, կը քայքայուն մահատեսիլ սեւ յղացքները՝ մարդուն անպարտելիութեան պայքարը դերասան Նպատակի վերածած արուեստագէտին հաստատակամ կեցուածքին դիմաց, բանաստեղծութիւնն ու կերպարուեստը կ'ընդելուզուն յետ ջրհեղեղեան պայծառութեամբ եւ վրձինը կը նուազէ լինելութեան աւետիսով թեւաւորուած սեւ-սպիտակ քնարերգութիւնը, յաղթանակի ցնծերզը:

IV

Հրոյրոթոնի բանաստեղծութեան համարժէք դժանկարներ ըլլալէ աւելի՝ Կիրակոսեանի պատասխան-լաւինները արծարուած յոյզերն ու մտածումները նոր լոյսով, սեփական հնչերանգով պարզացրեող-սրբադրող ստեղծագործութիւններ են, բարութեան եւ ազնուութեան ամէնէն բարձր յարակցութիւններով ընդարձակուող յորինումներ, ուր բարութիւնն ու ազնուութիւնը անտղին սկնարկով չեն նկատուիր, նոյնիսկ երբ կը ծառայեն ամէնէն արդար, ամէնէն բարի եւ ազնուագոյն նպատակներուն:

Եւ ստիկա Հիմնական առաջին յատկանիւն է Փօլ Կիրակոսեանի գեղանկարչութեան: Առանց պաճուճանքի, առանց յաւակնոտութեան, առանց վերամբարձ տրամադրութիւններու, առանց ոսկերչական խճողումի, ազատ շարադրումին վայրկեանական բռնկումներուն լարուածութեամբ, խոսքեալ մաքրութեամբ ու վարակիչ կենդանութեամբ յագեցած Կիրակոսեանի լաւինները բնութիւնը կը միահիւսեն գործողութեան ընթացքին հետ, բնութեան տարրերը կը վերածեն գործողութեան ընթացքը պայմանաւորող, ուժեղացնող աղակի եւ՝ փոխադարձաբար, ինչ որ կ'ընդգծէ ստեղծագործութեան ուղին՝ կեանքի մէջ սկզբունքի տէր արուեստագէտի էութեան այրութենով:

Այս դժով յատկապէս հետաքրքրական էին Կիրակոսեանի բնանկարները, նորածիններու դիմանկարները — կեանքի եւ յոյսի խորհրդանիշներ, — Աւետա-

րանի հրաշքները վեր-ա-գրող իր երկիւղած դժաւարադրումները, այլ մասնաւանդ Վաղ Վերածնունդի վսեմազոյն պարզութեան որակը նուաճած ողբերգաւորնէ ստեղծագործութիւնները, ուր իրերուն եւ մարդկային մարմիններուն նշանակութիւնը յաւերժացնող հմտութիւնը համարեա՝ անտեսանելի է, դեղանկարչական լեզուն դասական է, ժամանակակից եւ ինքնուրոյն, ու տակաւին՝ մտերիմ անցեալ ու դալիք այն բոլոր ժամանակներուն, որոնց հետ գեղանկարչի չը ապրած է կանխապէս, ստեղծագործութեան պահուն, իր ներքին ժամանակին անդադար այլափոխուող եղանակներուն հոլովոյթով:

Այսպիսի մթնոլորտի մը մէջ կը ժամանէ մարդը, զի պատկերի իւրում մարմին առած գեղեցկութիւնը՝ լինելութեան ամէնօրեայ հրաւէր իբրեւ եւ իբր աղհրաւէրի նուաման լուծումները իրեն հետ բերող միակ կարելիութիւն:

Կեանքը կը շրջանցէ մահուան ու պարտութեան ամենավտանգաւոր պատկերներն անգամ, կը սկսի ստեղծագործութեան ճամբորդութիւնը, լոյսը կուզայ խաւարին արդանդէն, կ'ըլլայ աւարտին սկիզբը, իսկ ստեղծագործ մարդը՝ անաւարտ-սկիզբ, նշանակութիւն եւ խորհուրդ:

Եւ, յայնժամ, գեղանկարիչը կը խօսի իր խոսքը ու, Սենթ Էկզիլիերիէ բառերը կրկնելով՝ կ'ըսէ. «Սո կալ գամ իմ մանկութեամբ աշխարհէ...»:

V

Մանկութեան աշխարհին մաքրամաքուր ակունքներէն ժամանելու այս պահը պատրաստութիւնն է լինելութեան ակրիթարթին: Ամէն ինչ կը ծնի երկրորդ անգամ: Առաջին քայլը կը նետէ մահուան դաշտէն ներս, ապա՝ երկրորդ քայլը, երրորդը, չորրորդը... Կը հաշտուին հակադիր կողմերը կեանքին, Վերջնական մեկնումի ցանկութիւնը կ'ըլլայ աւելի վսեմ ժամանման իղձէն, եւ այս խոր տեսչին կը յաջորդեն հեշտանքի,



Հաւատով վեհացած կերպարներ

վերացման, լիացման երջանիկ ու մշտաբարձր զգայնութիւններ:

Այս հոգեվիճակը կ'աճէ առաւել, երբ արագ վրձնահարումներու այս փայլուն հմտութիւնը ձեռքին կ'ամփոփէ իր արեան անդրադարձները ա'յնքան ուժգին հարուածներով, ա'յնպիսի՛ Ղդապիրիկ շարադրումով մը, որ անոնք կը ձգեն ա'յն սպաւորութիւնը, թէ՛ չինական մելանը էութիւնն է իւրաքանչիւր մարմինի, թէ՛ հեղուկ մելանը արարչագործ արիւնն է, ա'յն արիւնը, որ ստուարաթուզթին տարածութիւնը կը հրդեհէ ներաշխարհային շոյսերով եւ, միւս կողմէ՛ ինքնարոցար-

ծարծման զինովութեամբ հեղինակը կ'ապրի իր երկունքը եւ կ'ըլլայ մշտաուեւ յինչութիւն:

Սեւ ու սպիտակ եւ թիւով 66 յօրինումներով, Փօլ կիրակոսեան կարծես անզամ մը եւս լռելիս կը յայտարարէ, թէ ինք մաս կը կազմէ զրկեալ, անիրաւած ու շահագործուած մարդոց խումբին, կը կանգնի անոնց կողքին, քայց կը մերժէ ընթանալ սլարտեալի հողերանութեամբ, որովհետեւ Նոյնիսկ սեւով շարագրուած կերպարներուն մէջ մի շարժումին մէջ ան կը ցանկ յոյսի աղաղակներ, անկաշկանդ սաւառնումի պոսթիւմներ, որպէսզի իրենց սեւ արտաքինին միջոցաւ անոնք քարձրացնեն իրենց հոգւոյն սպիտակ երջանկութիւնը եւ ընդհուրովին զփերագոյն ճշմարտութեան կաթնասպիտակ պատարագին:

Արդարեւ, այս լաւներուն մէջ առկայ է մարդուն անզարտելիութիւնը սաղմոսերգող միտքի լաւատեսութիւն մը, — հրաշագործ ձեռքին ապրած երջանկութիւնը, իր կերտածով զինովցած աշքին վերացումը, խղճմտանքին թափանցիկ իրաւութիւնը: Կարծես թէ կիրակոսեանի արուեստը աղօթելու նօր ոճ մըն է, ճիսակատարութիւն մը:

Ստեղծագործ, երեւակայող, տեսլահար եւ անհանդարտ մարդուն, պարզ մարդուն, համեստ մարդուն, իրաւ մարդուն նկատմամբ իր տածած հաւատքին հաստատադրումն են Փօլ կիրակոսեանի նորագոյն զծանկարները: Կարծես թէ հաւատքի այս քերթուածները ըլլան փառաբանանքը ա'յն մարդուն, որ իր երազին մարմին կու տայ իր իսկ ձեռքերով՝ զայն իր խղճմտանքին մէջ շաղկէ ետք, ճակտի քրտինքով ջերմացնելէ ետք եւ իր մարմնին յոգնութեան աւելնով, շունչով ու ժամանակով մկաննիկ յետոյ:

Հոսկէ իր յօրինումներուն կենսախայտ կենդանութիւնը, լոյսով ողորուններ, աւարտած գործին եւ դիտող մարդուն միջեւ առաջացող կենդանի կապին զազտնիքը, որովհետեւ կիրակոսեանի համարեա՛ր ըլլոր գործերն ալ արդիւնքն են զեղանկարչին հոգեկան ալիկոծում-

ներուն՝ զգայնութիւնները ամփոփող բա-  
նաստեղծ վրձինի մը անմիջական բուխ  
հայրմեները բլաւու իսկ իրողութեամբ:

Գծանկարին տարբերուն միջեւ բարդ,  
բայց մօխտ յարարերութիւններ առաջա-  
ցնող իր ուժեղ, մաքուր ու թելադրա-  
կան լեզուով՝ Փօլ Կիրակոսեան կը հա-  
ւասարակէ՛ն Հորիզոններն ու կերպար-  
ները իր գծանկարներուն, միաժամանակ  
անոնց փոխանցելով երկար ժամանակի  
հասունացմամբ բիրտեղացած երեւակա-  
յութիւնն պայթած սեփական մարմին եւ  
նոյնքան սեփական էութիւն:

Եւ, իրաւամբ, գեղանկարչական այս  
ոճը ապրելով՝ ան կը սպասէ հրաշքին  
յաղթանակին, որպէսզի արտայայտու-  
թիւնը մեղք մը ի՛ր յաղթանակը, որով-  
հետեւ արտայայտութեանց հետ կը սկը-  
սին մարդուն պատմութիւնները, — Ա-  
զամէն ի վեր կրկնուող ինչպէ՞ս սիրելու,  
ինչպէ՞ս սիրոյ միջոցաւ ապրելու, սիրոյ  
համար զոհուելու եւ նոյնինքն սիրոյ  
հրաշագոր յարութեամբ վերածնելու յա-  
ստանական հարցերը:

Վրձինով մը, որ երկիւղածութեամբ

կը խոնարհի մարդոց պէճքերուն առջեւ,  
սեւ ու սպիտակ լեզուով մը, որ իր ամէն  
մէկ տառին մէջ կ'ամփոփէ ծիածանին  
եսթը երանգները, թուղթի վրայ ջղա-  
յին շարժումներով սեւագրող մեղքի մը  
անրոնացրօս արապութեամբ, իր նմանին  
վիշտը բաժնող խղճմտանքի մը աղա-  
մանդեայ խտութեամբ, իր ազգային հրո-  
շնդութեան ժուժկալ գեղեցկութեամբ,  
իրաւութեամբ, հաւատքով եւ սիրով՝  
Փօլ Կիրակոսեան ո՛չ միայն կը հաստա-  
տէ տառապահար մարդոց հետ ապրած  
իր խոր եղբայրութիւնը, այլեւ կ'որոնէ  
ամենարարդ ողբերգութիւններուն լու-  
ծումները:

Վերջնապէս, երկիւղածարար նուաճ-  
ած լուծումներով ան կը զրուցէ իր եղ-  
բայրներուն հետ, իսկ հաւատացեալի յա-  
րատեւ պայքարով մեղք բերուած հան-  
դիպումը կ'ըլլայ համազօր ազատու-  
թեան՝ կասկածամտութեամբ տատանող  
մարդոց հոգիներուն մէջ ազատօրէն պայ-  
քարելու, սիրադորձերու եւ արարելու  
սրբազան կոչ եւ լիերաւ հրաւէր:

ՍԱՐԳՅՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



Վ. ՕՇԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Արմէն Մարտիրոսեան սերնդակից է կողոյսանին ու Յարութիւնեանին, աշխիւքն՝ արդիական միտք է արդիական է միտքը, որուն կեդրոնացումն առանցքը իմացական ու համաժողովային տաղնապի մը անձկութեանը մէջ արժատագած է եւ որուն հայիթին մէջէն անկիւս կ'ապրի աշխարհի ու իր ներկայութիւնը: Այս տաղնապը, մեր օրերուն՝ ժամանակի եւ Լեզուի խնդիրն է, որմէ կը բխի Գիտակցութեան ու Տարածութեան ինդիքը: Աւելցրենք անմիջապէս, որ Մարտիրոսեանի մօտ այս տաղնապը չի գրաւեր ամբողջութեամբ ու միշտ կեդրոնական այն դիրքը, որ ունի միւսներու գործին մէջ: Մարտիրոսեան շունի խառնուածքի հասունութիւնը, արուեստի քննարկի տոկունութիւնը իր ընկերներուն: Ձունի մանաւանդ ճաշակը ու մտային պաշարը, ընթերցումներու ու մշակութային շինարարութեան բարձրը, որոնց շնորհիւ բանաստեղծ մը չի գործեր ուրիշներուն սխալը, կը փախի տափակութիւններէ, կրկնութիւններէ, տպաստեղու դիրքին ճեւերէ, բողբոջած քննաշնորհ: Մարտիրոսեանի գործը Հայաստանի ու Սփիւռքի միջինէն շատ բարձր է՝ իր որոշ կողմերով, հակառակ անոր, որ շատ յաճախ երջանիկ, անդիտակ, միօրինակ աւանդակներովեան մը Ծանկին նստած՝ մտիկ կ'ընէ անոր հեքիաթներուն, մինչեւ որ քունը գայ: Հակառակ այս հայկական ոտմանքիդին, ինքնատիպ խօսք ունի ան, իւրայատուկ ոճ ու լահնական անմեակաւնութիւն:

Մարտիրոսեան առաջին անգամ հրատարակ կ'իջնէր 1971ին, աստիպական բարակուկ հատորով, զոր համետարէն կը կոչէր «Բանաստեղծութիւններ»: 1978ին լոյս կ'ընծայէր երկրորդ հատոր մը — «Թռչուններ», շատ աւելի հասուն, լուրջ ու թելադրիչ՝ հակառակ անոր, որ տակաւին չէ կրցած ազատագրուիլ իր կենսագրութեան հմայքէն ու նեղուիլ ու երթալ աշխարհի մարդոց ժամագրութեան:

«Բանաստեղծութիւններ»ը կը բացուի ահաւոր սխալով մը, քերթողական մեծ միջոցակով մը: Մարդ կը վսխմայ հարցնելու ինչպէ՞ս եւ ինչո՞ւ օժտուած, կորովի երիտասարդ բանաստեղծ մը, իր առաջին ֆայլին իսկ, ճաշակի այնքան արտաոց մեղք մը կը գործէ՝ հրատարակելով հետեւեայր, տափակութեան գլուխ-գործոց մը, որ միայն 10 տարեկան աշակերտ մը պիտի ուզէր ստորագրել:

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ աչքերի մէջ դու արթնանում ես,  
Դու արթնանում ես բարի լոյսի պէս,  
digitised by A.R.A.R.®

Եւ քեզմով եմ բացում աչքերս :

Այս աշխարհի մէջ՝ դու իմ աշխարհը,  
 Այս աշխարհի մէջ՝ իմ հայրենիքը.  
 Առաստաղդ՝ լույս,  
 Եւ յատակդ լույս,  
 Եւ պատկերիդ մէջ՝  
 Հաւատարմներ կան  
 Լոյսի՛,  
 Լոյսի՛,  
 Լոյսի՛ :  
 . . . . .  
 . . . . .

*Ոտանաւորը կը շարունակուի այսպէս... : Ոչ մէկ վայելեան իմացա-  
 կան ուժի մը գոյութիւնը, մտքի ստեղծագործ ճիգին մղումը կարելի է զգալ :  
 Ու այս ճապարհութիւնը կը վարակէ մեծ մասը մնացեալ քերթուածներուն :  
 Այսուհանդերձ, կ'արժէ խօսիլ քանի մը պատկեր-սեմապոլներու մասին, ու-  
 որոնց շուրջ կը զարգանայ հատորը — փողոցէն քաղաղ մարդը, թափառական,  
 երգող պնչուն, մայրամուտի ճամբան, բանաստեղծն ու աշխարհը : Զգացում-  
 ները չեն խտանար, չեն պայթիր, գաղափարները չեն խորանար, չեն զար-  
 գանար ու քերթողը տեղ-քայլ կ'ընէ իր մանրանկար ապրումներուն շուրջ,  
 ունէ հասարակ տաղաշտփի նման : Սակայն տեղ-տեղ կարճ սողերու, կարճ  
 քերթուածներու մէջ շատ զղայուն, բայց որոշ իմաստով ալ անանձնական,  
 հեռաւորութենէ արտայայտուող կեանքի մը արձագանքը կայ : Տեղ-տեղ կը  
 մօտենայ արձակին նոյնիսկ — հաւանաբար սեւակեան ազդեցութիւն մը, այդ  
 կրկնուող տողերու, պատժողական ոճին, անպաճոյճ նկարագրութիւններուն  
 մէջ : Տոկուս արժանիքներով ու աւելի տոկուն թերութիւններով օժտեալ քեր-  
 թող մը :*

*Իր աշխարհը՝ աշխարհն է անկարելի, յայտեցած ցանկութիւններուն,  
 աննպատակ թափառող յուսահատ մարդոց, հեղինակի ծիծաղին, որ կը սա-  
 ւառնի բոլորիս բարձրութեան կամ ցածութեան, աշխարհը իրարու անհա-  
 զորդ մարդերու : Կեանքի անյուսութիւնը ու մահուան յաճախանքը, յիմար  
 ապախիւրտը, օրուան մը շփի պոյութիւնը ու անոր կապուած անկալութիւն-  
 ներուն, յոյսերուն ու երազներուն շիջումը երեկոյեան արեւուն հետ — ծանր,  
 փտանկաւոր թեմաներ են ասոնք, որոնց միերւծումին ու լուծումին համար  
 բարձր մշակոյթ ու մութ-պոյն փորձառութիւն անհրաժեշտ են : Ու, մա՛նա-  
 ւանդ՝ ստեղծագործական երկար շունչ — ինչ որ չէ պարագան Մարտիրոս-  
 եանին : Ահա իր լուսապոյն քերթուածներէն մէկը, կառուցուած կեանքին ու  
 անոր անրիժ, գեղեցիկ սլացքը քայքայող՝ մահուան սխտին միջու տարուող  
 պայթարին շուրջ : Յայտնի է, որ գրութիւնը նախարան մը լոկ կրնայ բլլալ,  
 որովհետեւ թեման հազիւ ուրուազծուած՝ արդէն կը հատնի ներշնչումը :*

Ճակարկ թուումների քերթի տակ զանաւած  
 Արդարաստաններ կան.  
 Երանք գործունի են՝  
 Իրար մօտեցնելու  
 Թուիչի եւ մտնում գաղափարը :  
 Մարդկանց շշուկներում ու քառերի վրայ  
 Անբնութի սեռումի

Մաղում է ծնունդի եւ մտնում  
 գրացողութիւնը.  
 Որն այդպէս, հաւ-հաւ,  
 Յօգ առ ցօղ թափում է  
 Օրերի քերթիկների խորքում,  
 Եւ մարդիկ այդպէս՝  
 Հաւատարմութեամբ են

Դրանց յանձնակա՞ն խոնարհութիւնը...  
 Իսկ Սոնամ առում է՝  
 Գլուխը հարք,  
 Այգալե,  
 Հենց այգալե էլ կարելի է ապրել.  
 Խոնու են խոտերը,  
 Քայունները.  
 Օրերը,  
 Ամէ՛ն ինչ խոնու է,  
 Ուրեմ այգալե,  
 Հենց այգալե էլ, այժր. կարելի է ապրել:  
 Հայրսո՞ք քայունների քիւրի տակ պահուած  
 Սարգստայանները մէկ-մէկ արթնացան,  
 Ընկաւ քայունը.

Ս. Մարտիանց շրջակները  
 Փակագրի պէս փակուցին մէկ-մէկ՝  
 Մտաւած օրերի քերթիկների վրայ,  
 Իսկ Սոնամ առում է՝  
 Ո՛րի, որ մտաւ քայունը.  
 Յի՛նչ, կը բացուեմ  
 Ձերի շրջակների փակագները,  
 Եւ գլուխը հարք.  
 Այգալե,  
 Հենց այգալե էլ, այժր. կարելի է  
 ապրել!  
 Խոնու խոտերի,  
 Խոնու քայունների  
 Եւ խոնու օրերի կարեւորութեամբ:

*Ասոր նման զեռ կան քանի մը բաւական տանելի զերթուածներ ալ —  
 «Հեւուում մշուշների միջով արթնանում են բաւերը», «Յիթեղը գիտեր»,  
 «Հնձուտարք», «Այնտեղ, ուր քարանում է լոյսը», «Տանը՝ պատերից», «Երանմ  
 ծնում են»: Նոյնպէս յաջողուած կրնար ըլլալ «Ապրած պաները լուս տրոր-  
 ւում են», հի՛շ խորացուէր անցեալ-ժամանակ-գիտակցութիւն խորհրդաւոր  
 յարակցութիւնը: Ահա այդ զերթուածին յաջող մասը.*

Ազրած պաները քաների տեսով փարպուում են  
 Քափուած տերեւների դեղին գերեզմանում,  
 Եւ մարդկանց շրջակների վրայ  
 Հնչիւնների տեսով  
 Պահպանում են աշման յիշողութիւնը:  
 Ազրած պաները լուս օրօրում են  
 Ժամանակի գալիք նժոյգների վրայ  
 Տարածութեամ գալիք նմաններում  
 Եւ օրօրում են ժամանակը,  
 Եւ տարածութիւնը օրօրում են:  
 Եւ ժամանակի գալիք նժոյգները  
 Տարածութեամ գալիք նմանների միջով

Իրենց հետ տօնում են  
 Ազրած պաների օրօրացները,  
 Եւ աշխարհը լցում է օրօրացներով  
 Եւ լցում է  
 Քափուած տերեւների  
 գերեզմաներով,  
 Որում  
 Մարդկանց շրջակների վրայ  
 Հնչիւնների տեսով  
 Պահպանում են յիշողութիւնը:

*Մեզմ, ճօճուն սա զերթուածը, որ իր լուքէն կը վախեայ կարծէք,  
 Ի՞նչ պէտք ունի աժան, գիւրին կրկնութիւններու միջոցով ազաւարութիւն  
 ստեղծելու, երբ բանաստեղծական տառը երեւակայութեամբ մը պաշտպան-  
 ւած է:*

*Մարտիրոսեանի երկրորդ հատորը՝ «Քայուններ», տաղիկին բարբ  
 հիմնական թեմաները բերեղացումի կը հասցնէ ու աւելի կարողի ու հասուն  
 տաղանդով գրուած է: Ինչքան արթնութիւն Ե արտաւան ընթացքի...:  
 Նախ՝ ազգային թեման արտակարգ խորք մը ստացած է: «Անի-1975» զեր-  
 թուածը յաջողուածը մըն է, ուր շատ վտառէ, ինքնաբերական մեքով մը հարց-  
 թեան վերացական, բարոյական նշանակութիւնը, անոր յախանական  
 գաղտնիքը կ'առնուի անցեալէն ու կը նետուի զէպի հետաքր արդարեւ, տ-  
 անց որեւէ շարդի ու նախ: Ահաւասիկ զերթուածը իր ամբողջութեամբ.*

Փնտիր քն անցեալը  
 Եւ քն դէմքը ներկայ

Եւ քեզանով եմ բացուում աչքերս :

Այս աշխարհի մէջ՝ դու իմ աշխարհը,  
 Այս աշխարհի մէջ՝ իմ հայրենիքը .  
 Առաստաղդ՝ լոյս,  
 Եւ յատակդ լոյս,  
 Եւ պատկերիդ մէջ՝  
 Ճտագայթներ կամ  
 Լոյսի՛,  
 Լոյսի՛,  
 Լոյսի՛:  
 . . . . .  
 . . . . .

*Ոտանաւորը կը շարունակուի այսպէս . . . : Ոչ մէկ մայրկեան իմացական ուժի մը գոյութիւնը, մտքի ստեղծադործ ճիւղին մղումը կարելի է զգալ : Ու այս ճապարակութիւնը կը վարակէ մեծ մասը մնացեալ քերթուածներուն : Այսուհանդերձ, կ'արժէ խօսիլ քանի մը պատկեր-անկախիտ մասին, որոնց շուրջ կը զարգանայ Հատորը — փողոցէն քաղոյ մարդը, թափառական, երկուզ պնդուն, մայրամուտի ճամբան, քանատեղծն ու աշխարհը : Զգացումները չեն խտանար, չեն պայթիր, զաղափարները չեն խորանար, չեն զարդանար ու քերթողը տեղ-քայլ կ'ընէ իր մանրանկար ապրումներուն շուրջ, սեւէ Հասարակ տաղաչափի նման : Սակայն տեղ-տեղ կարճ տողերու, կարճ քերթուածներու մէջ շատ զգայուն, բայց որոշ իմաստով ալ անանձնական, Հեռաւորութենէ արտայայտուող կեանքի մը արձագանգը կայ : Տեղ-տեղ կը մտնենայ արձակիկի նշխրակ — Հաւանարար սեւական աղեցութիւն մը, այդ կրկնուող տողերու, պատմողական ոճին, անպաճճուն նկարագրութիւններուն մէջ : Տոկուն արժանիքներով ու աւելի տոկուն թերութիւններով սփտեալ քերթող մը :*

*Իր աշխարհը՝ աշխարհն է անկարելի, չյոգեցած ցանկութիւններուն, աննպատակ թափառող յուսահատ մարդոց, հեզմանքի ծիծաղին, որ կը սաւաննի բոլորիս բարձրութեան կամ ցածութեան, աշխարհը իրարու անհաղորդ մարդերու : Կեանքի անյուսութիւնը ու մահուան յաճախանքը, յիմար ապաւիրուող, գրուան մը շարք գոյութիւնը ու անոր կապուած անկախութիւններուն, յոյսերուն ու երազներուն չիջումը երեկոյեան արեւուն հետ — ծանր, վտանգաւոր թեմաներ են ասոնք, որոնց մերժումն ու լուծումն Համար բարձր մշակոյթ ու մութ-դոյն փորձառութիւն անհրաժեշտ են : Ու, մահաւանդ՝ ստեղծադործական երկար շունչ — ինչ որ չէ պարագան Մարտիրոսեանին : Ահա իր լաւագոյն քերթուածներէն մէկը, կառուցուած կեանքին ու անոր անբիծ, զեղեցիկ սլացքը քայքայող՝ մահուան ախտին միջիւ տարուող պայթարին շուրջ : Յայտնի է, որ գրութիւնը նախարան մը լոկ կրնայ ըլլալ, որովհետեւ թեման հազիւ ուրուագծուած՝ արդէն կը Հասնի ներշնչումը :*

Ճայրող քաղաքների քեւերի տակ պանուած	Մազոււմ է ծնունդի եւ մահուան
Սարդաստայնների կամ.	զգացողութիւնը.
Նրանք գործուել են՝	Որն այդպէս, հաս-հատ,
Իրար մտեցնելու	Յօդ առ ցօղ քաղաքում է
Թռիչքի եւ մահուան գաղափարը :	Օրերի քերթիկների խորքում,
Մարդկանց շշուկներում ու բառերի վրայ	Եւ մարդիկ այդպէս՝
Աճօրեւների տեսնել	Հատ-հատ Անբընդում են

Նրանց յանբժակամ խոնարհութիւնը...  
 Իսկ Սանամ ասում է՝  
 Քլուխը բարը,  
 Այգպէս,  
 Հենց այգպէս էլ կարելի է սարելի.  
 Խոնար Եմ խոստերը,  
 Քաշումները.  
 Օրերը,  
 Ամէ՛ճ ինչ խոնար է,  
 Ուրեմն այգպէս,  
 Հենց այգպէս էլ, ախր, կարելի է ազրելի:  
 Հաստիք քաշումների քերտի սակ պահուած  
 Սարգստայումները մէկ-մէկ արթնացո՞մ,  
 Ընկաւ քաշումը,

Եւ վարդկանց շրթումները  
 Փակագծի պէս փակուեցին մէկ-մէկ՝  
 Մտաւած օրերի քերթիկների վրայ,  
 Իսկ Սանամ ասում է՝  
 Ոչինչ, որ մտաւ քաշումը,  
 Ոչինչ, կը բացուե՞մ  
 Ուրիշ շրթումների փակագծերը,  
 Եւ գլուխը բարը,  
 Այգպէս,  
 Հենց այգպէս էլ, ախր, կարելի է  
 ազրելի՝  
 Խոնար խոստերի,  
 Խոնար քաշումների  
 Եւ խոնար օրերի հարուածութեամբ:

*Ասոր նման դեռ կան ջանքի մը բաւական տանելի քերթումներ ալ —  
 «Հեռուում մշուշների միջով արթնանում են բառերը», «Թիթիսը գիտէր»,  
 «Հնձուտը», «Այնտեղ, ուր բարանում է լոյսը», «Տամը՝ պատերից», «Նրանք  
 ծնում են»: Նոյնպէս յաջողուած կրնար ըլլալ «Այրում պաները լուս տրոր-  
 ւում են», եթէ խորացուէր անցեալ-ժամանակ-գիտակցութիւն խորհրդաւոր  
 յարակցութիւնը: Ա՛հա այդ քերթումին յաջող մասը.*

Ազրած պաները քառերի տնտով փորագրում են  
 Քափուած տերուների դեպի գերեզմանում,  
 Եւ յարդկանց շրթումների վրայ  
 Հնչումների տնտով  
 Պահպանում են այնու յիշագրութիւնը:  
 Ազրած պաները լուս օրում են  
 Ժամանակի գալիք մտնողների վրայ  
 Տարածութեամբ գալիք մտնումներում  
 Եւ օրում են ժամանակը,  
 Եւ տարածութիւնը օրում են:  
 Եւ ժամանակի գալիք մտնողները  
 Տարածութեամբ գալիք մտնումների միջով

Իրենց հետ ասում են  
 Ազրած պաների օրորումները,  
 Եւ աշխարհը լցում է օրորումներով  
 Եւ լցում է  
 Քափուած տերուների  
 գերեզմաններով,  
 Որոնք  
 Մարդկանց շրթումների վրայ  
 Հնչումների տնտով  
 Պահպանում են յիշագրութիւնը:

*Մեղմ, ձօնուն սու քերթումածը, որ էր շուքէն կը վախնայ կարծէք,  
 Ի՞նչ պէտք ունի աժան, դիւրին կրկնութիւններու միջոցով տպաւորութիւն  
 ստեղծելու, երբ բանաստեղծական առոյշ երեւակայութեամբ մը պաշտպան-  
 ւած է:*

*Մարտիրոսեանի երկրորդ Հատորը՝ «Թռչուններ», առաջինին բոլոր  
 հիմնական թեմաները բերեղացումի կը հասցնէ ու աւելի կորովի ու հասուն  
 տաղանդով գրուած է: Ինչքան տարբերութիւն Ծ տարուան ընթացքին...:  
 Նախ՝ ազգային թեման արտակարգ խորք մը ստացած է: «ԱՍԻ-1975» քեր-  
 թումը յաջողուածք մըն է, ուր շատ վտտահ, ինքնատիպ ձեւերով մը հայու-  
 թեան վերացական, բարոյական նշանակութիւնը, անոր յաւիտենական  
 դադանիքը կ'առնուի անցեալէն ու կը նետուի դէպի հեռաւոր ապագան, ա-  
 ռանց որեւէ քարոզի ու ճառի: Ահաւասիկ քերթումածը էր ամբողջութեամբ:*

Փնտարի քն անցնալը  
 Ի քն դէմքը ներկայ

մեռած ֆաղափի աւերակներում,  
 ուր մրցիւնները ուսերին կրում են  
 աւերակների ողբերգութիւնը,  
 եւ մի հարրեցող  
 փլատակիւն աճած ծաղիկը ֆաղում է՝  
 մեռած իր սիրածին տանելու համար:  
 Թխվարիքի դանդաղ ֆո անցեալի միջով  
 դէպի սկիզբը յայտնութեամ,  
 դէպի ֆաղափը մեռած,  
 որովհետեւ սեա  
 երեւում է մի ձեռք անիրակամ,  
 որ քարծրացնում է ծովը փլատակների  
 եւ օրօրում է մրցիւնի կրած ողբերգութիւնը  
 եւ ծաղիկները օրօրում է՝  
 երազներից հեռու հորիզոնում:  
 Փնտռիր ֆո անցեալը  
 եւ ֆո դէմքը ներկայ  
 ողբերգութեամ եւ ծաղկի,  
 ծաղկի եւ ողբերգութեամ սահմանագծում,  
 որտեղ նախում են ներմակ ազանիներ,  
 եւ նրանց թեւերի տակ արտացոլուել է  
 մեռած ֆաղափի պատկերը նախկին:  
 Գնա՛, ուրեմն, դէպի ֆո անցեալը  
 մեռած ֆաղափի աւերակներով,  
 եւ կը գտնես կանգուն զանգակատունը,  
 զանգակատունը,  
 ուր բնակում են ազանիները:  
 Բաց թող ազանիները ֆո ձեռքերով  
 եւ հնչեցրու զօղանքը զանգակատան,  
 որպէս մտնեցումը ֆո անցեալին,  
 որից կառուցում ես ֆո դէմքը ներկայ  
 մեռած ֆաղափի նախկին պատկերով,  
 որ թեւերի տակ պահել են ներմակ  
 ազանիները:

*Երկրորդ թեման՝ առանձնութեան, օտարութեան թեման է, վաւերա-  
 կան իրականութեան մը ներկայութեան արթննալու կարելիութիւնը, ֆա-  
 ժանակի, տարածութեան ու մահուան հարցադրումը, փնտրողները, անձկու-  
 թիւնը: Ճակատագրի ձեռքը ինկած մարդու վիճակը: Ու հոս ալ Մարտիրոս-  
 եան զարմանալի հատկութեան մը հասեր է, դառնալով նաեւ շատ աւելի  
 մօտ իր անձնական աղբրակին՝ շնորհիւ մտերիմ կեանքի ամէնօրեայ բառե-  
 րուն ու պատկերներուն, եւ աւելի մարդկային՝ բառին ընդհանուր իմաստով:  
 «Անէն ինչ կատարում է ինչպէս հեփիաթում» կը խօսի բանաստեղծը եւ  
 «հեփիաթները ձանձրալի զսպառնալիկներ են», կը շարունակէ, յանգելու հա-  
 մար:*

Այս երկրագունտը զսպառնալիկ է ձանձրալի,  
 որ ֆո մէջ ամէն օր ֆանդակում է  
 իր դէմքը անձանօք,  
 որ ֆնելուց պատ

Ին հազուստի եևտ դանդաղ հանում ես :

*Հսկոյ ճիգ կը թափէ բանաստեղծը՝ պեղելու դարանակալ ու համա-  
տարած գաղտնիքը, զոր «ժամանակ ու տարածութիւն» կը կոչենք.*

Անձրեւի խոնաւ եզրագծերով  
դէպի յաւիտեանութիւն յղում է վայրկեանը.  
անձրեւալններում հաւաքում են կաթիլները,  
եւ մարդկանց մաշկի տակ՝  
հեռացոյ օրերի փարաւանը :

*Ամէն էջի, ամէն բանաստեղծութեան՝ նոյն յամառ, ապարդիւն փոր-  
ձը՝ բռնելու բառերու եւ պատկերներու յանկարծական, անակնկալ հանդի-  
պումին մէջ թաքուն իմաստներ, ճշմարտութեան փշրանքներ, զորս քերա-  
կանութեան ու բառարաններու աստուածները եւ իրականութեան կախարդ-  
ները կը ծածկեն մեզմէ : Այս գաղտնագիր իրականութեան մասին է, որ կը  
խօսի իր լաւագոյն քերթուածներէն մէկը.*

Քո շուրթերիմ գծուած ճաւրաններում  
բառերի համար դեռ յարստաբերուած  
պտեռուած են դատարկ տարածութիւններ,  
որոնց սառը, մթիմ լաբիւրինթոսում  
քրքիր շշուկը յարութեան,  
որոնիւ ենչիւմը՝  
Ին մարմնի խոնաւ պատերի մէջ  
կաթիլի նման արձագանգուող :

*Այսպէս կը շարունակուի ու կենդանի, ճոխ ու արդիական քերթուած  
մը կ'ըլլար, եթէ իր կէսին վերածուէր, վանելով բոլոր կրկնութիւնները,  
թոյլ տողերը, ոճի խաղին տրուած տեղը՝ յանգելու համար մարդուն ու իր  
բառերու ողբերգութեան, առանձնութեան մէջ աքտորուած, մէկը միւսին  
մարմնին մէջ բնակելով՝ ահաւոր մակարոյժներու նման : Այն գաղտնիքը,  
զոր կը ջանանք նկարագրել, առ առաւել՝ առանց կարենալ բացատրելու կամ  
մեկնաբանելու առանց բառի, անշուշտ, լոկ բանաստեղծութեան միջոցնե-  
րով : Նոյնքան կարեւոր քերթուած է «Արթնացրու արեգակը Ին հոգու մէջ  
ննջող», ուր կ'ուրուսողծուի աշխարհի անիրականութեան դաղափարը, ինչ-  
պէս եւ իւրաքանչիւր անձի ճակատագիրը՝ ըլլալու առաջին ու վերջին մար-  
դը աշխարհի :*

*Մարտիրոսեանի արուեստը այնքան ինքնատիւ է, որքան իր սիրուն-  
դէն ունէ մէկունը : Իր թռչուններու ճախրը, իր յուսահատ ճիգը արթնալու  
յաւերժական քունի վճիռէն ու մրափող պաղ աշխարհէն՝ բուն աշխարհի մը  
վայելումին, իր անգուլ փորձը ազատուելու առանձնութեան թակարդէն —  
այս թեմաները կրնան 25 տարուան պատմութիւն ունենալ, բայց Մարտի-  
րոսեանի անկեղծութիւնը կը փրկէ գանոնք կրկնուած դաղափարներու ձանձ-  
րոյթէն : Սակայն իրեն կը պակսի մտածումի երկարաշունչ թափը՝ այդպիսի  
ծանր թեմաներ նուաճելու համար, իխտա տիսիփիներ իր տողերու կատուցու-  
մին մէջ, ու նաեւ այլազանութիւնը երեւակայութեան եւ պատկերներու ձե-  
ւափոխութեան մէջ :*

ՎԱՀԷ ԾԵԱԿԱՆ

Մ. ԼՈՎԻՆԵՍԿՕ

### ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՅԼԱԽՈՂՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱՑՈՒՄ

ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԸՌԻՄԱՆԻՋՄԸ

Վերադառնալով Չինաստանից, ամենայն հավանականությամբ այն բանի խիստ տպաւորութեան տակ, թէ ինչպէս է Մանն դասիկ իր մտաւորականութիւնը, Չաուչեակուն, որը դրանից առաջ իրեն թոյլ էր տալիս իւրայինը ուշադրութեան արժանացնելու աւելորդ պերճանքը, յանկարծ որոշեց այլևս հաշուի չնստել նրա հետ, քանի որ Մանն կարողացաւ դառնել: Իր «Նշակութային միջոցները» խառնուրդ նա նրանց երեսին թափեց այն ամբողջ արհամարհանքը, որին միայն ընդունակ էր: Գրականութիւնն ու արուեստը պէտք է զբաղուեն միայն զանգուածների զատիարակութեամբ, եւ զբան հասնելու համար իբրև աղբիւր վերցնենք հենց զանգուածներին: Այսուհետեւ սիրողը առաջնութիւն ունի մասնագէտի դիմաց, իսկ վերջինի խնդիրը յանդուժ է նրան, որ աղբային անցեալում որոնի Առաջնորդի հաւանական կամ անհասանալի նախնիներ: Դա ոչ թէ վերաստույնացում, այլ ուղղակի պետական խելացնորութիւն է:

Գրողներն ու արուեստագէտները, որոնք հիմնականում ալլերգիալով են տառապում կուսակցական փաստաթղթերի հանդէպ եւ դրանք կարդում են թերեւս միայն մտաւոր անողջագոհութեան սիրոյն, այնուամենայնիւ, անմիջապէս ըզրուանակուող վտանգը: Բացի այդ, եթէ բուն ընտրում բաւականաչափ պարզութիւն չկար, սպա այն վերաւորական եղանակը, որով սկսեցին կենսագործել

այն, բացեց նրանց աչքերը: Մշակույթով չփայլող ակտիւիստը բեմ հրաւիրուելով առաջին անգամութիւններն է գործում, — ընդհանուր խուճապի մէջ անարգանքի սիւնին են դամուտ այն զրգերը, որոնց հետ ինչ-որ բարդութիւններ են ծագում, ռադիոյի եւ հեռուստատեսութեան ծրագրեր են ջնջում, չեղեալ են համարում արտասահմանեան հիւրախաղերը, Բախի կանտատները չջանում են ցուցադրելիքից, հրատարակչութիւնները, ցուցահանդէսային, համերգային, թատերական սրահները սպառնում են ծաղրունկար դառնալ:

Առաջին անգամ գրողները միասնական ճակատ են կազմում: Գրեթէ բոլորը՝ նուեւ տարբեր ափերից եկածները, դառնալով ուղղութիւնների ներկայացուցիչները: Բնական է, որ Փարիզում գտնուող Դ. Յեյդենազը իր խիստ զայրոյթն է արտայայտում: Բայց այդ ժամանակ նոյնպէս Փարիզում գտնուող Նիկոլայ Բրեքանը դիմում է ուղարկում Գրողների Միութիւն՝ «Գրական Ռուսներ»-ից դուրս գալու մասին, եւ դա այն ամէնի նուազագոյնն է, ինչ որ տեղի է ունենում: Ոչ ոքի չի զարմացնում, որ Ա. Ն. Բակոնսկին հակահարուած է տալիս Չաուչեակուն՝ նրա եւ գրողների ամպրոպային բանավէճի ժամանակ: Բայց այն իրողութիւնը, որ նոյն բանն անում են եւ ստալինականութեան ժամանակ առաջին դժի ղէմքեր եղած Խուզէն ֆեբրիանուն կամ Դան Դեյլիուն, արդէն մտածել է տալիս: Թեղաների հանդէպ ընդդիմա-





չո՞ւ է յոխորտում իր քաղութեամբ, մենք Ռուսաստանում հօ չե՞նք, որպէսզի հե-րոսութիւն խաղանք), — եւ դորձը ար-ւեց: Դա համազօր էր մահափճով այն ա-մէկի հանդէպ, ինչ որ կուտակուել էր մշակութի կողմից մի քանի տարում: Քանզի այսուհետեւ մեքենան դորձի է գցուած եւ ոչինչ չի կարող այն կանգնե-ցրնել:

Աղէտը դիպաւ ոչ միայն գրականու-թեանը, ՅՕական թուականներին այնպե-սի երգահաններ, ինչպիսիք էին Ստեփան Նիկոլայեան, Աւերէլ Ստրոն, Միքիալ Մարբէն, Անասու Վիերուս, Կոստին Միլերսոն, Միխայ Միտրա-Սեյարիա-նուն, կարող էին — եւ այդ մասին խօ-սում էին արեւմտեան քննադատները Ռուսում, Դարձուպտում եւ այլ վայ-րերում — ստեղծել ժամանակակից երա-ժշտութեան բուսիական դպրոց, որը ոչնչով չէր դիմէ 1956ի լեհական պայթ-մանը: Բայց այն հնարաւորութիւնները, որոնք թոյլ տային նրանց յայտնի լինել — պարտիտուրներ, ձայնակաւառակներ, ռադիո-վերահաղորդումներ, արտասա-մանեան փառասունների մասնակցութիւն, — տրամադրուեցին շատ ժլատորէն, իսկ յետոյ էլ բոլորովին փակուեցին: Այլեւս չկայ ուսմիական դպրոց, այլ կան պար-զապէս մի քանի երգահաններ, ոմանք վը-սարանդի (Կոստին Միերանուն, Միխայ Միտրա-Սեյարիանուն, Պորտաիու Ռա-զուլեակուն՝ Փարիզում), միւսները՝ տա-նը փակուած: Այսուհետեւ քուտկան է, որ երաժշտադէտները փորձեն պաշտպա-նել այդ երգահանների երաժշտութիւնը կամ Հենց իրենց, որպէսզի որեւէ անցա-դիր խնդրելիս մերժու՞մ ստանան: Ռու-միական երաժշտադէտներից ամէնից հե-տաքրքրականը, որը մասնապիտացել է ժամանակակից երաժշտութեան դժուր, Ռադու Ստանը, չկարողացաւ Դարձը-տաւաւ գնալու համար անցադիր ստա-նալ, ուր հրաւիրուել էր:

Մի ուրիշ դպրոց եւս փաստորէն ո-չընչացուեց՝ ռեժիսորականը: Լուչիան Պիետրիէի, Դաիթ Հարիդի, Լիվիու Չիւ-լէիէի, Ռադու Պենչիւլեակուի, Անդրէյ

Սերբանուի շնորհիւ, ուսմիական բեմը ապացուցեց, որ կարող է մրցել արեւ-մրտեան ամենահամարձակ փորձերի հետ: Թեղիսներից յետոյ արուեստադէտի տա-ղունդը դարձաւ մի տեսակ նախածին մեղք. ոմանք «արտահանուեցին» (Լու-չիան Պիետրիէին), ուրիշները արտագաղ-թեցին (Անդրէյ Սերբանը եւ Ռադու Պեն-չիւլեակուն, առաջինը, որպէսզի Նիւ Եորքի Վա Մամա թատրոնում բեմա-դրի յունական ողբերգութիւնների մի ե-ռադրութիւն, իսկ երկրորդը՝ որպէսզի հրատարուի, յամենայնդէպս առայժմ, թատրոնում աշխատելուց):

Ինչ վերաբերում է շարժանկարին, ապա Թեղիսներից առաջ ստեղծուած միակ ժապաւէնը, կարող է գոյութեան իրաւունք ունենալ՝ Լուչիան Պիետրիէի «Վերակազմումը», որը նախ արգելուեց, յետոյ կարճ ժամանակով թոյլատրուեց 1969ին: Նա կարողացաւ Կանն ընկնել մի-այն մասնաւոր, եթէ չառնեք դադունի ճանապարհով: Թեղիսներից յետոյ հողա-ցին, որպէսզի այլեւս թոյլ չտրուեն այդ-պիսի զայրացուցիչ բացառութիւններ:

Նոյն խնդիրները ծառայան եւ նկա-րիշները ու քանդակագործների առջեւ, որոնք ստիպուեցին կա՛մ արտագաղթել, կա՛մ շարունակել աշխատանքը Ռումի-նիայում, խորատուզուելով կատարեալ միայնութեան մէջ:

Իշխանութիւնը վճռակամութեամբ ո-րոշել է դանդաղ, բայց հաստատ կերպով կենսագործել Յուլիսեան Թեղիսները, պաշտօնական ձեւ տալ սիրողականու-թեանը (ինքնագործունէութեան մշտա-կան համառութիւնական փառասունը իրձ-րում է բոլոր սիրողական նախաձեռնու-թիւնները, որոնց անխուսափելի նիւթն է կուսակցութեան ու Առաջնորդի պաշտա-մունքը), հրաժարուել տեսական հետա-զոտութիւններից (մաթեմատիկական ինտ-տիտուտը փակուեց, իսկ տեսարան մա-թեմատիկոսները իրրեւ հաշուապահներ ուղարկուեցին գործարաններ ու Հիմնադ-րութիւններ), արուեստից (1977ի երկրա-շարժից յետոյ, դա պատրուակ դարձնե-լով, պետութիւնը պարպեց — էակուա-

ցիայի ենթարկեց — բոլոր մասնաւոր հաւաքածուները, որոնք իրեն անցան ըստ կտակների, Բուխարեստի բոլոր մասնաւոր թանգարանները փակուեցին, արւեստի երկիրը տեղափոխուեցին Կենտրոնական թանգարանի ներքնաբերներ, իսկ այդպիսով ամառացած շէնքերը մերածուեցին ճաշարանների կամ արտասահմանեան դեսպանութիւններին վարձու արուող նստավայրերի), ոչնչացնել, որքան հընարաւոր է, անցեալի պուր-գործոցները (գարձեալ երկրաշարժի պատրուակով քանդուեց Բուխարեստի հնագոյն կեդրեցիներին մէկը՝ Բիսերիկա Իէնէին, որին յիտին ինայել էր տարբային աղէտը), խորացնել ու ընդլայնել գրաքննութիւնը, յայտարարելով նրա մերացման մասին՝ հայածնել ու պատժել որակի համար: Ահա եւ իշխանութեան այս ամէնը իրագործելու միտակցութեան դիմաց մասաւորակներն անգոր են, նրանք այլուս չեն կարող հակադրել նրա գործողութիւններին համարող, նրանք մեկուսացուած են թէ՛ արիւթեան եւ թէ՛ վախկոտութեան մէջ ու դատաւարուած միայն անհատական բողոքի: Այնուամենայնիւ, շարադրանքի յարձարութեան համար իմաստ ունի իրարից անջատել հակադրեցութիւնների երեք խմբեր:

**ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՆՂԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ**

Թէ՛ մէկը եւ թէ՛ միւրը հարուստ էր են: Բացառութիւնների համար ապահովուած են գրչակիցների արհամարհանքն ու իշխանութեան ողորմածութիւնը: Տիպական դէմքը Ազրիան Պատմեակուն է, որի հոեորութիւնը աւելի առաջ սկսուած էր մի քիչ անմատահ, բայց եւ այնպէս բողոքով: Նա կատարել է գլխապտոյտ վիրած ու դարձել Չաուշեակուի հիմնական ճայնակիցը, որին հուշակի է «Աստծուց բարձր արարիչ» եւ որի վրայ ձիթաիդի այնպիսի հեղեղ է թափել, որ բոլորովին անկարելի կամ, յամենայնդէպս, խիստ վճար է դարձրել որեւէ մրցակցութիւն՝ ստորաբարձութեան դժով: Հատուցումը եղաւ ողորմութիւնների անձրեւը, անհա-

տական առանձնատնից մինչեւ թերթի դեկամբրութիւնը, շահուած երաժշտական ընկերութիւնը, որտեղ պոստ-երաժշտութիւնը դրուել է ամենայնապակողական ազգայնականութեան ծառայութեան տակ, երիտասարդութեանը հրաւելու նպատակով:

**ԵՐԿԵՐԵԱՆՆԻՈՒԹԻՒՆ**

Շատ աւելի տարածուած լինելով՝ դա հանդիպում է նոյնքան յաճախ երիտասարդների մօտ, որոնք չեն կարողանում ճանապարհ բացել իրենց համար, աւանց անցնելու նշանախօսքերի փորձութեան միջով, որքան որ հենց գրաքննիչների մօտ: Երկերեսանիութիւնն անընդհատ օգտուում է երկու գրչիներից: Առաջինով դրուում է լրագրական յօդուած կամ ձառ այն նիւթի շուրջ եւ այն յեղուով, որոնք պահանջում են այսօր: Միւրը ծանայում է դեղարուեւտական մարտութեամբ բիւրեղային երկեր ստեղծելուն: Լրագրական յօդուածն իր հաճոյակուտութեամբ, ըստ այդ հաշիւների, կապանովի դեղադիտորէն անբասիր երկի հրապարակումը, քանի որ իշխանութիւնը կը գոհանայ կուսակցական ծիսակարգի պահպանումով: Սակայն գրչիները փետրաթափ են անում միմեանց. գաղափարախօսական լեզուի վարակին ոչինչ չի կարող խանդարել թափանցելու ճիւրեղային մաքուր երկ, եւ բանը վերջանում է նրանով, որ երկու կարճագրերն էլ անդանալիտէն չերտարարուում են միմեանց վրայ: Հենց այդ ձեւով աշխարհ եկաւ կեդ՝ ճաղաքական» եւ կեդ՝ ճաղաքական» մի մէկ, որի մէջ, կարծես թէ կամենայով մերկացնել ստալինականութեան ճիւղերը, հեղինակն օգտուում է գուտ կուսակցական առասպելաբանութիւնից: Կարժիւր բանակի եւ միայն նրա կողմից իշխանութեան պուր-գործուած կուսակցութեան փոխարէն՝ պաշտօնական Ֆանտաստիկական առաջարկում է ընդլայնական կոմունիստական կուսակցութեան վառ գործողութիւններ, որոնք գազաթնակէտի են հասնում ժողովրդա-

կան ապստամբութեամբ: Կիրառելով այդ պաշտօնական սխեման, Հեղինակն իրաւունք է ստացել այդ երեւակայական ծննդարանութիւնից ելած զրական ակաբխաբան հակադրել բացատրական, որը չափից աւելի շատ հուկիթներ է կոտրել իր յեղափոխական ձուածեղի համար, եւ քայլերով խօսելու ստալինեան «չեզման» «տիպիկ» մասին, այդ պահից ի վեր ուղղուած, քանի որ Չառչեակուի դալով յեղափոխութիւնն իր իսկական քաղաքացիութիւնն ստացաւ Ռուսիիայում: Գանդերեան զիւղացու հագուստ հագած այդ Ռախմետովի համար, այդ բարկանեան զի՛նչ անկոյ՛ի համար (ակնարկում է անցեալ դարի առաջ յեղափոխական գրող Ն. Գ. Չերնիշուկու քաղաքական վէպն իր հերոսով — Քարգմ.) բոլոր միջոցները լուսն են, երեմն էլ՝ ամէնից արդիականները: Վերջին մի քանի տարիներ ընթացքում որոշ իսկապէս օտարած վերաստաններ սկսել են կից իրենք արտադրել սովորել, որոնց մէջ նրանք ենթարկուած են ո՛չ միայն ճշմարտութիւնը, այլեւ՝ սեփական տաղանդը խեղդելու վտանգին:

ԸՆԴԻՎԻԴԱԿՐՈՒԹԻՒՆ  
ՆԻ ԴԻՄԱԿՐՈՒԹԻՒՆ

Ընդլիմադրութիւնը տարածուած է առնուազն նոյնքան, որքան որ երկերեւանիութիւնը: Դա կայանում է կրկնակի յեզուից օգտուելուց հրաժարուելու մէջ, նշանակում է՝ նաեւ բոլոր առանձնաշընորհներէց հրաժարուելու մէջ: Ռուսիայի միայն իրաւունքներ չկան, կան միայն առանձնաշընորհներ, որոնք տարածուած են՝ բնակարան շնորհներուց մինչեւ արտասահմանեան անցադիր տալը, որոնք աղղում են գրքերի տպագրական վրայ (հարիւր հազարաւոր օրինակներ կուսակցութեանը նուիրուածներ համար, մի քանի հարիւր՝ պահեստային հանդիսացողներէ), ապահովում են ստղիօ եւ հեռուստատեսութիւն ելնելու հնարաւորութիւն, գրքերի եւ յօդուածների հրատարակուելու բնականոն կշտոյթը, ձտեղ-

ծագործական տներում գտնուելը: Բայկաթի ենթարկել իշխանութիւնը, նշանակում է ենթարկուել բաւական համեստ, եթէ ոչ աղքատիկ զոյութեան, գրեթէ լրիւ անյայտութեան վտանգին: Այն երիտասարդների համար, որոնք կուսակցական ուղուց հրաժարուած են իրենց զրական տպագրչդի հենց սկզբում եւ որոնց ուղարկում են դաւառական խորշեր, վտանգը կարող է վերածուել նրանց ընդունակութիւնների կատարեալ զուարթման: Շատ հազուադէպ է պատահում, որ Միխայ Ռեզաչի եւ կամ էլ աւելի երիտասարդ Միքիլա Իրինեակուի մակարակի բանաստեղծները կարողանան հաստատուել, ինչպէս դա յաջողուեց նրանց, առանց որեւէ զիջում կատարելու: Նիկոլայ Իոնիլը, որի առաջին գիրքը դատապարտուեց իրրեւ աւելորդ «միտոկլիկան» ու թեղիների ժամանակ անարգանքի սիւնին զամուսնից, այդ ժամանակից ի վեր չի հրատարակուած: Ուստի՝ պէտք է հաշուի առնել այդ լուրջան եւ արտաքուստ կրակարկան ընդդիմադրութիւնը ամէն անգամ, երբ ձգտում է ծաղում ուսմիական մտաւորականներին դատապարտել ու բոլորին միասին մեղադրել, թէ նրանք հրաժարուած են, կամ չեն օգտագործում հնարաւորութիւնները, կազմելու մի տեսակ միասնութիւն, մտաւորականութիւն: Փանդի սրտի զարկերի ընդհատումները Ռուսիայում քաղութեան ընդհատումներ են:

Բացայայտ դիմադրութեան դէպքերը, հետեւապէս, բացառապէս հազուադէպ են: Իշխանութիւնը չի ուղղում ճշմարտութիւնների ծաւալում, քանզի շատ է հոգում արտասահմանում լուստաւորութիւն թողնելու համար (Չառչեակուի ժամանակն անց է կացում անվերջ ուղեւորութիւններով՝ մայրաքաղաքից մայրաքաղաք, փորձելով իր վարկը պահպանել թէ՛ արեւմտեան պետութիւնների դեկալարների եւ թէ՛ Արեւմուտքի շարքային մահկանացուների աչքում), ուստի եւ՝ նա պատժի նոր եղանակներ է իւրացրել: Նրանց համար, ում որ նա հաւանաւոր է համարում ուսմիական սահ-



ՊՈՒՆԷ ԳՈՍՍԷ

մաններից դուրս, բանաբ փոխարինում է արտասահմանյան անցազրով:

Լուչիան Պինտրիկին 1972ին Բուխարեանում բեմադրեց Գոգոլի «Ռեվիզորը», որի մէջ ծագրանկաբ տեսան տեղական կուսակցական բարբերի նկատմամբ եւ ներկայացումն անմիջապէս արգելուեց: Պինտրիկին ստացաւ արտասահմանյան անցազր, որը նրան թոյլ է տայի որեւէ տեղ շրջում գործադրել իր տաղանդը, որի հետ լափից աւելի շատ բարդութիւններ էին կապուած:

Եւս մի անցազր՝ Գ. Յեպենեագի յանդիմութիւնների համար: Երբ նա Փարիզում դարձաւ «Cahiers de l'Est» («Արիւնիքի տեսարկներ») հանգէսի գլխաւոր խմբադիր, 1975 թ. կառավարական հրամանագրով նրան զրկեցին քաղաքացիութիւնից: Նոյնպիսի անցազր ստրուեց Յեպենեագին մօտ կանդան, նրա գեղագիտական գիրքը բաժանող եւ իրեն նոյնպէս օնիվիտո համարող Վիրջիլ Տանասէին: (Յեպենեագի հարցազրոյցից յետոյ, որը հրատարակուեց Ֆրանսիական մամուլում՝ նրա տոմարի գիրքը Փարիզում սպուլելու, նրա վրայ ճնշում են

զործում, առաջարկելով արտասահմանյան անցազր, որից Յեպենեագը երկար ժամանակ հրաժարուեց էր, խոստանալով թոյլ տալ ընտանիքին Փարիզ գնալու, բացարձակապէս ամէն միջոցի դիմելով, միայն թէ՛ նրան ստիպեն հեռանալ):

Վերջապէս՝ Պաուլ Գոման ինքը: 1972ի Յունիսին նրան տուին արտասահմանյան անցազր եւ որոշ ժամանակ անց, նրա կնոջը թոյլ տուին միանալու ամուսնուն: Յանկարծ նրա մտքով անցնի յիերաղապանալու խմտտուն վաղափարը... Նա Ֆրանսիական ու գերմանական մամուլում յօդուածներ է գրում գրաքննութեան դէմ, հանդէս է գալիս Վլադիմիր Երուսաւմազի խորհրդայինով, նա խախտում է բոլոր արգելքները, բայց եւ այնպէս 1973ի Յունիսին վերադառնում է Ռուսիան՝ միեւնոյն պայթաբը երկրի ներսում մղելու համար: Այնտեղ արդէն կազմակերպուած է նրա դրական թաղումը: Մրտում է միայն նրանից խելի «Փրակլան Ռուսիցիայի խմբազրի պաշտօնը, սպասել, մինչեւ որ Արեւմուտքը նրան մոտանայ, իսկ նա ինքը խաղաղութի, աղաքտութիւնից ընկճուելով: Մանանանդ՝ Քանի դեռ գրչակիցների նախանձն ու ըզգուշութիւնը դատարկութիւն չեն ստեղծել նրա շուրջ: Այդ դատարկութիւնը աւելի է ընդլայնուեց, երբ Գոման, խախտելով վերջին քարուն, դրոճեց հենց Չաուչեսկուի վրայ՝ Յեպենեագին գրքուած եւ Վլադիմիր Երուսաւմազի հարցազրուած նամակում: Գրոճն այնքան ուժեղ եւ յարձակողական էր, որ օդում ծծուեց էր հոտում: Խնչ կարող էր նա անել՝ այդպիսի լիակատար մեկուսացման մէջ գտնուելով: Պատասխանը այն չէր, որն սպասում էին իշխանութիւնները: Նա մէն մենակ, իր կատարեալ միայնութիւնից, ստեղծեց անմիջական ալլախոհութիւնը:

Քանիդ ալլախոհին է անմիջական ալլախոհութեան ընտրող գիծը: Դա սկսեց մի գրող, դրան միացան տարբեր մասնագիտութիւնների տէր հայրենակիցներ (մեծ մասամբ՝ բանուարներ), բայց ո՛չ դրականագէտները: Նրա համար բնական էր ալլախոհութիւն սպասել նրանց կողմից:

Ապարդիւն : Այն ժամանակ նա որոշեց իր սեփական եւ միակ անունից նամակ ուղարկել «Պատէլ Կոնուտին եւ նրա ընկերներին», «Երարտիա-77»-ի Հետ իր համերաշխութիւնը յայտնելու համար : 1977 թ. Յունուարի 26ին թուագրուած եւ «Ազատ Եւրոպայ»-ի կողմից ֆետրուարի 9ին հաղորդուած նամակը սուսնակական այլախոհութեան ծննդեան վկայականն էր :

«Ես յայտնում եմ ձեր գործադրութեանը համերաշխ լինելու մասին, — դուրսում էր Պատու Գոման, — ձեր վիճակն ի՛մ վիճակն է, շխտալովակեան պետութիւնը ստատարապէս նոյնն է, ինչ որ ռուսիներէն անկախը : Մե՛նք ապրում ենք միեւնոյն լազնրում, միեւնոյն Բիաֆրայում (մայրաքաղաքը՝ Մոսկուա) : (...) Գու՛ք գըրաւուած էք ռուսների, մե՛նք՝ ռուսիներէնների կողմից, ինչ որ, վերջին հաշուով, աւելի ցուայի եւ աւելի տգոյտ է, քան օտարերկրեայ գրաւումը» :

Եւ՛ նամակի վերջում. «Ես ձեզ հե՛տ եմ՝ չեխներ, սլովակներ, հունգարներ, լեհեր, գերմանացիներ : Եւ ձեր համադէպ հոգեւոր մտայնութիւն են գգում ռուսիներէն շատ մտաւորականներ, նոյնիսկ եթէ նրանց անունները իմ անուան կողմէն չեն» :

Գոմանիւրով «նպատակի կատարելու անյուսութեան» մէջ (սա նրա սեփական արտայայտութիւնն է), Պատու Գոման ֆետրուարին որոշեց նամակ գրել անմիջապէս Պատու Գոմանին («Թագաւորական պարստ», որպէսզի միեւնոյն կծու հուժտում նրան եւս ստաջարկի իր համերաշխութիւնը յայտնել չեխներին, պաշտպանելով իրեն՝ Գոմային, քանի որ իր միւս համազգայացիները չեն համարձակուում դա անել :

«... Փանի որ գտնուեցին 30 հումագրներ, այլա ռուսիացիները, համեմատական կարգով, պէտք է 90 հոգով ստորագրեն : Ենթադրեմք՝ 50 : Կամ գուցէ՛ 10 : Բայց քրտե՞ր գտնել նրանց : Ես Ձեզ խոստովանում եմ. ռուսիացիները վախենում են Պետանվտանգութիւնից : Եւ ստացում է, թէ Թաւրիսիայում ընդամենը երկու հոգի չեն վախենում Պե-

տանվտանգութիւնից, — Ձերը գերազանցութիւնը եւ ես» :

Կը լինեն ոչ թէ 10 սուսնակներ : Ոչ էլ 50, ինչ որ աւելի լաւ է : Ոչ էլ 90, ինչ որ հրաշալի է : Այլ՝ 200, որոնք հազարների կը վերածուէին, եթէ Պատու Կուտին չորոշէր ձերականել Գոմային : Այն բանից յետոյ, երբ փորձեց բոլոր հնարանք եղանակները :

Սկզբում նրանք մից մարդ էին եւ բուրն էլ ուզում էին մեկնել եւ Գոմայի ու նրա կնոջ հետ ստորագրեցին «Երգարդի համաժողովի մասնակիցներին յղած բաց նամակի առաջարկը» (1977 թ. ֆետրուարի 8) : Նրանց թոյլատրեցին մեկնել : Բայց նրանց մեկնելուց յետոյ շարժումը ընդլայնուեց : Քանի դեռ Գոմայի Հեռախօսը գործում էր, նրան զանազանում էին երկրի բոլոր ծայրերից, դալիս նրա մօտ՝ ընդունելով կամ յաղթահարելով բոլոր իտղնդոսները : Թու՛ւմ էր, թէ ոչինչ ի վիճակի չէ կասեցնելու այդ հեղեղը, նոյնիսկ Մարտի 4ի երկրաշարժը, որը աւելի ուժեղացրեց այն : Ճիշդ է, յաճախ դալիս էին նամակն ստորագրելու, որպէսզի ստանան «Գոմայի անցագրեր», ինչպէս որ այն շուտով սկսեցին անուանել, քանզի կառավարութիւնը, «ստորագրողներին» ազատուելու համար, նրանց թոյլ էր տալիս հեռանալ, լիովին համոզուած, թէ նրանք ընդմիւս են հեռանում : Բայց դա բնաւ այդ շարժման նշանակութեան թերազնահատում չպէտք է յարուցի, քանզի մարդու Հելսինկեան համաձայնութիւններով վաւերացուած իրաւունքների շարքում մարդկանց ազատ տեղափոխութեան իրաւունքը վերջին տեղը չի բռնում : Գոման, միտքելով հեռանալ, ինչպէս որ նրան ստիպում էին՝ քրտորագրողներին՝ առաջին խմբի գոյանալուց անմիջապէս յետոյ, փորձում էր իր մերժումը քացատրել միւսների ցաւազարութեամբ :

«... Մեզ մօտ՝ սոցիալիստական Թաւրիսիայում, արտասահմանեան անցագիրը սեւեռում գաղափար է դարձել ազգային մակարդակով, երազ, կեանքի նպատակներից մէկը : Թաւրիսիայում

անցագիրը գնահատում է անչափ անլի քանակ, քան աշխատանքային լուս տեղը, ինքնաշարժ մեքենան կամ առանձնատունը»:

200 անունների մէջ (Գոմայի ձերբակալութիւնից առաջ, որովհետեւ միաները յետո՛յ յարեցին շարժմանը) միայն երկուսը կշիռ ունեն մտաւորական աշխարհում՝ զրաքննադատ Իոն Նեղոյցեակուն եւ Հոգեբան Իոն Վիանուն: Առաջինը Պատւ Գոմայի անունով զրուած ամպրոպային նամակում մերկացնում էր կեղծ հայրենասիրութիւնը, զրական լեզուի աղքատացումը, մամուլի խեղդումը, որը զարժուել է ռուսերի մերկայացում, արտեղ շատ եմ խօսում՝ ոչինչ չստելու համար», «մողկալիութեան աւտոմատութեան աւտոմատութեան սպառնալիքի ներքոյ, Իոն Նեղոյցեակուն վախճանով մեզայի եկաւ մի յօրուածում, որը տպուկ «Քրքակամ Ռուսիսիայի մէջ, Ապրիլի 14ին, որը վերլուծելու հարկ չկայ, քանի որ նրա վերնադիրը աւելի քան արտայայտիչ է՝ «Հայրենասիրութիւն»:

Ինչ վերաբերում է Իոն Վիանունին, ապա նա աւելի վաղ տաղանազ հնչեցրեց, «Ռուսիսիայի կեանք» պարբերականում մի յօդուած հրատարակելով՝ «զերհոգեբուութեան» յանցագործութիւնների մասին: Գալիլէից բերուած վկայականները ոչ ոքի չսթափեցրին, ո՛չ զրաքննիչներին, ոչ էլ ընթերցողներին: Նա եզրուպոսեան լեզուով խօսում էր Հոգեբուութաբաններում բանտարկելու իրողութիւնների մասին, մարդկանց համոզումները փոխել ստիպելու նպատակով, ինչ որ Ռուսիսիայում գործադրում է Յորհրդային Միութեան օրինակով: Իսայ փոխանակ զժողովներին փակելու յատուկ հիւանդանոցներում, առեւինական Պետանդոտանդութիւնը նրանց զրեթէ բոլորին խցկել է սովորական Հոգեբուութաբաններ: Չկամենալով Բուխարեստի ՌԵ Յ Հիւանդանոցում այդ կարգի բուժում կիր-

առելուն մասնակցել՝ Իոն Վիանուն շատ ամբիւնների ընթացքում կնոջ ու դասակներին հետ երկրից դուրս գալու թոյլտուութիւն էր խնդրել: Պատւ Գոմային յղած իր նամակում, ուղղակի շօշափելով զերհոգեբուութեան հարցը, նա զրում էր.

«Իմ ազն յայսեր է՛ք կապում մեր երկրի ապագայի հետ: Տարբերին հակառակ: Գու՛ք հաստատում է՛ք, թէ պատմական հանգամանքները մի անգամ կը ժողտան մեզ: Կամ թերեւ Ռուս պատկանում է՛ք այն բարձր իդէալիստների քրտին, որոնք մինչև վերջ, հակառակ ամէն ինչի եւ բոլորի, պայքարում են յանուանյուսալի գործի: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես յոգնել եմ: Յոգնել, որովհետեւ չափից անլի շատ բան եմ տեսել այստեղ՝ Ռուսիսիայում: Չափից անլի յանուան եմ ես տեսել գիտնականի տեսլ ընդունող բուք միջակութիւն, առեղծագործական քոնիչքը խեղդող կոպիտ ուժ, բացարձակ դոգմա դարձած եւ անսովորաբար ամէնէն ակնյայտ նշմարտութիւններին ազմտութեան դասեր տալող սուտ: (...) ես յոգնել եմ, ինչպէս որ բազմաբիւ շատ ուրիշ մարդիկ, եւ միայն դրա համար եմ հաշուում այս տարափիլի քայլի՝ արտագաղթի հետ»:

Իրականում, Իոն Վիանուն առաջինը չէ, որ ամենայն յատկութեամբ խօսք է բացել Ռուսիսիայի Հոգեբուութաբանների բանտարկութիւնների մասին: Պատւ Գոմայի մօտ եղան այդ «բժշկութեան» զուհերը իրենց պատմութիւններով, եւ նա առաջին անգամ այդ մասին խօսեց այն հարցազրոյցում որը հետախօսով ունեցաւ Վիրջիլ Տանսէի հետ (հրատարակուած Մարտի 13ին, «Նուվել լիտերերում»): Այն ժամանակ նա տասը, թէ Հոգեբուութաբանների բանտարկութիւնները կատարուած են 1967 թ. ՌԵ 12 հրամանագրի համաձայն եւ իրեն անձամբ յայտնի են Հոգեբուութիւնը շարաշահելու նման Յզէպեր: Եղել են զէպեր, երբ քայ նամակներ ստորագրած մարդկանց ձերբակալել են ուղղակի նրանց տան դրան մօտ ու Հոգեբուութաբան առաջնորդել: Բնորոշ

է բանուոր Վասիլէ Պարաշիւի դէպքը, որի նամակը Պաուլ Գոման հրապարակեց արտասահմանում: Վասիլէ Պարաշիւը վերադարձրել է իր կուսակցական տոմարը, չկամենալով այլևս կուսակցութեան մէջ մնալ, եւ դրա համար մի քանի անգամ հոգեբուժարան է ընկել:

Գոմայի շարժումը լայն արձագանգ գտաւ նրա համար, որ սկզբում նրան յաջողուեց արձագանգ գտնել Արեւմուտքում, իսկ այնտեղից էլ, Վկրատ Եւրոպայա ռադիոկայանի միջոցով, Թումինիայում: Իսկապէս, Պաուլ Գոման ո՛չ միայն հարցադրոյցներ ունեցաւ արտասահմանեան լրագրողներէ հետ եւ նոյնիսկ Փրանսիական, ամերիկեան ու կանադական հեռուստատեսութեամբ, այլև նրան յաջողուեց Արեւմուտք հաղորդել ընդդիմադիրներէ անուններն ու նամակները:

Այն ժամանակից ի վեր, երբ ակաբեկչութեան օգնութեամբ լուծարքուեց 50ական թուականների կատաղի դիմադրութիւնը, կուսակցութիւնը այլևս այլպիսի բան չէր տեսել: Գոմայի շարժումը նրան յանկարծակի բերեց եւ խուճապի մասնեց, ինչ որ արտայայտուեց ամենահակասական միջոցառումների դիպազի մէջ: Նախ գործը փորձում էին վճռել խաղաղ ու խորամանկութեամբ, սայլս էին արտասահմանեան անցադրեր ու արագօրէն արտասահման քուլտուրում: Պաուլ Գոմային իրեն, Նիկոլայէ Բրեքանի միջնորդութեամբ, հրաւիրեցին հանդիպելու մշակութի հարցերով դասուող ոմն բարձրաստիճան անձի հետ: Վերջինս նրան հրապարակելու առաջարկ արեց, թէ նրա կնոջ՝ շատ տարիների ընթացքում չհրապարակուած թարգմանութիւնները անմիջապէս կը տպուեն, նրա սեփական վէպերը կ'ընթերցուեն ձեռքով աչքով, մամուլում կը դադարի նրա անունը լուծութեան տալը: Գոմային նման առաջարկութիւն անել կարող էին միայն նրանք, ովքեր վատ էին ճանաչում նրան: Նրա համար ի՞նչ նշանակութիւն կարող էին ունենալ այս կամ այն անձնական օգուտները, երբ նա իբր ընդհանրապէս չէր տաղանդաւորում ազնուապետ էր միայն ուրիշ մարդ-

կանց, նրա՛նց մասին, ովքեր, օրինակ, ձերբակալուած էին տնից դուրս դալիս, Գանդի անցազրեր տրուելու եւ դրաւիչ խօսակցութիւններ ունենալու հետ միաժամանակ իրենց հերթին բոլորովին այլ միջոցներ էին ձեռք առնում: Հեռախօսը չէր գործում եւ միացում էր միայն նրա համար, որպէսզի Պետանվտանդութեան՝ զայրացած պատուաւոր քաղաքացիների անսքով ջողարկուած գործակալները կարողանան աղաղակել իրենց սպառնալիքներն ու կոպտութիւնները, համազղեստներով ու քաղաքացիական հաղուստով ստիկանների շղթան պահակութիւն էր անում տան զոնների մօտ: Ընչումենքը անեցին՝ ընդդիմադիրների թուի ամսանը զուգընթաց: Այժմ մարմիններում ծառայող նախկին բուցքամարտիկ մի քանի անգամ փորձեց ծեծել Գոմային, մամուլում արչաւ կազմակերպուեց նրա դէմ, նրան հեռացրին Գրողների Միութիւնից, նոյնիսկ այդ մասին չհաղորդելով գրողներին, բոլոր նրանք, ովքեր որեւէ նամակ էին ստորագրել, գրկուեցին աշխատանքից, նրանց ձերբակալեցին, ծեծեցին, յաճախ շարշարեցրելով:

Այն բարձրաստիճան անձը, որը հրապարակել խօսակցութիւններ էր վարում, հաղորդեց Գոմային. «Ընկեր Չառչուկուս յառուկ կրահանգ է տալի ոչ մի միջոց ձեռք չառնելի ձեր դէմ: Գա Փետրուարի 22ին էր: Ապրիլի 1ին «Ընկերը» հաւանարար փոխեց կարծիքը: Գոման ձերբակալուած է, ծեծուած՝ անձամբ ներքին գործերի նախարարի տեղակալ Նիկոլայէ Պիչիցայի ձեռքով, որը, իբրև նախաբան, սկսել է փունջփունջ մագեր պոկել նրա միջուրեց: Հետաքննութիւնը տարւում էր նրան ստիպելու նպատակով, որ խոստովանի, թէ զաւազրութիւն է սարքել «պետութեան անվտանգութեան դէմ», «այստնի Փաչիտներ»՝ Հայերի Բէօյի, Պիէր Էմանուէլի, Էօժէն Դոնեսկոյի, Միքայէլի մասնակցութեամբ: Արեւմուտքում Գոմայի ձերբակալութիւնը յայտնի դարձաւ միայն Ապրիլի 12ին: Գրանից յետոյ շուտով բողոքի ցոյցեր կազմակերպուեցին:



Փարիզում փողոցային շորս ցույցեր եղան Ապրիլի 21ին եւ 26ին ու Մայիսի 3ին եւ 9ին (զրանից երեքը՝ ուսմինական դեպիստանտան առջեւ)։ Գոմային ազատելու կողք ստորադրուեց Ֆրանսիայի սկանսուր շատ զործիչների կողմից։ Նա ընդունուեց Ֆրանսիական Պեն-կյուրի անդամ, իբրեւ նոր տղանդը ճանաչելու նշան եւ նրան բաժին ընկած փորձութիւնների ժամանակ համերաշխութեան նշան։ Իր բողոքը յայտնեց եւ ամերիկեան Պեն-կյուրը։ Չայրալի եւ ստղնապալի յօդուածներ երեւացին արեւմտեան դանազան թերթերում։ Բուխարեստում այդպիսի բան չէին սպասում եւ այնտեղ նորից խուճապ թագաւորեց։ Մայիսի 6ին Պաուլ Գոման ազատ արձակուեց՝ Ֆրիդիկական ծանր վիճակում, բողոքովին հիծուած, ու դրուեց ոստիկանութեան խիստ ու մշտական հսկողութեան տակ, ինչ որ նրա համար ապուտութիւնը մի նոր բանասխուց դարձրեց, աւելի լայն, բայց նոյնքան մեկուսացուած։ Առանց ձեռագրերի, առանց յուշատետրի (ամէն ինչ թանագրաւուած էր), առանց հեռախօսի, նոր փոքրիկ բընակարանում, որին ոչ ոք չի կարող մօտենալ (փողոցում մշտապէս դիտում են, ամէն մի անցորդի ծօտ ստուգում են փաստաթղթերը ու առաջարկում շարունակել ճանապարհը), նրան այլեւս ոչինչ չէր մնում անել, զան հեռանալ Ռուսիանիայից։ Դա էլ նա արեց 1977ի Նոյեմբերին, Փարիզում հիմնաւորուելու, այնտեղ իր հայրենակիցների արձագանգը դառնալու համար։

Գոմայի շարժումը այլեւս գոյութիւն չուէր։ Բայց այլատեսութիւնը, իբրեւ այդպիսին, շարունակում է գոյութիւն ունենալ, զանգի փոխուել է ճամարտութեան մէջ մի անգամ թաթախուած ընդհանուր Հոգեբանութիւնը։ Ռուսիացիները խմբերով կամ անհատաբար արտասահման, հիմնականում «Աղատ Եւրոպա» ռազիոկայան են ուղարկում իրենց զանգատներն ու բողոքները, իրենց անուններով ստորագրուած եւ հասցէներին ու հեռախօսի համարների նշումով։ Թուում է,

թէ նրանք իրենց դուռն են Մոսկուայում, Լենինպոլսում, Վարշաւայում, Պրագայում։ Երբ ժիու Հովտում դորձադուլ անող 35 հազար հանքադործներից 800ը յայտարարում են Գոմայի յանուն մարդու իրաւունքների շարժանը միանալու մասին, երբ 1978 թ. ամառայ սկզբում ստեղծուեց է կրօնական ապստոթիւնների պաշտպանութեան կոմիտէ, այն բանից յետոյ, երբ բապտիստների առաջին բողոքի նախաձեռնողները ենթարկուեցին շարժարանների ու ծեծի, երբ երիտասարդութիւնը հասաքում է խմբերով՝ կլբի թոյլտուութեան պահանջելու համար եւ ցույցով է սպառնում Բուխարեստի փողոցներում, երբ երիտասարդ զբոյժիկները Մոնչու-Սուդիակին 1978ի Մայիսի 15ին հացադուլ է սկսում՝ հոգեբուժարանից երիտասարդ փիլիսոփայ Սեղար Միտիտելուին ազատելու համար (չըջմուլիկ-քնազանցի կամ հակամտեր-խախտ-Դիոգենէսի նման մէկը, որը մեղքում է աշխատել, աշխատել, որպէս-դի ապրի այն կեանքով, որպիսին այնտեղ բոլորին վիճակում է ապրել), ուսմինական վարչաձեւը դիմաւորում է այն նոյն բողոքով, որը ծագել է ՍՍՀ Մում եւ, անկասկած, կարտով է յիշում, որ ինքը միակ վարչաձեւն էր, որը կարողացել էր խուսափել այդպիսի կացութիւնից մինչեւ 1977 թուականը։ Բայց հիմա կարտապի յուշերի ժամանակը չէ։ Աւելի շուտ՝ խուճապի եւ շփոթ յանկարծատեղծութիւնների ժամանակն է։

Եւ այսուհետեւ՝ ոչ միայն գրողներն են պահպանելու Ռուսիայի ինքնակայութիւնը։ Վաթսունական թուականներից սկսած՝ նրանք անկասկած ստեղծել են ամենահարուստ գրականութիւններից մէկը Արեւելքում։ Բայց նրանք վիժեքրել են ղեմադրական շարժումը։ Եւ եթէ ղեմադրութեան ոգին շարունակում է գոյութիւն ունենալ, ապա՝ նրանց շմաստակցելու պայժաններում, շնայած նրանց, նրանց կողքին։ Ո՞ր անսահման, հրէշային ծաղրանկարի մէջ պէտք է սրտնել դրա պատճանները։

Յ. Պ Ե Բ Պ Ե Ը Ե Ա Ն

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ՈՐՈ՞Ւ ԿԱՄԱՐ ԵՒ ԻՆՉՈՒ

«Թայմզի գրական յանդիմանում» իր Յունիս Նի համարին մէջ կ'արծարծէր զըրական թերթերու հարցը, որոշ թիւով խմբագիրներու եւ գրողներու կարծիքները հրատարակելով՝ յատկապէս ա՛յս առնչութեամբ: Ընդհէ՛, որ լուսարձակը գլխաւորաբար կը կեդրոնանար Անգլիոյ եւ Միացեալ Նահանգներու վրայ, սուկայն Ֆրանսայէն, Գերմանիայէն եւ Իտալիայէն կարգ մը դէմքեր եւս իրենց մասնակցութիւնը կը բերէին եւ տուեալ երկիրներու գրական մամուլին մասին կը զօռէր ընդհանուր պատկեր մը:

Այս հարցադրումը առիթ մը կ'ըլլար գրական մամուլին մասին խորհրդածելու եւ զուգահեռներ տեսնելու ընդհանուր կացութեան մէջ:

Ափիւռքեան մամուլի աստիճանական շիջումը ընդհանրապէս կը վերադրենք որոշ զաղութներու հիւժուժին (եւ ոչ անարդար կերպով), իսկ Լիբանանի պարագային՝ քաղաքացիական պատերազմին, մինչդեռ քիչ ետք պիտի տեսնենք թէ հարցը շատ աւելի խոր արմատներ ունի եւ ուղղակիօրէն կապուած է մեր օրերու մարդուն քաղաքացիական, ընկերային եւ կենցաղային հարցերուն:

Սփիւռքեան կացութիւնը եւ, մասնաւորաբար, վերջին երկու տասնամեակները նկատի ունենալով՝ կը տեսնենք, որ Թրանսայի մէջ զարթեցաւ «Անդալուսա»-ը: Հոս՝ երկար կիսնք չունեցաւ «Անիկա»-ը: Լիբանանեան քաղաքացիական պատերազմը եւ անոր յաջորդող կիսնքի խելագար ողութեան համեմատութիւնը պատճառ դարձաւ, որ զժուարութիւնները աւելի եւս շեշտուին: Դարձեցաւ

«Սփիւռք» շարաթաթերթը, զադրեցան եւ վերուհրատարակուեցան «Շիրակ»-ն ու «Նայիրի»-ն: Այս տուեալները քաջալերական բաներ չեն ըսեր գրական մամուլին մասին:

Հոս ուրիշ երեւոյթ մը եւս պէտք է ընդգծել: Մինչեւ 10-15 տարի առաջ, մեր օրաթերթերը շարաթօրեայ մնալուն էլ չէր կը յաակացնէին գրականութեան: Ներկայիս, այդ բաժինները գլխաւորաբար կը յատկացուին հրապարակութեան կամ քաղաքական յօդուածներու: Իսկ կարգ մը թերթեր կենդանի գրականութեան ներկայութիւնը ամբողջովին անյարմար կը նկատեն, ա՛յն առարկութեամբ, որ զուտ գրական հանդէսներ կան այս առնչութեամբ: Իսկ վերը տեսանք, թէ գրական մամուլը ի՞նչ պատկեր կը պարզէ... Ամէն պարագայի, ընդգծելին որոշ զգայնութիւններու հետ կապուած մթնոլորտի մը փոփոխութիւնն է:

Պէտք է ընդունել սակայն, որ այս կացութիւնը կը զուգահեռի մամուլի միջազգային տազնապին հետ: Օրինակ, Թոմսոն ընկերութիւնը իր ապագրական բաժինին հետ զժուարութիւններ ունենալով, անտեսական հաշիւներով ուղեցնոր արհեստագիտութիւնը ներմուծել համապատասխան բաժինին մէջ: Պատմութեան շարունակութիւնը ծանօթ է բոլորին. ապագրական բաժինը մերժեց անօրէնութեան առաջարկը, որուն իբրեւ հետեւանք, ամիսներ ամբողջ զադրեցան «Թայմզ»-ն ու «Թայմզի գրական յանդիմանում»-ը:

Սակայն նիթական եւ արհեստագի-

տական հարցերն ու դժուարութիւնները որքան ալ կարեւոր ըլլան, հիմնականը կը մնան թերթերուն բովանդակութիւնը եւ անոնց արծարծած առաջադրութիւնները:

**ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԸ**

Գրական թերթեր կամ շարաթաթերթեր կան, որոնք ամբողջ սերունդի մը մղումներուն, թոփոքներուն եւ ակնկալութիւններուն ազդեցութիւնը հանդիսացած են, միաժամանակ կազմելով նոր շարժումներու կամ հոսանքներու յղացալին ու քննադատական փնտրութիւններու մայրը: Անդրին մէջ ըլլայ թէ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի մէջ ըլլայ թէ Իտալիոյ, նման թերթերու պակասը օրէ օր զգալի կը գտնուի ու կը շեշտուի: Այլմէն կ'ըսենք, օրինակ, կը յայտնէ, թէ իր սերունդը երեսունական-քառասունական թուականներուն անհամբեր կը սպասէր միլիոնի Բաշարի Քարթիզան Ռիվիուսն, որուն հետ սկսած էր մրցել Ճոն Գրոու Բանտըմի Վեյնըմ Ռիվիուսն: Սակայն ինչպէս էր շեշտէ:

«Անոնցմէ իւրաքանչիւրը կազմած էր համակիրներու ուժեղ խումբ մը, քաղկացած՝ քանստանդմերի, քննադատներ, վիպագիրներ եւ ուսուցիչներ, այսինքն՝ մարզագետ, որոնք այն ապրումը ունէին, թէ քերթերուն իւրաքանչիւրին զինգումքն ազնու ունէր մշակութային մեծ պահու մը հետ, թէ՛ մեծ կարեւորութիւն կը տեսնուէր քաղաքական կամ արժէքներու ասեմանումն եւ վերասահմանումն աշխատանքներուն մէջ»:

Օրին նաեւ նորինման զուգահեռներ կը գտնուի Ֆրանսայի կապակցութեամբ: Ան չի տեսներ «Բըվի պլանշէ», «Լը Ռեւոլյուսիոն Սիւրբէլիսի» կամ «Լապլէ Բըվի» մարտնչութիւնը համագործակցող ներկայիս: Գլխաւորապէս, որ «Թէլ ֆէլ»-ը ատեն մը փորձեց նման շարժում մը հրահրել, սակայն կառուցողապաշտութենէն սկսած

եւ մինչեւ Մարտի մի կամ լազանիդի ներկայութիւնը իր էջերուն, ամէն նորարարութեան տեղ առաւ միտում մը մտնեց, քան ինքնաշարժ նկարագիր մը:

Շարքը քիչ մը եւս երկարելով՝ կը տեսնենք, որ ժառանգորդներ չունին նաեւ թ. Ս. Էլիոթի «Գրայքի»-նը եւ Գանրիլի «Էնթրիզմ»-ը:

Ինչպէս այս թիւին մէջ կարծիք յայտնած մտաւորականները կ'ընդգծեն, լաւ գրութիւններու մէկտեղումը կամ ծանօթ ստորագրութիւններու աշխատակցութիւնը չի բաւեր աշխուժ հետաքրքրութիւն առաջացնելու կամ մտածողութիւն ստեղծելու համար: Գծախտարար նման շարժումներ կը պակսին այսօր:

Այս կազմութեան գլխաւոր պատճառներէն մէկը, մշակութային ու գրական թերթերու կամ խմբաւորումներու կողմէն՝ կը նկատուի իմաստասիրական կամ մտածողական հիմնական հոսանքի կամ շարժումի մը քաղաքացիութիւնը, ինչպէս էր պարագան գոյապաշտ փիլիսոփայութեան՝ գոյապաշտ գրողներուն համար: Ասոր իրրեւ հետեւանք՝ Այլմէն կ'ըսենք, քան թէ իր պատճառի ա՛յն՝ որ այլեւս զուտապաշտ ոչ մէկ փաստ կայ, թէ այդ քերթերը խանցալուրտութեան կամ գայրաքի ուժեղ ազդեցութիւն կրնան առաջացնել: Գրական քերթերը ընդունում կամ ծաղրելու պատկերին մէկ մասնակց կը կազմեն:

Գծախտարար, ընկերային ու զազաքական գաղափարախօսութիւններ կու գան քողարկածել մտածողական կամ իմաստասիրական նոր ու հիմնական նեթաճողի մը պակասը, որուն պատճառաւ յաճախ կ'անտեսուին արուեստի արժեքափոքր: Գլխաւորապէս նման մտահոգութիւններ կ'արծարծեն Մասոյիս ա՛յն միջոց եւ Մայքըլ Ռոթշիլ, երբ կը պարզեն Իտալիոյ եւ Գերմանիոյ գրական թերթերուն կացութիւնը: Ըստ Ռոթշիլի, Ֆրանսական յեղափոխութենէն ի վեր գերմանական գրականութեան մէջ կայ ու կ'երկարի քաղաքականութեան եւ գրականութեան պայքարը: Օրինակ,



ցումներին Ալէն Բոսսի «ԼամարՅ Մակա-  
գին»-ը անցեալ տարի ստացած էր 24.000  
սթերլին:

Միշտ նոյն օրինակներուն վրայ կեդ-  
րոնանալով՝ «ԲՆ Ռիվիւ»-ն եւ «Սանտէյ  
Թիլիկրաֆ»-ն կ'իմանանք, թէ Անգլիոյ  
իշխանութիւնները թերթերու եւ թատե-  
րախումբերու զաղափարական կեցուածք-  
ներուն եւ վարքագիծերուն համաձայն կը  
ճշդեն յատկացումները: Այսինքն՝ մէկ  
կողմէ կայ մշակութային ձեռնարկներուն  
նիւթաօջախ օժանդակելու անհրաժեշտու-  
թիւնը, առանց որուն կը զարդին այդ  
հաստատութիւնները գոյութիւն ունենա-  
լէ, միւս կողմէ՝ նոյն այս օժանդակու-  
թիւնները անուղակիօրէն կը պայմանա-  
ւորուին քաղաքական - զաղափարական  
կեցուածքներով:

Այս կացութիւնը պատճառ կը դառ-  
նայ ուրիշ երեւոյթի մը առաջացման:  
Րէճմոն Ուիլիամզ (Ուէլլզէն) կը տեսնէ,  
որ ներկայ կացութեան իրրեւ հետեւանք  
թերթերուն մեծ մասը կը օտիպուին մաս  
կազմել դիրքեր ծանուցանելու (անդրա-  
դանալու — քարոզականօրէն արձա-  
դանդելու) առեւտուրին: Կամ ալ քա-  
ղաքական ու կէս-քաղաքական կապերը  
փնտրելու կարիքը կը զգան անոնք:

Պատկերը քիչ մը ամէն տեղ նոյնն է:  
Մասնաւորապէս Միւրթը կը յայտնէ, թէ զը-  
րական աւելի քան հարիւր թերթեր լոյս  
կը տեսնեն Բրազիլիոյ մէջ, սակայն անոնց  
տպաքանակը չ'անցնիր քանի մը հարիւր  
օրինակը: Անոնց հազիւ հինգը կամ վեցը  
կը տպագրուին հազար օրինակով...

Բազմաթիւն ազդերու մէջ հրատա-  
րակուող այս թերթերուն պատկերը պեր-  
ճախօս է գրական մամուլի նիւթական

ընդհանուր պատկերին սուղնութեամբ:

\*\*\*

Եզրակացնելու համար՝ պէտք է ամ-  
փոփել վերոյիշեալ տուեալները:

Նախ՝ որ զգալի է մթնոլորտի ու տը-  
րամագրութիւններու փոփոխութիւն մը:  
Արդի մարդը իր հետաքրքրութիւնները  
գլխաւորաբար սրած է սպառողական ժա-  
մանցներու ուղղութեամբ եւ ինքզինք  
նուազ մասնակից կը գոյս ստեղծագոր-  
ծական արուեստներու նկատմամբ:

Գրական թերթերը մշակութային  
ընդհանուր հարցերով շատ չեն զբաղի-  
ր այլեւս եւ ձգտումն ու յաւակնութիւնը  
չունին քաղաքակրթական հիմնական  
հարցերուն շուրջ իրենց խօսքը ըսելու:  
Որուն պատճառով, այս մարդը կը վե-  
րածուի ձեւով մը տուանձին մասնագի-  
տութեան:

Եւ. ապա, նոր տուեալներուն կամ  
պայմաններուն բերումով, գրական թեր-  
թերը տակու կարիքը կը զգան պետական  
ըջափելի աջակցութեան, առանց որուն  
կը դատապարտուին շիջումի: Սակայն  
վտանգը արդէն տեսնելի է — պետա-  
կան օժանդակութիւններն ու կէս-քաղա-  
քական կապերը (նոյն մտահոգութիւննե-  
րով հաստատուած) պատճառ կը դառնան  
որոշ վարքագիծերու պայմանաւորման, որ  
կը կաշկանդէ գրողին ու գրական մամու-  
լին ազատութիւնը:

Այս հոսանքին դէմ է, որ պէտք է  
պայքարին ստեղծագործ մարդն ու գրա-  
կան հանդէսները:

ԳԼՈՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐՆԱՆ

Ս. ՄԱՆՆՆԵԱՆ

### ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԸ ԵՒ ԻՐ ՎԼՊՒԱԿԱՆ ՄԱՆՈՒԹԱԿՆԸ



Բակունցի մասին ոչինչ չէի կարող գրել, որովհետեւ ծանօթ չէի եղել նրա հետ, չէի տեսել նրան, և նույնիսկ չէի կարդացել նրա գրուածքներից մի որեւէ կտոր: Իմ կեանքը ոլոր էր անցել ևս դէպքերն այնպէս էին դասաւորուել, որ չէի տեսել նրա գրուածքներից որեւէ մէկը: Մէկ ուրիշն ինձ հետ չէր խօսել նրա ևս նրա գրականութեան մասին, բացի Հանպուցեալ Վարդգէս Ահարոնեանից: Այդ նիւ Շորքում էր, երբ ևս հոգեկան ծանր վիճակ էի ապրում:

Վարդգէսը ճանաչում էր գրականութիւնը և հիացմունքով էր խօսում Բակունցի ստեղծագործութիւնների մասին: Նա նույնիսկ Բակունցից որոշ կտորներ էր արտասանում: Ես լսում էի և չէի լսում. և չեղաւ մի օր, որ նրան հարցունէի, թէ Բակունցին նա ո՞ւր է կարդացել: Վարդգէսը հարուստ գրադարան ունէր, և թիբեւս ունէր որով պատմուածքներ Բակունցից:

Անցեալ տարուան վերջերին, Պօղոս Մնայեանն ինձ գրել էր, որ մտադիր են «Բազիլն»ի մի համար ամբողջութեամբ յատկացնել արձակագիր Ակսել Բակունցին և նրա գրականութեանը: Ես հաստատանքի լինելով՝ Մնայեանը կարծում էր, որ կարող եմ մի որեւէ յուշ պատմել Բակունցի մասին կամ գրել նրա գրականութեան մասին:

Կարդալով Մնայեանի այդ երկու տողը, ես չփոթուեցի ևս կարկամեցի: Ես

Պօղոս Մնայեանի նամակից յետոյ անցան մի քանի ամիսներ, և ևս մի օր էլ ստացայ «Բազիլն»ի բացատրիկ համարը, ամբողջովին նուիրուած՝ Բակունցին:

Սկսեցի կարդալ: Նախ կարդացի «Բազիլն»ի մէջ հրատարակուած Բակունցի պատմուածքները և յետոյ անցայ այդ նոյն համարում հրատարակուած բազմամասին շաւրմաստիքութիւններին և այլ

զրուեցին ներքին: Պէտք է ստեմ, որ հրաշալի է «Բագին»ի այդ բացատրիկը: Այդ մի հանրադիտարան է Բակունցի մասին: Հրատարակուած է խնամքով եւ դուրսդրանքով:

\*\*\*

«Բագին»ում հրատարակուած Բակունցի պատմուածքներից եւ ամէնից շատ սիրեցի «Ալլաիական մանուշակ»ը, որը զրուած է քնարաթաթու լեզուով եւ պատկերաւոր:

Այդ պատմուածքում Բակունցը մի քանի անգամ խօսում է ալլաիական մանուշակի մասին. «Յօզունը կախաւ ոսփի պէս կարմիր, ծաղիկը ծիրանի գոյն»: Ըստ իս, Բակունցը մտադրութիւն չէ ունեցել նկարագրելու այդ ծաղիկը, համեմատելու համար այն հայ քարակ մէջքով եւ քարձրանաւակ կնոջ հետ, որը բարձր, սպիտակ ցակաս ուներ եւ մուգ մանիշակագոյն աչքեր»:

«Ալլաիական մանուշակ»ում գործում են կամ ներկայ են՝

Մի հնագէտ, որի զգլխում Բախուր իշխանն էր եւ մասնագրի մագաղաթը»:

Մի նկարիչ, որը նկարում էր աչքի բնիկով Վախի դէմք, տեսնէր գեղեցիկ մի անկիւն, մամապատ մի քար»:

Երբորդը հնագէտի եւ նկարիչի ձեռպանն էր, որի «աչքի սուրբ քարով լաւուշներ էին, պանիր ու մածուց»:

Պատմուածքում գործում է մի գիւղացի, որը մտայն էր, որպէս իրիկնապահին անտառում որսի գարս եկած սոված արջ»:

Պատմուածքի գործող գլխաւոր անձերից է մի գեղջկուհի, որի զգեցողքը խշտում էր եւ փեշերը իջնում էին միջեւ մերկ ներքանները»:

Պատմուածքում ներկայ է նաեւ գիւղացու ու գեղջկուհու փոքրիկ տղան, որը Երկու թիւրի մէջ սուսկ էր խորովում»:

Ներկայ են նաեւ հսկայական, հաւատարիմ շներ, որոնք զարձակուեցին ճիւղերի վրայ»:

Ներկայ են նաեւ մոխրի մէջ խաղա-

ցող կիսամերկ երեխաներ, այծեր, որոնք «գարմանքից վեր ու վար էին անում գրլուխները»:

Ներկայ են նաեւ «զուսուտը բզեզներ, որոնց մանուշակը հօճէ է բուսում, աշխարհը՝ ծիրանագոյն բաղաստան»:

Ներկայ է նաեւ Բասուտայ գետը, որը «իր նեղ հունի մէջ գալարում է, անում, ասես հագար գամիւններ կըծում են քարէ շղթաները»:

Դէպքը կատարում է կաքաւարդում եւ նրա ստորտում դտնուող մի վրանում:

\*\*\*

«Ալլաիական մանուշակ»ը Բակունցը գրել է Փլորեթ-Մօպասանեան առարկայական դպրոցի հետեւորութեամբ: Ըստ այդ դպրոցի, հեղինակը չի խառնում հենց իր ստեղծած գործող անձանց ներքին գործերին: Հեղինակը միշտ եւ միշտ չէզոք է: Նա զգացականութիւն չի բանեցրնում, նա ո՛չ ցաւում է, ո՛չ համակրում եւ ո՛չ էլ պարսաւում կամ ամբաստանում: Այդ դպրոցը գրական դժուար եւ կարող եմ սանկ դժուարագոյն զըզրոցն է, մանաւանդ մեր՝ հայերիս համար, որովհետեւ մենք զգացական ժողովուրդ ենք: Ինքը՝ Մօպասանը, մի քանի անգամ չի հետեւել հենց իր հաստատած գպրոցի սկզբունքներին եւ շեղուել է: Օրինակ, Փրանս-պրուսական պատերազմի (1870) դէպքերին նուիրուած իր պատմուածքներում: Սակայն Բակունցը, որոնք էր «Ալլաիական մանուշակ»ում, շարունակում է պահել իր գրական սառնասրտութիւնը:

Ակսել Բակունցը միայն առարկայական գրող չէ, այլ նաեւ՝ ազգային-միւլպապաշտական գրող: «Ալլաիական մանուշակ»ի նկարագրութիւններից երեւում է, թէ ինչպէս է նա կապուած իր հայրենի բնաշխարհին: Նա սիրում է ամէն ինչ, որ հայկական է: Միտում է հոգր, շուրջ, քարը, նոյնիսկ բզեզները:

«Ալլաիական մանուշակ»ը ցոյց է տալիս, որ նա մի առանձնակի գրող է, առանձնակի առաջնող, որի նմանը դժուար

Թէ գտնուի մի այլ գրականութեան մէջ: Ես կարգում էի «Ալլախիական մանուշակ»ը եւ զարմանում, թէ ինչքան խելացի է եղել այդ երիտասարդ նահատակը: Ինչքան իմացական է եղել նա եւ ինչքան նուրբ կերպով հասկացել գրական նութիւնը: Նրա «Ալլախիական մանուշակ»ը դժուար թէ մի այլ գրականութեան մէջ գտնուի: Զարմանալի է նրա գրական տեսիլիկան: Զարմանալի է նրա լեզուական խտութիւնը գրականութեան մէջ: Զարմանալի են նրա անմիջականութիւնը, նրա շեղումները, նրա լեզուական պարզութիւնը: Երիտասարդ նահատակը ոչ մի աւելորդ բառ չի գործածել, իսկ գործածած բառերն էլ իրենց տեղն ունեն, իրենց իմաստը: Անհնար է Բակունցին սեղծել, կրճատել, եւ եթէ արուեստագետ, ապա կը ջանդուի նրա ստեղծած անմահ գրականութիւնը:

Ես կարգում էի «Ալլախիական մանուշակ»ը եւ զարմանում, թէ ինչքան իմացալի երիտասարդը ձեռք բերել իր գրական հմտութիւնը, գրական մշակութիւնը: Ինչքան իմացալի, նա գրական կըրթութիւն չի ստացել: Գրելը դիւրին աշխատանք չէ, բայց գրել այնպէս՝ ինչպէս Բակունցին է գրել, էլ աւելի դժուարին է զարմանում գրական աշխատանքը: Թուում է, թէ «Ալլախիական մանուշակ»ը ինքն իրեն է գրուել, ինքն իրեն է ստեղծուել, ինչպէս որ ստեղծուում է մի գեղեցիկ երգ: Ո՛ր են Նորեկեան գրական մրցանակ ստացած այդ այլազգի գրողները: Դրանցից սեւէ մէկը կարող է մի այլ «Ալլախիական մանուշակ» գրել: Կասկածում եմ: Բակունցը ինքնածին է եղել, ինչպէս որ ինուում են մի խոշոր կտոր ոսկի կամ ադամանակ:



«Ալլախիական մանուշակ»ում Բակունց պատմում է իրական մի դէպք: Բայց ինքը Բակունցը չկայ: Այդ պատմութեան մէջ մի սեղ չի երևում Բակունցի դէմքը: Նա ոչ մի զգացականութիւն չի դրսևորում: Թուում է, որ նա նստած է

եղել մի բարձր ծառի գագաթին եւ միայն ու միայն լուսանկարել է «Ալլախիական մանուշակ»ի բովանդակութիւնը:



Վերջացնելով իրենց աշխատանքները Կաթաւարբողի տւերակներում, Հնադէտը, Նկարիչը եւ նրանց ձեռագրողները դառնում են: Կաթաւարբողը մի բլուրի վրայ է, իսկ բլուրի լանջին վրաններ կան: Զիսպանը դիմում է Հնեց առաջին վրանի տիրուհուն:

«— Մե՛նք սոված ենք, քայրիկ: Թէ մածուն ունես, տո՛ւր, եսմ էլ թէյ գըցիր: Ծախար ունե՛ք...»:

Այդ է եղել Հիւրերի եւ տանտիրուհու խօսակցութիւնը: Դեռ աւելի՛ն. տանտիրուհին երբ Հիւրերին տեսաւ՝ «զլնի շորը մի քիչ իջեցրեց աչքերի վրայ...»: Հիւրերը նստում են խորի վրայ, իսկ տանտիրուհին արտորանքով սկսում է թէյ պատրաստել, արտասուելով կծու ծիւց: Հիւրերը մտի պահածոներ են ունեցել, կերել են դրանց պարունակութիւնը, եւ մէկի մէջ մնացած մի քիչ մը սով միասին դատարկ տուփերը տուել են տան փոքրիկ տղային: Տղան էլ զուրս վազել է՝ իր ընկերներին ցոյց տալու փայլուն տուփը, «որ շտեմ նորութիւն էր այդ քարափնի վրայ»: Միտամանակ նկարիչը մի այլ կնոջ յիշելով, որը նոյնպէս տանտիրուհու պէս ունէր «մանիշակազայն աչքեր», նկարում է տանտիրուհուն եւ նկարը պահում է ծոցի գրպանում: Ահա բոլորը: Հիւրերը գնում են, այն ժամանակ, երբ ձորից բարձրանում է վրանի տէրը, տան «տղամարդը»:

«Տղամարդը» յոգնած է (մեծ բան) եւ նա պէտք է ցոյց տայ իր ուժը ընտանիքի թոյլ անդամներին: Վրանի առջեւ նա ոտքով խփում է անմեղ շանը: Ետևն էլ ընտանիքի թոյլ անդամներին է: Փոքրիկ տղան հօրը ցոյց է տալիս պահածոյի դատարկ տուփերը: Ամենագոր զեպարը ոտքով դէմ հրեց որդուն էլ, դատարկ տուփերն էլ... Երկու տուփերը ձեռքին,



տղան փաթաթուեց մօր փեշերին եւ սկը-  
սեց լալ»:

*Վերջում ազան հօրը պատմում է, որ  
մի քեռի ճմուռ պատկերը հանեց թերթի  
վրայ եւ դրեց ծոցը»:*

*Կատարում է դաժան մի բան: Բն-  
տանիքի մեծի, այն է՝ ամէնից ուժեղի  
սրտում խանդը փայտատակեց կայծակի  
պես: Մարդը գազազած արջի նման ու-  
տիւն արեց: Նրա մագառ ձեռքերը սեղ-  
մեցին ծանր մահակը, եւ մահակն անա-  
սելի թափով իջաւ կնոջ թիկունքին: Լա-  
հակի ջարդուած ծայրը թռաւ ծալքի վը-  
րայ: Կիմն ազդակ շիւնեց, այլ ցաւից  
զայարուեց: Նա ձեռքը թիկունքին տա-  
րաւ, ապա դուրս եկաւ վրանի դրսնը,  
անձայն հեկեկալու:*

«Տղան դատարկ տուփերը ձեռքին  
հետեւեց նրան եւ պահուեց մօր փեշի  
տակ...»:

*Ընտանիքի ամէնից ուժեղ անդամն  
իր դատ ու դատաստանը տեսնելուց յե-  
տոյ, առանց զղջումի, առանց խղճի խա-  
թի «փափախը դրեց գլխի տակ, մեկնուեց  
խփրի վրայ»:*

*Նա մեծ դործ էր կատարել: Նրան  
հանգստանալ էր պէտք: Դիւրին բան չէ  
ծիրանի փայտից կամ կեռասնեղջ կտըր-  
ւած հաստ մահակը կտորել անպաշտպան  
եւ քարակիրան» կնոջ ուտի վրայ: Էլ  
ինչ «տղամարդութիւն», որ չլարզէր:*

«Յետոյ Կախարծորդի գլխին լու-  
թիւն իջաւ: Օջախներում հանգաւ կրա-  
կը, եզաւ խաւար գիշեր: Գազանների ա-  
հից շները կուչ եկան վրանների ստաջ:  
Մշտաբը պահեց կամաշի վրայ:

«Խփրի վրայ մեկնուեց եւ կիմը՝  
բաղիֆի տակ ծածկելով տղային»:

«Կախարծորդի գլխից ամպը հսկայ  
խիտուցի պէս սողաց դէպի վրանները,  
խոնաւութիւն կաթեց քարերի, մամուռի  
վրայ եւ մակադած ոչխարների բրդի վը-  
րայ մտեց գիշերային խոնաւութիւնը:  
Ցօղ կաթեց արփիտան մանուշակի ծաղ-  
կաթերթերի վրայ...»:

\* \*

*Եւ աղբում եմ գրականութիւնից,  
աղբում եմ, տխրում եւ մոռանում:  
Բայց ստեղծագործութիւններ կան, որ  
չեմ կարողանում մոռանալ: Նրանց ազ-  
դեցութիւնը միւտ ինձ հետ է: Սրբնակ,  
Յ. Թումանյանի «Գիւմրը», Նարբոսի  
«Թէ ինչ պատահեց, երբ շաքարամոծից  
երկու կտոր շաքար պակեց» եւ ուրիշ  
գործեր: Այժմ Բակունցի «Ալպիական  
մանուշակ»ը: Քանի ամիս է, ինչ կար-  
դացել եմ այդ կարճ պատմութեանը, բայց  
մինչեւ հիմա էլ չեմ կարողանում մոռա-  
նալ նրան...*

Բակունց, Բակունց, Բակունց...

\* \*

*Շնորհակալ եմ Քալախինին, որ ինձ  
ծանօթացրեց մեր այդ անզուգական գը-  
րդի գրականութեան հետ:*

ՍՈՒՐԷՆ ՍԱՆՆԵԱՆ

### «ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌ», ԹԵ...

Ստուգարանական-քառակերտական հարցերը միշտ ալ ուշադրութեանը կեդրոնին գտնուած են ապրող, բարտեղ լեզուներու: Մեր կենսունակութեան փաստը տուած կ'ըլլանք, ընթացք տալով, առաջին հերթին, ստուգարանական միջնարկումի մը: Յամենայնդէպս, փորձիչ է բանաձեւը: Սկսի՞նք «պատկերասփիւռ»ի հարցով:

Մեր թերթերէն ոմանք, մեր հեղինակներէն նաեւ ոմանք, թիաժոյ, բայց նուիրականացած «ձայնասփիւռ» բառին գոյութիւնը բաւ կը նկատեն՝ գոյութեան եւ գործածութեան վիզա տալու համար զեր-թիաժոյ «պատկերասփիւռ»ին:

Նման նախաձեռնութիւն մեզի կը թուի անընդունելի: Ծիշդ է, որ աստիճաբար (որ, խորքին մէջ, պէտք էր շնորհ-թարգմանել) իմաստային տեսակէտէ շատ ալ «խօսուն» չէր, եւ այսօր ա'լ ուշ է ձայնասփոռմը փոխարինելու համար շողասփոռումով, եւ աստիճան՝ շողակով կամ շողընկալուչ: Բայց, երբ քիչ վիզիոնք պարագային՝ ստուգարանութիւն եւ իմաստային ներմացում աչքան հաշտ են իրարու՝ ինչո՞ւ անտեսել ստուգարանորէն միակ ճիշդ՝ հեռատեսիլը կամ հեռացոյցը, եւ վաղել անցեալին կատարուած սխալ հայացումի մը — ձայնասփիւռ — շուքին ետեւէն: Պարզ է, որ քիչ-արժատը հեռա- կը թարգմանութիւն (ատոր գիտակից եղած ենք հեռաձայնի, հեռախօսի պարագային. ինչո՞ւ չհետեւիլ յաջող ա'յս հայացումին...): Երկրորդ արժատին՝ տես, տեսիլ թարգմանութիւնն ալ անվիճելի է: Ուրե՞մն: Նմանաբանակտն պատահական արամարանութիւններով չէ՞ որ լեզու մը ինքզինք կը նորէ:

Զգայուն չե՞նք ստուգարանական-արամարանական արամարանութեան: Զմոռնանք այն ատեն արեւելահայ տարբերակը բառին: Ծիշդ է, որ հեռուստացոյցը, յաճախ գործածուած, այսպէս նոյնքան բարբարոս է, որքան... պատկերասփիւռը: Բայց չունի՞ անիկա առաւելութիւնը մօտ ըլլալու նախտարիպին՝ հեռատեսիլին, եւ հետեւաբար աւելի դիւրին չէ՞ սրբագրումը, հետապայ իր ուղղումը՝ անոր բնորդին, մտելին վրայ: Եւ նախաձեռնար չէ՞ մեզի՞՝ սիդղի՞ն մօտենալ հատարակաց այդ եզրին, ուր օր մը սահմանուած են հանդիպելու արեւելահայերէն եւ արեւմտահայերէն: Վերջին այս հարցին անդրադառնալով, «Բազմի» իր Մարտ 1980ի համարին մէջ կը մէջընթէ Վահրամ Փափազեան-Ռուբին Զարեան զրոյցի մը մէկ կտորը, ուր կողմնակի առաջարկ մը կը հաստատենք ի նպաստ հեռատեսիլի: Բայց «Բազմի» սիրտը գրաւողը, չենք դիտեր ինչո՞ւ, կը հանդիսանայ Ս. Կուրտիկեանի առաջարկած... պատկերասփիւռը, որ, անգամ մը եւս, ոչինչ կը պահէ բառի եւ յաջորդի միջպային ստուգարանութենէն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.— Կ'առաջարկուի մօտենալ պատկերասփիւռը, եւ գործածել հեռատեսիլ, ե'ւ ստուգարանորէն աւելի ճիշդ, ե'ւ հայ լեզուի միջութեան ուղիին՝ աւելի նպատակայարմար:

ՅՆՏ-ԳՐՈՒԹԻՒՆ.— Վերի պարբերութիւններուն մէջ, ընթերցողի ուշադրութեան կը յանձնուի գործածութիւնը բնորդ բառին, խորհրդահայ յաջող ստեղծագործութիւն մը՝ թարգմանող մտելի բառը աւելի ճշգրիտ իր մէկ առումին մէջ, քան ինչ որ կը թելադրեն այլ երանդ կրող տիպար կամ օրինակ բառերը. աւելի կուտ եւ հարուցատ, նաեւ, քան ա'լ անգործածական բնօրինակ բառը:

Թ. ԲԻՒՐԲԱՅԵԱՆ

### Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ս Փ Ի Ի Ռ . . .

Մեր աշխատակիցը, Յարութին Քիւրճեան, որ հայց լեզուն բառերուն ճշգրիտ գործածութեան հանդէպ ունի խիստ բծախնդրութիւն մը ու նաև լուստեղեակ է Փրանսերէնին, վերջերս սկսաւ ստորագրել լեզուական նշմարներ, որոնցմէ մէկուն մէջ քննարկած է նաև «Բազիլն»ի մէկ ակնարկը՝ ի մասին պատկերասփիւռին :

Այդ մասին մէկ-երկու խօսք ըսելէ առաջ, հարթենք սա նախադասութեան մէջ տեղ գտած թիւրիմացութիւնը .

«...Բայց «Բազիլն»ի սիրտը գրաւողը, չեմք գիտեր ինչո՞ւ, կը հանդիսանայ Ս . Կուրտիկեանի առաջարկած... պատկերասփիւռը, որ, անգամ մը եւս, սչինչ կը պահէ քառի եւ յղացքի միջազգային ստուգարանութեանն» :

Յայտնենք, որ Ստեփան Կուրտիկեան նման առաջարկ չէր ըրած : Յիշատակած էր միայն Կուրտիկեանի Հետեւեալ նախադասութիւնը, ուր հետևողապէս փոխարէն տեղ գտած էր պատկերասփիւռը .

«Կէս գիշերն արդէն վազուց է անցել : Արդէն բուն եմ մտել ոսպիոն աւ պատկերասփիւռը» :

Թիւիլիզիոնին հայաստանեան թարգմանութիւնը հաշուի առած ու հաշուի առած նաև անոր բարդ ու բարդածանց բարբարոսութիւններուն հանդէպ հայրենի կարգ մը մտաւորականներուն դժգոհութիւնը, «Բազիլն» ինք կ'առաջարկէր ընդհանրացնել պատկերասփիւռը, ձայնասփիւռին օրինակով :

Քիւրճեան «Թիւսոյ, բայց նուիրականացած» կը գտնէ ձայնասփիւռը, ու «դեր-թիւսոյ» պատկերասփիւռը :

Հիմնաւորումները կը գտնուին դիմացի էջին :

Մենք լեզուագիտական երևույթներու բոլորովին անձանթ չենք, բայց այդ մարդին մէջ վէճի բռնուելու համարձակութիւնը կը պահուի մեզի : Պիտի ըսենք միայն, որ թարգմանութեան ատեն ստուգարանութիւնը չի կրնար միակ եւ բացարձակ ղեկավարը ըլլալ, անոր կ'ընկերանայ երբեմն ուրիշ գործօն մը, որ լեզուական բնազդ կը կոչուի : Երբ առաջին լեզուն թարգմանուած բառին զայնպիսի բռնուած է, երկրորդ լեզուն տեղ տուած է անոր եւ այլևս շատ չէ մտածած ստուգարանութիւններու մասին : Այս հիմամբ կը բացատրուի նաև «Նուիրագործուած սխալներ» հասկացողութիւնը, զոր կարելի չէ անտես առնել, տրուած ըլլալով, որ ո՛չ մէկ լեզու կրնայ հարիւր տակտով թարգմանել ուրիշ լեզու մը, չի կրնար նաև մեր լեզուն, եւ ճիշդ ասոր համար է, որ քարգմանութեան փոխարէն հայացումը կը գործածենք յաճախ, կը պահանջենք, իրբև օրինակ կը յիշենք Աստուածաշունչը, զոր ո՛չ թէ թարգմանեցին մեր թարգմանիչները, այլ վերատեղ-ձեցին, հայացուցին :

Կր թուի, թէ Յ . Քիւրճեան, թիւիլիզիոնի պարագային, աւելի թարգմանութեան կը հաւատայ, քան հայացման : Բայց մեր տպաւորութեամբ եւրոպական այդ նոր առարկային հայացումը աւելի ամբողջական պատկերացում մը կու տայ, քան իր նախասիրութիւնը վայելող անոր թարգմանութիւնը, որուն տեսիլը շատ աւելի բարդ մաս է վերջին հաշուով, քան միւսին պատկերը :

Պատկերասփիւռը՝ ձայնասփիւռին օրինակով...



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ


ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

# ՈՒՆՏՈՆ

Խմբագիր  
Հրաչ Տանապեոեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Գին 35 1- ռսկի, արտասահման՝ 15 տւլար

 ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՎԱՀԷ ՍԽԵՄԱՆ ՏՊԱՐԱՆ  
digitised by A.R.A.R.@

ՀՈՅՍ ՏԵՍԱՆ

ՀՈՅՍ ՏԵՍԱՆ

ՅԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Եօթներորդ հատոր

Արուեստագէտ սերունդ

- 1.- Թորգոմ Պատրիարք Գաշակեան
- 2.- Յովհաննէս Յարութիւնեան (Թլխատինցի)
- 3.- Երուանդ Սրմաէշխանցեան (Երուսալմ)
- 4.- Ռուբէն Զարդարեան
- 5.- Սարէն Պարթեւեան
- 6.- Գեղամ Բարսեղեան

Ութներորդ հատոր

Արուեստագէտ սերունդ

- 1.- Տիրան Զրաքեան (Ինտրա)
- 2.- Ատոմ Եարեանեան (Սիւրմանքօ)
- 3.- Լեւոն Սեդրոսեան (Շանթ)
- 4.- Երուանդ Օտեան (Երոս)
- 5.- Տիրան Զեօկիւրեան

Գին՝ Սուրիա Լիբանան՝ 30 լ. ոսկի, արտասահման՝ 12 տոլար

Ստամբուլու համար դիմել՝

LIBRAIRIE DU CATHOLICISSAT ARMENIEN  
ANTELIAS, LIBAN

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Ա Հ Ա Ջ Ա Ն Գ  
(Բանաստեղծութիւններ)

Հասցէ՝---

V. OSHAGAN  
UNIVERSITY of PENNSYLVANIA  
History Department  
207 College Hall  
Philadelphia, Pa. 19104

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆ	27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

بَاكِينُ

مجلة شهرية ، أدبية وثقافية علمية  
المدير المسؤول  
السيد ارنين كارنيك قرانجيان

•

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄԱՍԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր  
ՊՕՂՈՍ ԱՆԱԳՆԱՆ

Խմբագրությունը անդամներ  
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՐՏԵՐՆԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN  
Tel. 296598